



ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

«ՄԱՅՐԵՆԻ 1» ԵՎ «ՄԱԹԵՄԱՏԻԿԱ 1»

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԵՐԻ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:
Բովանդակության համար պատասխանատվություն է կրում
Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնը, և պարտադիր չէ, որ այն
արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն
Նախաձեռնություն հանուն կրթական և սոցիալ-իրավական ներառման ՀԿ

Երևան 2021

Սվաջյան Ա.Հ., Միքայելյան Ա.Վ., Բարսեղյան Մ.Ս., Պետրոսյան Ս.Ս.,
Ուսումնական նյութերի հարմարեցումներ: «Մայրենի 1» և «Մաթեմատիկա 1»
աշխատանքային գիրք-տետրերի մեթոդական ուղեցույց ուսուցիչների համար,
Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Եր., 2021, 129 էջ

Մեթոդական ուղեցույցը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից որպես
ուսումնական նյութ:

Մեթոդական ուղեցույցը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի
անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հատուկ և
ներառական կրթության ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից:

Գրախոսներ՝

մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ազարյան Ռ.Ն.
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ազատյան Թ.Յու.

Հեղինակներ՝

Սվաջյան Ա.Հ., մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Միքայելյան Ա.Վ., մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Բարսեղյան Մ.Ս.
Պետրոսյան Ս.Ս.

Խմբագիր՝ Օհանյան Հ.Վ.

Համակարգչային ձևավորում՝ Ստեփանյան Ա.Ռ., Դավթյան Հ.Լ.

Սույն ուղեցույցի նպատակը հանրակրթական ուսումնական հաստատությունների
առաջին դասարանի «Մայրենի 1» և «Մաթեմատիկա 1» աշխատանքային գիրք-
տետրերի կիրառության գործընթացում ուսուցիչներին մեթոդական
աջակցության տրամադրումն է:

Բովանդակություն

Նախաբան.....	4
Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների արդյունավետ կրթության կազմակերպման ուսումնական նյութերի հարմարեցումներ	6
Մայրենի առարկայի առաջադրանքների մեթոդական մշակումներ	22
Մաթեմատիկա առարկայի առաջադրանքների մեթոդական մշակումներ ...	61
Օգտագործված գրականության ցանկ	126

Նախաբան

Ակնհայտ է, որ ուսուցիչները (որքան էլ հմուտ են ու փորձառու) դժվարություններ են ունենում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (այսուհետ՝ ԿԱՊԿ) ունեցող երեխաների հետ աշխատելիս: Ճիշտ է, նրանք փորձում են որոշ մեթոդական հնարներ ու միջոցներ կիրառել. դյուրացնել, պարզեցնել, երբեմն, պարզապես, պակասեցնել այս երեխաներին տրվող դասագրքում առկա առաջադրանքները, սակայն միշտ չէ, որ այդ աշխատանքը բերում է ցանկալի արդյունքի: Պատճառները շատ են ու բազմազան: Կարծում ենք՝ առանձնահատուկ մեթոդական հնարների կիրառման անհրաժեշտություն կա կրթության առանձնահատուկ պայմանների տարբեր կարիքներ ունեցող երեխաների դեպքում, սակայն, խնդիրն առավել է ընդգծվում մտավոր զարգացման դժվարություններ ունեցող երեխաների ուսուցման ընթացքում: Հատկապես խիստ կարևոր են ուսումնառության առաջին օրերը, երբ դրվում են այն հիմքերը, որոնք որոշիչ դեր պիտի կատարեն երեխայի ողջ դպրոցական ուսուցման և, ընդհանրապես՝ կյանքի համար:

Հանրակրթական դպրոցի առաջին դասարանի մայրենիի և մաթեմատիկայի աշխատանքային գիրք-տետրերի մշակման գործընթացում հաշվի են առնվել սովորողների գիտելիքների և կարողությունների ձևավորման ժամանակակից մոտեցումները, որոնց հիմքում ընկած է ուսուցման շտկող-զարգացնող ուղղվածության սկզբունքը: Ուսուցչի սույն մեթոդական ուղեցույցում ներկայացված թեմաները և ընդգրկված առաջադրանքների մեթոդական մշակումները խարսխվում են նշված սկզբունքի վրա:

Թեև երեխաները կարդալ չգիտեն, այնուամենայնիվ, առաջադրանքները ձևակերպված են տեքստային հարցադրումներով և տողատակերում մեկնաբանող հղումներով: Այդ խոսքն ուղղված է երեխաներին, սակայն նրանց է հասցվում ուսուցչի, ծնողի միջնորդությամբ: Դրան համապատասխան՝ ուսուցիչն առավել արդյունավետ կօգտագործի դասագիրքը, վեր կհանի դրանում առկա ուսուցման բոլոր հնարավոր միջոցները, կճշգրտի ուսումնասիրվող հասկացությունները:

Գիրք-տետրերը կազմված են այնպես, որ չսահմանափակվեն ուսուցչի ստեղծագործական մտահղացումներն ու երևակայությունը, միևնույն ժամանակ՝ հնարավորություն ընձեռելով արդյունավետ կիրառել տարիների ընթացքում ձեռք բերած փորձը, իր կողմից մշակած հնարներն ու միջոցները:

Նախապատրաստական շրջանն ուսումնառության այն կարևորագույն ժամանակահատվածն է, որի ընթացքում պետք է լուծվեն ոչ միայն կարդալու, գրելու, թվաբանական գործողություններ կատարելու նախնական կարողությունների ձևավորման հարցերը, այլև՝ բազմաթիվ կազմակերպչական, ուսումնական, դաստիարակչական և անձի ընդհանուր զարգացման կարևորագույն խնդիրներ:

Նշենք, որ գիրք-տետրերում ներկայացված ցանկացած առաջադրանք կարելի է կիրառել ստեղծագործաբար՝ սակայն հաշվի առնելով վերը նշված սկզբունքային մոտեցումները, սովորողների անհատական և սոցիալական կարիքները:

Հարգելի՛ ուսուցիչ, ճիշտ է, մեր առաջարկած մեթոդական երաշխավորությունները կարող են հարստացնել Ձեր գիտելիքներն ու մեթոդական զինանոցը, սակայն սերը, բարությունը, հանդուրժողականությունը և հավատը երեխաների ուժերի նկատմամբ ամենակարևոր բաղադրիչներն են ցանկացած դժվարություն հաղթահարելու համար:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների արդյունավետ կրթության կազմակերպման ուսումնական նյութերի հարմարեցումներ

Ներառական կրթություն իրականացնող դասարաններում ուսուցիչները հաճախ են բախվում դժվարությունների՝ ուսումնական ծրագիրը բոլոր երեխաների համար հավասարապես մատչելի դարձնելու գործընթացում: Կախված մտավոր, վարքային, հուզական, զգայական և ֆիզիկական զարգացման առանձնահատկություններից՝ երեխաները տարբեր կերպ են յուրացնում ուսումնական նյութը և ակադեմիական առաջընթաց գրանցելու համար կարող են տարբեր հարմարեցումների կարիք ունենալ, օրինակ՝ գրաֆիկական ուղեցույցների, հավելյալ պարապմունքների, աշխատանքն ավարտին հասցնելու համար՝ հավելյալ ժամանակի, ինչպես նաև մեծ տառաչափերով տեքստերի, աուդիո ձայնագրությունների և էլեկտրոնային նյութերի:

Ուսումնական ծրագրով նախատեսված աշխատանքները հաճախ դժվար է լինում իրականացնել առանց էական հարմարեցումների: Հարմարեցումների կարիք կարող է ծագել ինչպես ուսումնական ծրագրերի և նյութերի մասով, այնպես էլ՝ գիտելիքների ստուգման ձևերի և դասավանդման մեթոդների: Առանց հարմարեցումների՝ ինչպես սովորողը, այնպես էլ ուսուցիչը հաճախ կարող են կանգնել դժվարությունների առջև:

Առհասարակ, ցանկացած երեխայի ուսումնառությունը դասարանում հաջողությամբ կազմակերպելու գրավականներից մեկը առաջադրանքների և ուսումնական գործընթացների հարմարեցումներն ու փոփոխություններն են երեխաների կրթական կարիքներին համապատասխան: Սակայն միշտ չէ, որ

ակնհայտ է լինում, թե ո՞ր հարմարեցումները և փոփոխությունները կնպաստեն կոնկրետ աշակերտի ուսումնառության բարելավմանը, կամ ինչպես է պետք փոխել առաջադրանքը, դասի պլանը, գնահատման մեխանիզմը, ուսումնական միջավայրը: Երբեմն հարմարեցումներն ապահովելը կարող է շատ պարզ ու հեշտ լինել, օրինակ՝ աշակերտին առջևում կամ հետևում նստեցնելը, լուսամուտից հեռու տեղափոխելը, դասարանում աղմուկը նվազեցնելը, իսկ երբեմն հարմարեցումները կարող են ներառել նոր նյութի ներկայացման ձևի փոփոխություն՝ հաշվի առնելով աշակերտի սովորելու ունակությունը:

Ուսումնական նյութի և ուսումնական գործընթացի հարմարեցման վերաբերյալ տարբեր մոտեցումների և մեթոդների կիրառումը կօգնի ուսուցիչներին կրթական գործընթացը հասանելի դարձնել միևնույն դասարանում սովորող կրթական տարբեր կարիքներ ունեցող երեխաների համար, ինչը շահեկան կլինի նաև տվյալ դասարանում սովորող բոլոր աշակերտների համար և կնպաստի ներառական միջավայրի ձևավորմանը:

Գործնական խորհուրդներ ուսուցիչներին՝ տարրական դասարաններում սովորող կրթական տարբեր կարիքներ ունեցող երեխաների համար ուսումնական նյութի և կրթական գործընթացի հարմարեցման վերաբերյալ

Կրթական համակարգը բոլոր աշակերտների համար սահմանում է ընդհանուր ուսումնական ծրագիր, արդյունքում օգտվում են այն աշակերտները, որոնց ուսումնառության ոճը և գիտելիքների մակարդակը համապատասխանում են տվյալ ուսումնական պլանին: Հիմնականում, եթե ուսուցման մեթոդը համապատասխանում է աշակերտի գիտելիքների

յուրացման ոճին, ապա ուսումնառությունն ավելի բնական և դյուրին է լինում, արդյունքները բարելավվում են, և ուսումնառության համար անհրաժեշտ ժամանակը նվազում է:¹ Օրինակ, եթե աշակերտը ավելի շատ հիմնվում է տեսողական, քան լսողական զգայարանի գործունեության վրա, ապա, առանց օժանդակ զննական նյութերի, նրա համար շատ դժվար կլինի առաջընթաց գրանցել սահմանված ժամանակահատվածում: Արդյունքում ստացվում է այնպես, որ ուսումնական նյութերը և մեթոդները համապատասխանում են դասարանում սովորող միայն որոշակի թվով երեխաների կրթական կարիքներին:

Ընդհանրապես, բոլոր մարդիկ տարբեր կերպ են սովորում. ոմանք ավելի լավ են յուրացնում ստացված գիտելիքները տեսողական զգայարանի, մյուսները՝ լսողական կամ այլ զգայարանների միջոցով:² «Կրկնակի կողավորման» տեսությունն, օրինակ, պնդում է, որ տեղեկատվությունը մշակվում է երկու՝ իրարից անկախ ուղիներով, երբ ուղիներից մեկը մշակում է տեքստը կամ ձայնը, մյուսը մշակում է նկարները, պատկերները, գծապատկերները: Սփերիի Նոբելյան մրցանակի արժանացած «Ուղեղի աջ և ձախ կիսագնդերի մտածողության» մոդելը առաջ է քաշում այն տեսությունը, ըստ որի, աջ և ձախ կիսագնդերն իրականացնում են իրարից տարբեր գործառույթներ: Ուղեղի ձախ կիսագունդը պատասխանատու է խոսքի, տրամաբանության և վերլուծության, իսկ աջը՝ զգայական և ստեղծագործական ունակությունների զարգացման համար, ուստի, զննական

¹ Franzoni, A. L., & Assar, S. (2009). Student Learning Styles Adaptation Method Based on Teaching Strategies and Electronic Media. *Educational Technology & Society*, 12 (4), 15–29.

² Doi:<https://dera.ioe.ac.uk/6059/1/RR516.pdf> Teaching strategies and approaches for pupils with special educational needs: a scoping study

մեթոդների կիրառումը նպաստում է երկարատև հիշողության ձևավորմանը և մտապահման բարելավմանը: «Կրկնակի կողավորումը» համարվում է չափազանց արդյունավետ ուսուցման եղանակ, դրա պարզ օրինակ է տեղեկատվության՝ ձայնային և տեքստային տարբերակների ներկայացումը: Երկու կիսագնդերի միաժամանակյա գործունեությամբ իրականացված ուսումնառությունը առավել արդյունավետ է: Ռոսը և Դերվանը փաստում են, որ որքան շատ են համագործակցում ուղեղի երկու կիսագնդերը, այնքան մեծանում է վերջինիս՝ սովորելու և ստեղծագործելու ներուժը (1998, 2006): Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ չկա այնպիսի մեթոդ, որն արդյունավետ լինի բոլոր երեխաների համար, ինչպես չկա այնպիսի կոշիկ, որը կկարողանան հագնել բոլոր տարիքի երեխաները: Օրինակ՝ խմբային բարձրաձայն ընթերցանության բարելավմանն ուղղված տեխնիկաներից մեկն է միայն, որը կարող է ընտրել ուսուցիչը՝ ելնելով երեխաների կրթական կարիքներից: Հետազոտողները հանգել են այն եզրահանգմանը, որ տարբեր մոտեցումների կիրառումը մեծ հնարավորություններ է տալիս սովորողներին³: Տարբեր մոտեցումների արդյունավետության վերաբերյալ հետազոտությունները փաստում են, որ մի քանի մեթոդների համադրությունն ավելի նշանակալի ազդեցություն է թողնում, քան մեկ արդյունավետ մեթոդի կիրառումը: Այնուամենայնիվ, շատ կրթական ծրագրեր հաշվի չեն առնում սովորողների անհատական տարբերությունները, գիտելիքները, ուսումնական նպատակներն ու ուսումնառության ոճը, այն է՝

³ Franzoni, A. L., & Assar, S. (2009). Student Learning Styles Adaptation Method Based on Teaching Strategies and Electronic Media. *Educational Technology & Society*, 12 (4), 15–29.

տեղեկատվություն ստանալու և մշակելու եղանակի առանձնահատկությունները, առավելությունները և նախասիրությունները:

Վերջին տասնամյակներում մանկավարժության մեջ մեծ ջանքեր են գործադրվում ուսումնական ծրագիրը բոլոր սովորողների համար ավելի մատչելի և հասանելի դարձնելու ուղղությամբ, մասնավորապես, ուսումնական նյութի հարմարեցման, ուսումնառության համընդհանուր ձևավորման, էլեկտրոնային ուսուցման և այլ նորարարությունների միջոցով: Սակայն, անհերքելի է այն փաստը, որ ոչ մի համակարգիչ, ոչ մի հարմարեցված դասի պլան չի կարող փոխարինել ուսուցչին: Ամենակատարյալ գործիքներն անգամ անօգուտ են, եթե դրանք չի կիրառում տեղեկացված, երեխաների կարողություններին և դժվարություններին քաջատեղյակ, միշտ ուղղորդող և մոտիվացնող ուսուցիչը: Նշված մոտեցումներն օգնում են ուսուցչին ավելի շատ ժամանակ խնայել և արդյունավետ աշխատել, սակայն չեն կատարում աշխատանքը նրա փոխարեն:

Ուսումնառության համընդհանուր ձևավորում

Ուսումնառության համընդհանուր ձևավորումը (ՌԻՀՁ) հենվում է համընդհանուր դիզայնի սկզբունքների վրա, ըստ որի, բոլոր հաստատությունները, ապրանքներն ու ծառայությունները պետք է հասանելի լինեն բոլոր մարդկանց՝ անկախ նրանց զարգացման առանձնահատկություններից: Համընդհանուր ձևավորումն ուղղված է սովորողների՝ որպես «սովորական» և «առանձնահատուկ» երեխաների տարբերակումը վերացնելուն՝ ելնելով այն հանգամանքից, որ յուրաքանչյուր

անհատ տարբեր կերպ է սովորում և բազմազան մոտեցումների կիրառումը կօգնի բոլոր սովորողներին:⁴

Ուսումնառության համընդհանուր ձևավորումը ենթադրում է դասարանային հարմարեցումներ, օրինակ՝ երբ ուսուցիչը այնպես է կազմում դասի պլանը, որ այն հարմարեցված լինի որքան հնարավոր է շատ երեխաների կրթական կարիքներին. ասենք՝ պատմության տեքստը կարող է գրաֆիկական ուղեցույցներ և հարցեր պարունակել այն սովորողների համար, ում համար դասագիրքը շատ բարդ է և հակառակը՝ հավակնոտ լինել այն սովորողների համար, ում համար այն չափազանց հեշտ ու անհետաքրքիր է: Դասարանում ուսումնառության համընդհանուր ձևավորման կիրառումը միտված է ներառական գործընթացի բարելավմանը: Այն ենթադրում է, որ ուսուցիչը դասի պլանը կազմելիս պետք է հաշվի առնի դասարանում սովորող *բոլոր* երեխաների առանձնահատկությունը և այնպիսի մեթոդներ կիրառի, որ *բոլորին* հասանելի լինի նոր նյութը, *բոլորը* մասնակցեն և ներգրավված լինեն դասագործընթացում: Ուսումնառության համընդհանուր ձևավորման օրինակ է, երբ ուսուցիչը նոր նյութը ներկայացնելիս օգտագործում է փոքրիկ տեսանյութեր, երգեր, տարբեր պատկերների ցուցադրություն կամ կազմակերպում է խմբային, խաղային կամ գործնական աշխատանքներ, որոնց ընթացքում ակտիվանում են աշակերտների ընկալման ու մտածողության տարբեր ձևերը, և վերջիններս հնարավորություն են ստանում իրենց համար առավել մատչելի տարբերակով յուրացնել կամ արտահայտել

⁴ Հարությունյան, Մ., Պողոսյան, Ա., Ավագյան, Ա., Գևորգյան, Ե. (Խմբ.) (2020)

Ներառական կրթության ռազմավարություն: Դասագիրք: Մինեսոտայի, Մինեսոթա, ԱՄՆ. Մինեսոթայի համալսարան: ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան և Ի. Արժվանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևան, Հայաստան, 19-20:

գիտելիքը, ինչն իր հերթին խթանում է աշակերտի ակտիվությունն ու ապահովում մասնակցությունը դասագործընթացին:

ՈւՀԶ-ի սկզբունքների վրա կարելի է հիմնվել նաև այն դեպքերում, երբ ուսուցիչը զանազան ընթացակարգեր է մշակում տարբեր իրավիճակների համար: Օրինակ, եթե աշակերտը չի կարողանում լուծել մաթեմատիկայի խնդիրը 2 րոպեում, ապա պետք է օգնություն խնդրի ուսուցչից: Բավականին արդյունավետ է նաև, երբ ուսուցիչը տեղեկացնում է սովորողներին անելիքների մասին և միաժամանակ թեմաների հաջորդականությունը պատկերող պաստառ է կազմում, որպեսզի երեխաներն իմանան, թե ինչ է սպասվում հաջորդիվ: Շատ հաճախ երեխաներն իրենք էլ կարող են մասնակցել այդ աշխատանքին: Դա շատ օգտակար է աուտիզմ, ուշադրության պակաս և գերակտիվություն ունեցող աշակերտների, ինչպես նաև ուսումնառության մեջ դժվարություններ ունեցող աշակերտների համար, քանի որ այն ապահովում է կանխատեսելիությունը և երեխային նախապատրաստում է հաջորդ քայլերին:

Ուսումնական նյութի փոփոխություն և հարմարեցում

Ուսումնական նյութի փոփոխությունները երեխայի ուսուցման և ուսումնառության եղանակների փոփոխությունն է: Փոփոխությունների օրինակ է, երբ ուսուցիչը առաջադրանքը հեշտացնում է, որպեսզի երեխային չհանձնարարի նույն բարդության աշխատանք, ինչ՝ մյուսներին:⁵

Հարմարեցումները օգնում են սովորողին կատարել առաջադրանքներն իրենց առանձնահատկությունների շրջանակներում, և գիտելիքների

⁵ Doi: <https://www.parentcenterhub.org/accommodations/>

ստուգմանը մասնակցել իր հնարավորությունների ու կարողությունների չափով: Օրինակ, գիտելիքների ստուգման հարմարեցում է համարվում, երբ ուսուցիչը թույլ է տալիս գրելու դժվարություն ունեցող աշակերտին դասը պատասխանել բանավոր կերպով: Աշակերտը պատասխանում է դասին նույնքան լիարժեք, որքան մյուսները, սակայն ստիպված չի լինում գրել իր պատասխանները՝ ցույց տալու համար, որ յուրացրել է տրված գիտելիքները: Հարմարեցումների ապահովման գլխավոր նպատակը երեխային սովորելու, դասին արդյունավետ մասնակցելու և ինքնադրսևորվելու հնարավորություն տալն է:

Տարրական դասարաններում հարմարեցումները կարող են տարբեր լինել՝ կախված ուսուցչի՝ դասի պլանավորման, նախապատրաստական աշխատանքներից, ինքնուրույնության և հավելյալ ուսումնական ռեսուրսների անհրաժեշտությունից:⁶ Շամը և Սթիքլերը նշում են, որ աշակերտի կամ աշակերտների խմբի համար հարմարեցումներ կազմակերպելիս ուսուցիչները կարող են դիտարկել հետևյալ հարմարեցումները⁷.

- անմիջական աջակցություն ցուցաբերել աշակերտին ուսումնական նյութի կիրառման ընթացքում,
- փոփոխել դասը, օգտագործել լրացուցիչ ուսումնական նյութեր,
- պարզեցնել ուսումնական նյութերը,
- սովորեցնել երեխաներին օգտվել ուսումնական նյութերից:

Հետազոտողները նշում են, որ բոլոր դասարանների աշակերտները գնահատում են այն ուսուցիչներին, ովքեր հարմարեցնում են դասը՝ իրենց

⁶ Meese, R.L. (1992). Adapting textbooks for children with learning disabilities in mainstream classrooms. *Teaching Exceptional Children*, 24(3), 49-51.

⁷ Schumm, J. S., & Strickler, K. (1990). Guidelines for adapting content area textbooks: Keeping teachers and students content. *Intervention in School and Clinic*, 27, 79-84.

կրթական կարիքներին համապատասխան, սակայն միևնույն ժամանակ, աշակերտներն ու նրանց ծնողները գտնում են, որ հաճախ բացակայում են իրենց անհրաժեշտ հարմարեցումները: ⁸

Երբեմն նույնիսկ փոքրիկ փոփոխությունը, որն ուսուցիչը նախատեսում է դասի պլանում ԿԱՊԿ ունեցող երեխայի համար, կարող է մեծ ազդեցություն ունենալ երեխայի ինքնավստահության և դասապրոցեսում մասնակցության տեսակետից: Սա չափազանց կարևոր է նաև ուսուցիչների համար, քանզի յուրաքանչյուր ուսուցիչ ցանկանում է, որ իր աշակերտը դասապրոցեսում հաջողություններ ունենա:

Խորհուրդներ ուսուցչին ուսումնական նյութի և կրթական գործընթացի հարմարեցման վերաբերյալ

Հաճախ ԿԱՊԿ ունեցող երեխաների համար միայն դասագրքերի կիրառումը բավարար չէ անհրաժեշտ գիտելիքներ ստանալու համար: Անհրաժեշտ են խելամիտ հարմարեցումներ երեխաների կրթության իրավունքը իրացնելու համար, որը, համաձայն ՀՀ Հաշմանդամություն ունեցող անձանց մասին օրենքի՝ անհրաժեշտ և համապատասխան փոփոխությունների և հարմարեցումների (շտկումների) կատարումն է, որոնք չեն առաջացնում անհամաչափ կամ անհարկի բեռ և ուղղված են հաշմանդամություն ունեցող անձի՝ մարդու իրավունքներից և հիմնական ազատություններից մյուսների հետ հավասար հիմունքներով օգտվելուն:⁹

⁸ Schumm & Vaughn. (1994). Vaughn, Schumm, Niarhos, & Daugherty, 1993; Vaughn, Schumm, Niarhos, & Gordon, 236-248.

⁹ Doi: <https://www.arlis.am/documentview.aspx?docID=152960>.

Սակայն, հարց է առաջանում՝ ինչպե՞ս կարող է ուսուցիչը այն իրականացնել, երբ դասարանում միաժամանակ սովորում է 35 աշակերտ: Ստորև ներկայացված են ուսումնական նյութի հարմարեցման գործնական մեթոդներ ուսուցչի աշխատանքը հեշտացնելու և ԿԱՊԿ ունեցող երեխաների արդյունավետ ուսումնառությունը կազմակերպելու համար:

Հարմարեցում 1: Կրթական կարիքի գնահատում և տվյալների հավաքագրում

Ներառական կրթության համակարգում առանձնահատուկ կարևոր են երեխայի մասին տեղեկատվության հավաքագրումը, փոխանակումն ու վերլուծությունը, ինչը հիմք է հանդիսանում երեխայի համար անհրաժեշտ հարմարեցումների պլանավորման համար: Տվյալների հավաքագրման և կարիքի գնահատման միջոցով է միայն հնարավոր հասկանալ, թե ինչ է անհրաժեշտ երեխային և ինչ կարող ենք անել, որպեսզի նրա մասնակցությունը դասագործընթացին և ուսումնական ծրագրի յուրացումը լինեն առավել արդյունավետ:

Կրթական կարիքի ճշգրիտ գնահատումը ենթադրում է արդյունավետ միջամտություն, որն էլ նպաստում է կրթական նպատակների իրագործմանը:¹⁰ Կրթական կարիքի գնահատումը կարելի է և պետք է կատարել ամեն օր, ամեն շաբաթ, քանի որ միայն այս ձևով կարող ենք ճանաչել երեխայի հնարավորությունները: Սովորողի կարիքներն ու հնարավորությունները բացահայտելուց հետո միայն հնարավոր է հասկանալ, թե կրթության ինչպիսի առանձնահատուկ պայմանների կարիք ունի երեխան՝ դասավանդման ինչպիսի մեթոդների կիրառման, ուսումնական ծրագրի ինչպիսի հարմարեցումների ապահովման և միջավայրային ինչպիսի

¹⁰ Ս. Պետրոսյան, 2018 «Ներառական կրթությունը գործնականում» ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, Հայաստան:

պայմանների կազմակերպման: Պետք է գնահատել, թե յուրաքանչյուր առաջադրանք որքանով է արդյունավետ աշակերտի համար, որքանով է մատչելի և համապատասխան վերջինիս կարողություններին:¹¹

Առաջադրանքների կազմման և հարմարեցման համար ուսուցիչը պետք է պատասխանի 3 հիմնական հարցերի.

- ի՞նչ սովորեցնել,
- ինչպե՞ս սովորեցնել,
- ինչպիսի՞ ակնկալիքներ ունենալ:

Հարմարեցում 2: Մեծահասակների օժանդակություն

Հետազոտողները փաստում են, որ տարրական դասարաններում ուսուցիչները բավականին վստահ են, որ կարող են հարմարեցնել ուսումնական ծրագիրը ԿԱՊԿ ունեցող երեխաների կրթական կարիքներին, սակայն, խնդիրն այն է, թե ե՞րբ և ինչպե՞ս կարող են ժամանակ գտնել այն իրականացնելու համար:¹² Այս առումով, խորհուրդ է տրվում համագործակցել ուսուցչի օգնականների, պրակտիկանտների, կամավորների հետ, ովքեր կարող են աջակցել լրացուցիչ ուսումնական նյութերի պատրաստման գործում, կամ կարող են դասի որևէ փուլում ուսուցչի հետ մասնակցել դրան՝ հստակ իմանալով իրենց դերն ու պարտականությունը:¹³ Այս գործընթացում կարևոր է ընդգծել նաև ծնողների դերը, որոնք հաճախ մեծ պատրաստակամությամբ աջակցում են մանկավարժներին՝ իրենց

¹¹ Salvia/Ysseldyke/Bolt. (2010,2007). Assessment in Special and Inclusive Education 11Th Edition, , 2-7.

¹² McIntosh, Ruth, et al. (1993). "Observations of students with learning disabilities in general education classrooms." Exceptional Children, p. 249.

¹³ Wasik, B. A. (1998). Using volunteers as reading tutors: Guidelines for successful practices. The Reading Teacher, 562-569.

երեխաների համար անհրաժեշտ ուսումնական նյութեր պատրաստելու և անհրաժեշտ միջոցներ ապահովելու հարցում:

Հարմարեցում 3: Ուղղորդված ուսուցում¹⁴

Այս մեթոդը ենթադրում է առաջադրանքի կամ ուսումնական նյութի փոփոխություն, պարզեցում՝ ըստ աշակերտի կարողությունների, որը կնպաստի նոր հմտությունների ձեռքբերմանը: Մեթոդի նպատակն է ժամանակավոր աջակցություն տրամադրել աշակերտին և, աստիճանաբար նվազեցնելով աջակցությունը, դադարեցնել: Ուսուցիչները կիրառում են այս մեթոդը՝ առաջադրանքը պարզեցնելով, փոքր մասերի բաժանելով, ընդ որում, յուրաքանչյուր հաջորդ քայլ պետք է ավելի բարդ լինի, քան նախորդը և նպաստի աշակերտի ինքնուրույնության և ինքնավստահության ձեռքբերմանը: Ինչպես Լ.Ս. Վիգոտսկին է նշում, ուսումնառության ընթացքում մոտակա զարգացման գոտին հատելու համար աշակերտը պետք է կարողանա ինքնուրույն հաղթահարել տարբեր խնդիրներ՝ մեծահասակների ուղղորդմամբ կամ հասակակիցների աջակցությամբ: Ուղղորդված ուսուցման օրինակներ են առաջադրանքի կատարման ցուցադրությունը, հավելյալ ժամանակի տրամադրումը, դիդակտիկ նյութերի փոփոխությունը, յուրաքանչյուր քայլ հաջողելուց հետո դրա խրախուսումը, առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ ռազմավարության ուսուցանումը:¹⁵

¹⁴Ս. Պետրոսյան, 2018 «Ներառական կրթությունը գործնականում» ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, Հայաստան:


¹⁵Sharon Vaughn, Candace S. Bos, (2012), Strategies for Teaching Students with Learning and Behavior Problems, 24-26.

Հարմարեցում 4: Պլանավորման բուրգ (Բուրգ)¹⁶

Պլանավորման բուրգը ուսուցման ճիշտ պլանավորման արդյունավետ գործիք է, այն օգնում է ներառել բոլոր աշակերտներին, աջակցել ուսուցիչներին՝ դասագրքերում անհրաժեշտ հարմարեցումներ իրականացնելու գործընթացում: Բուրգը հիմնված է այն գաղափարի վրա, որ բոլոր աշակերտները կարող են սովորել, բայց բոլորը չեն կարող նույն կերպ յուրացնել ուսումնական նյութը: Այն համարվում է նաև տարբերակված ուսուցման պլանավորման գործիք:

Բուրգն ունի երեք բաղադրիչ և երեք մակարդակ (տե՛ս նկար 1):

Ի՞նչ կսովորեն դասարանում սովորող բոլոր աշակերտները



¹⁶ Schumm, Jeanne Shay, (1999), Adapting reading and math materials for the inclusive classroom: kindergarten through grade five/ Jeanne Shay Schumm, 30-32.

Բուրգն ունի հինգ նիստ, որոնք խորհրդանշում են դասի պլանավորման ընթացքում ուսուցչի կողմից դիտարկվող գործոնները.

1. թեմա,
2. աշակերտներ,
3. բովանդակություն,
4. ուսուցիչ,
5. ուսուցման համապատասխան գործնական մաս:

Երրորդ կետում ներկայացված հարցերն այն դիտարկումներն են, որոնք ուսուցիչները սովորաբար ունենում են դասի պլանավորման ընթացքում: Այս բոլոր գործոնները փոխկապակցված են և ազդում են ուսուցման պլանավորման վրա:

Ուսուցիչներն այս 5 գործոնները վերլուծելուց հետո որոշում են, թե ինչ և ինչպես պետք է սովորեցնեն: Ուսումնառության մակարդակների վրա հիմնվելով՝ ուսուցիչներն աշխատում են դասի բովանդակության վրա (այսինքն, այն հասկացությունները կամ հմտությունները, որոնք պետք է յուրացվեն), ինչպես նաև որոշում են դասի գործնական մասը՝ օգնելու համար բոլոր աշակերտներին սովորել: Նախ՝ ուսուցիչը առանձնացնում է այս առանցքային հասկացությունները կամ հմտությունները, ապա՝ խմբավորում բովանդակությունն՝ ըստ սովորելու երեք մակարդակների.

- ինչ են սովորելու բոլոր աշակերտները (Բուրգի հիմքը),
- ինչ է սովորելու աշակերտների մեծ մասը (Բուրգի միջին հատվածը),
- ինչ կսովորի աշակերտների մի մասը (Բուրգի վերևի հատվածը):

Այնուհետև ուսուցիչը որոշում է ուսուցման գործնական մասը և անհրաժեշտ հարմարեցումները: Փոփոխման առավել ենթակա է Բուրգի հիմքը՝ այն նյութը, որը պետք է դասարանում սովորեն բոլոր երեխաները:

Բուրգի հիման վրա ուսուցումը պլանավորող ուսուցիչները շեշտում են, որ կարևոր է չսահմանափակել աշակերտներին Բուրգի այս կամ այն մակարդակում: Պայմանավորված աշակերտի հետաքրքրվածությամբ և թեմայի վերաբերյալ ունեցած նախնական գիտելիքներով՝ աշակերտը կարող է ժամանակ առ ժամանակ շարժվել վերև՝ դեպի Բուրգի գագաթ: ԿԱՊԿ ունեցող աշակերտները նույնպես կարող են դեպի վեր շարժվել՝ տեղափոխվելով մի մակարդակից մյուս մակարդակ՝ համապատասխան պայմանների առկայության դեպքում: Կարևոր է հիշել, որ դասի ժամանակ տրամադրվող ողջ տեղեկատվությունը պետք է հասանելի լինի բոլոր աշակերտներին: Բուրգը ոչ մի դեպքում չի կարելի դիտարկել որպես աշակերտների ուսումնառությունը կամ նրանց ակնկալիքները սահմանափակող գործիք:

Բուրգը կիրառող ուսուցիչների պնդմամբ՝ նյութի վերաբերյալ ունեցած ակնկալիքների հստակ սահմանումն օգնում է դասարանում ավելի հեշտ հաղորդակցվել աշակերտների, ծնողների և այլ մասնագետների հետ:

Հարմարեցում 5: Առկա նյութերի պարզեցում կամ լրացում

Ուսուցիչները, հետազոտողները, ծնողները և, նույնիսկ, աշակերտները հաճախ իրենց մտահոգությունն են արտահայտում այն մասին, որ ԿԱՊԿ ունեցող աշակերտների համար հանրակրթական պետական ծրագիրը քիչ արդյունավետ է, քանի որ, որպես կանոն, ծրագրի բովանդակային մասը կրճատվում է՝ հաշվի առնելով աշակերտների սովորելու հնարավորությունները: Տարրական դասարաններում ԿԱՊԿ ունեցող աշակերտները կարող են լիարժեք մասնակցություն ունենալ հարմարեցումների շնորհիվ՝ պարզեցնելով կամ լրացնելով առկա ուսումնական նյութերը: Նպատակը ոչ թե բովանդակությունն ու նյութերը

կրճատելն է, այլ օժանդակ ուսումնական նյութերի կիրառման միջոցով լիարժեք ուսումնական գործընթացի հասանելիությունն ապահովելը:

Գոյություն ունեն առկա նյութերի պարզեցման մի քանի տարբերակներ.

- ուսուցման նյութերի վերախմբագրումը և ավելի պարզ շարադրումը,
- ուսուցման նյութերի ամփոփ և հակիրճ, ինչպես նաև գրաֆիկական տարբերակների տրամադրումը,
- ուսուցիչների կողմից ուսումնական փոքրիկ ուղեցույցների մշակումը, որոնք կկիրառվեն ընթերցանությունից առաջ, ինչպես նաև՝ ընթացքում և հետո,
- ընթերցանության կամ մաթեմատիկական առաջադրանքների ծավալի կրճատումը,
- առաջադրանքների համար նախատեսվող արագության փոփոխումը, նյութի վերընթերցումը,
- գունավոր մատիտներով ընդգծումը՝ նշելու համար առանցքային հասկացությունները և անձանոթ կամ նոր բառերը,
- դասագրքի բովանդակության ձայնագրումը:

Օժանդակ նյութեր կարող են լինել այլընտրանքային ուսումնական նյութերը, որոնք օգնում են ծրագրային նյութի ընկալմանն ու յուրացմանը: Նման հարմարեցումները կարող են ներառել նաև.

- գործնական աշխատանքներ,
- տեսանյութերի կիրառում,
- համակարգչային տարբեր ծրագրերի կիրառում:¹⁷

¹⁷ Carnine, D. (1989). Designing practice activities. *Journal of Learning Disabilities*, 22, 603-607.

ՄԱՅՐԵՆԻ ԱՌԱՐԿԱՅԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ

ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

Մայրենիի գիրք-տետրի մեթոդական ուղեցույցը մշակված է այբբենարանին կից (նախաայբբենական շրջան) առաջադրանքների մեթոդական սկզբունքների, ԿԱՊԿ ունեցող երեխաների համար դրանց իրականացման առանձնահատկությունների մեկնաբանման և ճիշտ կիրառումն ապահովելու նպատակով: Մենք ձգտել ենք ուղեցույցի միջոցով ներկայացնել ոչ միայն այն, թե ինչպես պետք է կատարել այս կամ այն առաջադրանքը, այլև՝ ինչո՞ւ պետք է հատկապես այդպես կատարել՝ հենվելով ԿԱՊԿ ունեցող երեխաների ուսուցման մեթոդների գիտական հիմունքների վրա:

Այսպես, գրաճանաչության նախաայբբենական շրջանում մեծ տեղ պետք է տալ երեխաների *վերլուծահամադրական ունակությունների զարգացմանը*, որը, ինչպես հայտնի է, կարդալու և գրելու կարողության հիմքն է: Այս գործընթացում հատկապես կարևորում ենք, որ առաջադրանքները կատարվեն ոչ թե մեխանիկորեն, այլ իմաստավորվեն սովորողների կողմից: Այդ նպատակով վարժությունների կատարման ընթացքում ուսուցիչն անընդհատ հարցեր պետք է առաջադրի երեխաներին՝ ուղղորդելով իմաստավորելու իրենց լսածն ու ասածը: Զուգորդումների ապահովման նպատակով մենք առաջարկում ենք պարտադիր օգտագործել զննական հենքեր (նախադասությունների, բառերի, վանկերի, հնչյունների գծապատկերներ, որոնցում գույներով առանձնացված են ձայնավոր և բաղաձայն հնչյունները, ձևանմուշներ, պաստառներ, նկարներ և այլն):

Ինչպես գիտենք՝ գրաճանաչության նախապատրաստական շրջանի հիմնական նպատակը կարդալու և գրելու կարողության ձևավորման համար

անհրաժեշտ հիմք ստեղծելն է, որում մեծ է նաև *հոգեկան բոլոր գործընթացների*, մասնավորապես՝ *մտածողության, հիշողության, ուշադրության* դերը, հետևաբար, դրանց զարգացման գործը նախաայբբենական շրջանի (և ընդհանրապես ողջ գրաճանաչության շրջանի) ամենօրյա աշխատանքների կարևոր բաղադրիչը պետք է լինի: Իհարկե, հոգեկան գործընթացների զարգացումը պետք է շարունակվի նաև մայրենիի ուսուցման հաջորդ փուլերում (և ոչ միայն մայրենիի):

Երեխաների տեսաշարժողական հիշողության զարգացման նպատակով ներկայացրել ենք առաջադրանքներ՝ տրված օրինակի հիման վրա, որը ցանկալի է կազմակերպել որոշակի փուլերով. սկզբում երեխան կատարում է առաջադրանքը՝ օրինակն անընդհատ ունենալով իր տեսադաշտում, այնուհետև՝ տրված օրինակի դիտման ժամանակահատվածը կրճատվում է 15-20 վայրկյանով, սակայն այնպես, որ երեխան հասցնի դիտել և մտապահել տրված օրինակը: Նման վարժությունները, ըստ մեր դիտարկումների, նպատակահարմար է կազմակերպել գործունեության այնպիսի տեսակների ընթացքում, ինչպիսիք են նկարչությունը, ծեփը, տառամասնիկների արտագրությունը գրատախտակից, կառուցողական աշխատանքները և այլն: Մենք արձանագրել ենք, որ մտավոր զարգացման խնդիրներ ունեցող երեխաները հատկապես հաճույքով են կատարում աշխատանքի այն ձևերը, որոնք վերաբերում են երկու նման նկարների տարբերությունները և հակառակը՝ երկու պատկերների նմանությունները գտնելուն, սակայն, ինչ խոսք, այստեղ ևս հուշումներն ու օգնությունն անխուսափելի են:

Շատ ավելի բարդ է այս երեխաների տրամաբանական հիշողությունը զարգացնող աշխատանքների իրականացումը: Քանի որ հիշողության այս

տեսակը պայմանավորված է ուսումնական նյութի ընկալման աստիճանով, այս ուղղությամբ աշխատանքների կազմակերպումն անհնար է առանց տեսողական և լսողական հիշողության ժամանակ առ ժամանակ օգտագործման: Այս ուղղությամբ առաջարկում ենք աշխատանքի մի շարք ձևեր, որոնք ուղղորդված են մտավոր գործողություններ կատարելու սովորողների կարողության զարգացմանը, քանի որ հիշողության այս տեսակը հենվում է վերջինիս վրա: Աշխատանքի նման ձևեր կարող են հանդիսանալ առարկաների, երկրաչափական պատկերների, նկարների և այլնի՝ ըստ տարբեր չափանիշների դասակարգումը (ըստ ձևի, չափի, գույնի և այլն):

Ուշադրության ցրվածությունը, դրա պակասը բնորոշ են ընդհանրապես բոլոր կրտսեր դպրոցականներին. այն հիմնականում պայմանավորված է այդ տարիքին բնորոշ հոգեկանի զարգացման առանձնահատկություններով: Անշուշտ, զարգացման խնդիրներ չունեցող երեխաների դեպքում, այս խանգարումն աստիճանաբար շտկվում է: Մինչդեռ, ուշադրության պակասը, դրա անկայունությունն ու ցրվածությունը ԿԱՊԿ ունեցող երեխաներին մշտապես ուղեկցում են: Այս հանգամանքը ևս մեծապես խանգարում է ուսումնական գործունեությանն ընդհանրապես:

Գրաճանաչության նախաայբբենական ողջ շրջանն անհրաժեշտ է ուղեկցել *խոսքի զարգացման փարաբնույթ աշխատանքներով*՝ առանձնահատուկ ուշադրություն հատկացնելով խոսքի բոլոր բաղադրիչների (հնչյունային կողմ, բառապաշար, քերականություն, խոսք կառուցելու կարողություն) զարգացման աշխատանքներին: Ակնհայտ է այս երեխաների ինչպես իմպրեսիվ (խոսքի հասկացում), այնպես էլ էքսպրեսիվ (խոսքի արտահայտում) խոսքի ձևավորվածության մակարդակների խանգարումը:

ԿԱՊԿ ունեցող առաջին դասարանցին հաճախ դժվարությամբ է հասկանում ուսուցչի պարզագույն հրահանգներն ու առաջադրանքները, հատկապես, եթե դրանք երկարահունչ են. երեխան արագ հոգնում և դադարում է լսել: Մեր կողմից մշակված առաջադրանքների պահանջներն այնպես են ձևակերպված, որ հասկանալի լինեն նման աշակերտներին: Հետևաբար, առաջարկում ենք դրանք կարդալ աշակերտների համար այնպես, ինչպես ձևակերպված են:

Գրաճանաչության նախաայբբենական շրջանն ամենաբարենպաստն է մի շարք բառերի արտասանության ճշգրտման, արտաբերական կառույցի մարզման ու ամրապնդման համար: Այս խնդրի լուծման համար առաջարկում ենք առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուր գործողությունը, առարկայի նկարը և այլն անվանել, ասել բարձրաձայն: Դժվարանալու դեպքում՝ ուսուցիչն ասում, իսկ աշակերտը կրկնում է բառը կամ արտահայտությունը:

Դեռևս այս շրջանում երկար ժամանակ պետք է հատկացնել ճիշտ նստելու, տետրը սեղանին ճիշտ դնելու, կավիճը, մատիտը, այնուհետև՝ գրիչը ճիշտ բռնելու կարողությունների ձևավորման, հետագայում դրանք հմտությունների վերածման ուղղությամբ: Աշակերտները պետք է կարողանան օգտվել տետրից, գրել տառերի պարզագույն մասնիկները, պահպանել տողերը, առանձնացնել բառի առաջին հնչյունը, լսել առաջարկվող հնչյունն ու արտասանել այն և այլն: Հարկ է նշել, որ գրաճանաչության նախաայբբենական շրջանը մատների գրաշարժողական կարողությունների զարգացման համար ամենաբարենպաստ ժամանակահատվածն է:

Մայրենիի գիրք-տետրում զետեղված առաջադրանքները կատարելիս պետք է հաշվի առնել այն կարևոր հանգամանքը, որ ԿԱՊԿ ունեցող

երեխաների մի մասը կարող է ունենալ հնչյունային լսողության արտահայտված խանգարումներ, մյուսը՝ արտահայտված արտասանական դժվարություններ, որոնք կրում են խիստ կայուն բնույթ, երրորդը՝ տարածական ընկալումների ակնհայտ խաթարումներ և այլն: Այս հարցերը մեկնաբանված և ներկայացված կլինեն անհատական ուսումնական պլաններում (ԱՌԻՊ): Հետևաբար, վարժությունների կատարման ընթացքում պետք է ցուցաբերել տարբերակված և անհատական մոտեցում: Ընդհանրապես, առաջադրանքների մեթոդական մշակումներում մենք անդրադարձել ենք միևնույն առաջադրանքի մի քանի տարբերակներով իրականացման հարցին, որը պայմանավորված է երեխաների նշված առանձնահատկություններով:

Մի խումբ առաջադրանքներ (1, 31, 32, 33, 34, 35, 36, 38, 39, 51, 52) ներկայացված են սիմվոլիկ զննականությամբ, որը վերացական մտածողության զարգացման լավագույն միջոցն է: Գծապատկերների օգնությամբ երեխաները ծանոթանում են *պատմության, նախադասության, բառի, վանկի, հնչյունի (ձայնավոր, բաղաձայն)* հետ:

Առաջին հանդիպում: Գիտելիքի օր:

Առաջին հանդիպումը սկսում ենք ծանոթությունից: Ինչպես հայտնի է, անձանոթ միջավայրում մարդն անապահով է զգում իրեն: Ուսուցիչներն այս գործընթացը կազմակերպելու հարուստ փորձ ունեն և տարբեր հետաքրքիր մեթոդական հնարներ են կիրառում: Սակայն ԿԱՊԿ ունեցող երեխաները, հնարավոր է, չմասնակցեն ընդհանուր զրույցին: Այս դեպքում առաջարկում ենք առաջին օրը չպարտադրել նրանց ակտիվորեն մասնակցել կազմակերպվող աշխատանքներին: Շահեկան կլինի՝ այդ դասին մասնակցեն նաև ծնողներ, որոնք ևս կարող են ակտիվորեն ներգրավվել ծավալված զրույցին՝ ստեղծելով ազատ, անկաշկանդ մթնոլորտ: Կարելի է առաջադրել հետևյալ բնույթի հարցեր՝

1. Երեխանե՛ր, ձեզ դուր եկա՞վ դպրոցը/դասարանը:
2. Ի՞նչ կուզեիք տեսնել դասարանում: Ինչո՞ւ:
3. Ի՞նչ եք վերցրել ձեզ հետ:
4. Ո՞րն է ձեր սիրած հեքիաթը/մուլտֆիլմը և այլն:

Եթե, այնուամենայնիվ, երեխան չի ցանկանում խոսել, կարելի է առաջարկել՝

- նկարել թղթի, ավազի վրա,
- խճանկարով աշխատել,
- ծեփամածիկով որևէ առարկա ծեփել,
- իր նախընտրած գործությունը կատարել և այլն:

Այսինքն, կարևոր է, որ երեխան խմբի անդամը լինի, որոշակի մասնակցություն ունենա և անպայման նկատվի ու խրախուսվի:

Առաջին դասին երեխաներին պետք է ներկայացնել այբբենարանը/գիրքը, տետրը, աշխատանքային մյուս տետրերը, գրենական պիտույքները, ցույց տալ դրանց հետ աշխատելու ձևերը և այլն:

1. ա) Հավելվածից ընտրի՛ր մասերը և ստացի՛ր նկարը՝ անվանելով յուրաքանչյուր գործողությունը:
 - բ) Ստացված նկարը տեղադրի՛ր (ուսուցչի օգնությամբ) ուղղանկյուն շրջանակի մեջ:
 - գ) Պատմի՛ր՝ ի՞նչ ստացար (ի՞նչ ես տեսնում: Ի՞նչ կենդանիներ կան նկարում: Ի՞նչ են անում երեխաները:) (Տե՛ս հավելված 1)

Առաջարկվում է բնության գրկում խաղացող երեխաների մասնակցությամբ նկար-պատմություն՝ փազլի տեսքով: Տվյալ առաջադրանքի **ա** կետը ենթադրում է մի քանի գործողությունների կատարում. ուսուցիչը, հաշվի առնելով տվյալ երեխայի կարողությունները, կարող է առաջադրել դրանցից միայն մեկը, երկուսը կամ բոլորը՝ պարզեցնելով կամ բարդացնելով առաջադրանքը. մի դեպքում երեխան ընտրում է նկարը՝ անվանելով այն, այնուիետև ասում է, թե ի՞նչ է անում, ի՞նչ ստացվեց, էլ ի՞նչ կցանկանար, որ լիներ նկարում և այլն: Խոսքի և հաղորդակցման դժվարություններ ունեցող երեխաները կարող են պատասխանել ուսուցչի հարցին՝ ցույց տալով նկարը: Տեսողության խնդիրներ ունեցող երեխաները կարող են նկարագրել նկարը:

Երկրորդ՝ **բ** կետում տրված առաջադրանքի նպատակն է պատմության գաղափարի ներմուծումը. նշված գործողությունը կատարվում է առանց անվանելու, որ այն պատմության գծապատկերն է: Սակայն երեխան տեսնում և վարժվում է դրան: Այսպես՝

– Մեր պատմությունը փորձենք տեղադրել այս պատկերի մեջ:

Երրորդ՝ **գ** կետի առաջադրանքը քիչ ավելի բարդ է, և ոչ բոլոր դեպքերում կարելի է հանձնարարել: Իսկ կատարելու դեպքում՝ կարելի է առաջադրել փակագծում նշված հարցերից միայն մեկը, երկուսը, ավելացնել այլ հարցեր: Օրինակ՝

– Ցո՛ւյց տուր քեզ ծանոթ առարկաները: Անվանի՛ր:

– Ի՞նչ է անում կատուն:

– Նկարում թիթեռներ տեսնո՞ւմ ես, որտե՞ղ են դրանք:

Նշված հարցերն առավել շատ խոսքային հրահանգների ընկալումը զարգացնելու նպատակ ունեն:

2. Աշխարհի գույները (նկար-պատմություն):

2.1 ա) Ցո՛ւյց տուր կարմիր գույնի առարկաները: Անվանի՛ր դրանք:

բ) Ցո՛ւյց տուր կանաչ գույնի առարկաները: Անվանի՛ր դրանք:

գ) Ցո՛ւյց տուր դեղին գույնի առարկաները: Անվանի՛ր դրանք:

դ) Տեղադրի՛ր կարմիր շերտիկը համապատասխան գույնի նկարի տակ (վրա, կողքը): (Տե՛ս հավելված 2)

ե) Տեղադրի՛ր դեղին շերտիկը համապատասխան գույնի նկարի տակ (վրա, կողքը): (Տե՛ս հավելված 2)

զ) Տեղադրի՛ր կանաչ շերտիկը համապատասխան գույնի նկարի տակ (վրա, կողքը): (Տե՛ս հավելված 2)

2-րդ առաջադրանքի նպատակն է գույների ճանաչումը շրջապատող առարկաների միջոցով: Միևնույն ժամանակ աշակերտները պետք է անվանեն տվյալ գույնի առարկաները, որն էլ խոսքը զարգացնելու նպատակ ունի: Այս դեպքում ևս ուսուցիչը կարող է իր հայեցողությամբ ավելացնել կամ

պակասեցնել առարկաների կամ գույների քանակը: Առաջադրանքի **դ, ե, գ** կետերը ենթադրում են նաև գործողությունների կատարում, որը նախ՝ մանր մկանների զարգացման խնդիր է լուծում, երկրորդ՝ գործողություն կատարելն առավել աշխուժացնում և հետաքրքիր է դարձնում առաջադրանքի կատարումը: Նշված առաջադրանքն առավել կիրառելի դարձնելու նպատակով՝ առաջարկում ենք շարունակել բնական իրավիճակում. օրինակ՝

- ցո՛ւյց տուր կարմիր (կապույտ, կանաչ և այլն) գույն ունեցող առարկաները քո շրջապատում (դասարանում, միջանցքում, բակում և այլն):
- Նայի՛ր շուրջդ և անվանի՛ր կարմիր (կապույտ, կանաչ, դեղին և այլն) գույն ունեցող առարկաները: Կարելի է նշել ժամանակահատվածը, օրինակ՝ 20 վայրկյան: Այս առաջադրանքները զարգացնում են նաև դիտողականությունը, ուշադրությունը:
- Մատիտների տուփից ընտրի՛ր կարմիր (կանաչ, կապույտ, դեղին և այլն) գույնի մատիտը և տո՛ւր ընկերոջդ (նշել անունը. օրինակ՝ Արամին):

Եթե երեխան գույնի անվանումը չի ճանաչում, ուսուցիչը կարող է գունավոր նմուշ-շերտիկով ցույց տալ անհրաժեշտ գույնը՝ ուղղորդելով երեխայի գործողությունները:

3. Նկարում գտի՛ր և ցո՛ւյց տուր դեղին ծաղիկը, կարմիր գլխարկով աղջկան, կարմիր փուչիկը:

3-րդ առաջադրանքի կատարման ընթացքում ևս ուսուցիչը կարող է հանձնարարել կատարել 1, 2 կամ 3 գործողություն՝ պայմանավորված երեխայի կարողություններով:

4. ա) Մրգերի շարքից նշի՛ր կանաչ գույն ունեցող միրգը/մրգերը:
Անվանի՛ր:

բ) Ո՞ր միրգը չես սիրում, նշի՛ր: Ի՞նչ գույնի է:

4-րդ առաջադրանքը կատարելիս ցանկալի է, որ երեխան նաև անվանի միրգը, սակայն, չկարողանալու դեպքում՝ ուսուցիչը կարող է հուշել, իսկ աշակերտն անպայման կրկնի այն կամ ցույց տա: Այս աշխատանքը կնպաստի բառապաշարի հարստացմանը, արտաբերության ճշգրտմանը: Այդ նպատակով ցանկալի է, որ ուսուցիչը բառն արտաբերի պարզ և հստակ՝ նայելով երեխայի դեմքին, որպեսզի երեխան տեսնի արտաբերական շարժումները: Առաջարկում ենք նաև մրգի անվանումը լրացնել՝ նշելով մեկ, երկու բնորոշ հատկանիշ, օրինակ՝ քաղցր է, թթու է և այլն: Կարևոր է, որ երեխան կարողանա կազմել բառակապակցություններ՝ ընտրելով տվյալ մրգին համապատասխան հատկանիշներ: Ուսուցիչը կարող է նաև հատկանիշը ցույց տալ՝ համապատասխան դիմախաղով (օրինակ, թթու): Վերջին հանգամանքը առավել տպավորիչ կդարձնի բառի իմաստի ընկալումը և կնպաստի դրա մտապահմանն ու կհարստացնի բառապաշարը:

Առաջադրանքի **բ** կետի կատարումը երեխային կտեղափոխի իրական կյանք, երեխան կհիշի իր անձնական ապրումները, կունենա որոշակի հույզեր, որը մեծապես կամրապնդի այդ պահին սովորածը:

Առարկաների ձևեր և գույներ

5. Գունավորի՛ր ըստ օրինակի:

5-րդ առաջադրանքը կազմելիս ընտրել ենք այնպիսի առարկաների նկարներ, որոնք առավել հեշտ են գունավորելու համար: Կարևոր է առաջադրանքի ճիշտ կատարումը, այն է՝ եզրագծերից դուրս չգալ և գունավորել հնարավորինս հոծ գծերով: Այս դեպքում հնարավոր կլինի լուծել մանր մկանների զարգացման խնդիրը: Առաջադրանքի կատարման ընթացքում երեխան պետք է անվանի թե՛ առարկան, որը գունավորում է, թե՛ դրա գույնը: Այս առաջադրանքի կատարման ընթացքում ևս ուսուցիչը կարող է տարբերակված մոտեցում ցուցաբերել՝ առաջարկելով գունավորել միայն 1, 2, 3 կամ բոլոր առարկաների նկարները: Որոշ դեպքերում, հնարավոր է, անհրաժեշտություն առաջանա ցույց տալ տվյալ գործողությունը կատարելու օրինակը, կամ ուսուցիչը կարող է նախ՝ բռնել երեխայի ձեռքը, ապա, աստիճանաբար թուլացնելով, բաց թողնել: Եթե երեխան դժվարանում է ընտրել գույնը, ուսուցիչը կրկին կարող է օգտագործել գունավոր քարտեր՝ անհրաժեշտ գույնը հուշելու և երեխային ուղղորդելու նպատակով:

6. Առանց ընդհատելու՝ տրված կետերը միացրո՛ւ մեկ գծով:

6-րդ առաջադրանքը կատարելու ընթացքում կարևոր է, որ երեխան չլարի ձեռքի մկանները և կարողանա կետերը միացնել՝ առանց ընդհատումների, առանց ավելորդ լարվածության: Եթե երեխան կդժվարանա առաջադրված կետերը (4, 3) միացնել, ուսուցիչը կարող է սկսել 2 կետից կամ հանձնարարել կատարել գործողություններից միայն մեկը:

Այս առաջադրանքի կատարումը դյուրինացնելու նպատակով առաջարկում ենք, մինչև նշված աշխատանքին անցնելը, կատարել հետևյալ առաջադրանքը.

- տրված փայտիկներից հավաքի՛ր քառակուսի /եռանկյունի/: Տեղափոխի՛ր դրանք այնպես, որ ստացվի մեկ ուրիշ պատկեր: Ասա՞ ի՞նչ պատկեր ստացվեց: Եթե երեխան դժվարանում է ինքնուրույն հավաքել պատկերը, կարելի է տալ նմուշօրինակ և հերթականությամբ հուշել քայլերը:

7. Նշի՛ր այն պատկերը, որում քառակուսի կա:

8. Նշի՛ր այն պատկերները, որոնցում եռանկյունի կա:

7-րդ և 8-րդ առաջադրանքները նման են, սակայն՝ 8-րդ առաջադրանքն ավելի բարդ է: Դրանց նպատակն է զարգացնել ուշադրությունը, դիտողականությունը, նմանությունները և տարբերությունները գտնելու կարողությունը: Եթե երեխան դժվարանում է գտնել պատկերն ըստ անվանման, կարելի է կիրառել հուշող քարտեր, որոնց վրա պատկերված լինեն անհրաժեշտ երկրաչափական պատկերները: Առաջադրանքների կատարումից հետո, կախված երեխայի հնարավորություններից, ուսուցիչը կարող է հարցեր ուղղել, օրինակ՝

- Որտե՞ղ չկա քառակուսի:
- Որտե՞ղ չկա եռանկյունի:
- Ինչո՞ւ ես այդպես կարծում և այլն:

Առարկաների հատկությունները՝ մեծ, փոքր, երկար, կարճ:

(Համեմատել, հակադրել, դասակարգել առարկաները՝ գտնելով նմանությունները և տարբերությունները) (պատմություն)

- Մատները գրելուն նախապատրաստելու համար կարելի է առաջարկել.
- երկրաչափական տարբեր ծանոթ պատկերների (քառակուսի, շրջան, եռանկյուն), առարկաների (խնձոր, գնդակ, արև, տանձ, գազար և այլն), զարդապատկերների արտանկարում տրված օրինակից,
 - նկարել գծիկներ՝ տարբեր ուղղություններով (ուղիղ, թեք), նախ՝ տրված նմուշի վրա, ապա՝ ինքնուրույն,
 - տրված ուրվագծված պատկերների գունավորում,
 - փայտիկներով, երկրաչափական պատկերներով զարդանախշի ստացում,
 - ստեղծագործական գործունեության տարբեր տեսակների կիրառում (նկարչություն, ծեփ, խճանկարի հավաքում, կառուցողական գործունեություն և այլն),
 - հյուսք, թելերով խաղեր և այլն:

9. ա) Նկարների շարքում ցո'յց տուր ամենամեծ կենդանին:

բ) Նկարների շարքում ցո'յց տուր ամենափոքր կենդանին:

գ) Թվարկի'ր նկարների անվանումները փոքրից մեծ հաջորդականությամբ:

9-րդ առաջադրանքի **ա, բ**, կետերը կատարելիս կարելի է կենդանուն ցույց տալուց հետո առաջարկել երեխային ասել անվանումը, իսկ **գ** կետի

կատարման ընթացքում ուսուցիչը կարող է հուշել այն կենդանու անվանումը, որը երեխան դժվարանում է անվանել, սակայն՝ երեխայի կողմից նկարը ցույց տալուց հետո միայն: Եթե երեխան դժվարանում է խոսքային հրահանգով ընկալել, թե ինչ է իրենից պահանջվում, ուսուցիչը կարող է ժեստերով և դիմախաղով ցույց տալ անհրաժեշտ մեծությունը և ուղղորդել երեխային ընտրել ճիշտ պատկերը:

**10. Սև գույնի մատիտով ներկի՛ր ամենամեծ կենդանու պատկերը:
Անվանի՛ր այն:**

10-րդ առաջադրանքի կատարման համար ընտրել ենք սև գույնը, որպեսզի երեխայի ուշադրությունը կենտրոնանա ոչ թե գույնի, այլ չափի հատկանիշի վրա: Սակայն, եթե ուսուցիչը գտնում է, որ տվյալ աշակերտը կարող է, այսինքն՝ ձևավորված և կայունացած են հիմնական գույների մասին երեխայի ունեցած պատկերացումները, ապա կարելի է հարցնել՝ «Ի՞նչ գույնի մատիտով կներկեիր ամենամեծ կենդանուն»:

11. Ամենափոքր կենդանուն ո՞ր տնակում կտեղադրես (Միացրո՛ւ գծով):

11-րդ առաջադրանքի նպատակն է համեմատելու, նմանությունն ու տարբերությունն ընկալելու կարողությունների զարգացումը, ինչպես նաև՝ խոսքի ընկալման զարգացումը: Եթե երեխան դժվարանում է կատարել առաջադրանքը, ուսուցիչը կարող է ինքը ցույց տալ կատարման օրինակը՝ ամենամեծ կենդանուն տեղադրելով ամենափոքր տնակում: Իսկ եթե երեխան հեշտությամբ է կատարում առաջադրանքը, ապա կարելի է առաջարկել մյուս կենդանիներին ևս տեղադրել (գծերով միացնել) համապատասխան տնակներում:

12. ա) Ուշադիր դիտիր նկարը: Ասա՞՝ ո՞ր պատկերն է ամենամոտը, ո՞րն է ամենահեռվում:

բ) Անվանի՞ր նկարի առարկաներն ըստ տեղադրության՝ մոտիկից հեռու և հակառակը:

12-րդ առաջադրանքի կատարումը կգարգացնի երեխայի տարածական ընկալումը, որը ևս կարևոր է կարդալու և գրելու ուսուցման համար: Առաջադրանքի կատարումն ուղեկցվում է պատկերների անվանումներն արտաբերելով, որը նպաստում է խոսքի թե՛ հնչյունային կողմի և թե՛ բառապաշարի զարգացմանը: Այս առաջադրանքը կատարելիս ևս ուսուցիչը կարող է տարբեր մոտեցումներ ցուցաբերել. մի դեպքում հանձնարարել միայն առաջադրանքի ա կետի պահանջը, մյուս դեպքում՝ բ կետի միայն առաջին մասը, մեկ այլ դեպքում՝ բոլոր պահանջները միասին: Եթե կլինեն երեխաներ, որոնք կդժվարանան տարբերակել հեռու-մոտ հասկացությունները, ուսուցիչը կարող է նրանց կանգնեցնել իրարից տարբեր հեռավորությունների վրա և բնական իրավիճակում ներկայացնել տվյալ հասկացությունների իմաստը, որից հետո միայն անցնել գրավոր առաջադրանքին:

13. Դասավորի՞ր առարկաները մեծից փոքրը (փոքրից մեծը) հաջորդականությամբ (տե՛ս հավելված 3):

ա) Ասա՞՝ ո՞ր առարկան է վերջինը:

բ) Ասա՞՝ ո՞րն է առաջինը:

13-րդ առաջադրանքի կատարումը երեխաներին հաճելի է կատարելը, որովհետև նկարներով գործողություններ է կատարելու: Սակայն առանձին կետերով (**ա**, **բ**) առաջարկել ենք հարցեր տալ, որը կնպաստի թե՛ խոսքի ընկալման զարգացմանը և թե՛ բառապաշարի հարստացմանը: Ուսուցիչն

ինքը կարող է որոշել՝ առաջադրի՞ այդ հարցերը, թե՛ ոչ: Միևնույն ժամանակ ուսուցիչը կարող է ավելացնել հարցադրումները՝ պայմանավորված տվյալ երեխայի անհատական առանձնահատկություններով:

- 14.** ա) Սկզբից մինչև վերջ մատիտով (մատով, հայացքով) անցի՛ր կարմիր գծի վրայով և հասի՛ր փղիկին:
- բ) Սկզբից մինչև վերջ մատիտով (մատով, հայացքով) անցի՛ր կանաչ գծի վրայով և հասի՛ր փուչիկին:
- գ) Սկզբից մինչև վերջ մատիտով (մատով, հայացքով) անցի՛ր կապույտ գծի վրայով և հասի՛ր ծաղիկին:

14-րդ առաջադրանքի կատարումը նպաստում է ուշադրության կենտրոնացմանը, կամային որակների, մատների մանր մկանների զարգացմանը: Ընդ որում առաջադրանքի պահանջի ձևակերպման մեջ, բացի մատիտից, նշել ենք նաև մատը և հայացքը այն երեխաների համար, ովքեր դժվարանում են բռնել մատիտը: Որպեսզի երեխաները հաճույքով կատարեն առաջադրանքը, վերջում նշված են իրենց սիրելի կենդանիների կամ առարկաների նկարները, որը դրդապատճառ կհանդիսանա առաջադրանքի կատարման համար: Եթե երեխան գործողության ընթացքում շեղվում է, կարելի է վերադարձնել նրան առաջադրանքի կատարման ընթացքին՝ մատով և խոսքով հուշելով ու ուղղողելով:

15. Ի՞նչ գույն ունի ամենակարճ թելով փուչիկը:

16. Ի՞նչ գույն ունի ամենակարճ թելով փուչիկի կողքի փուչիկը:

15-րդ և 16-րդ առաջադրանքները միտված են ամրապնդելու երեխաների՝ գույները ճանաչելու կարողությունը և զարգացնելու տարածական ընկալումները: 16-րդ առաջադրանքը ենթադրում է 2 գործողություն կատարել: Եթե երեխան դժվարանա, կարելի է նախ՝ կատարի մեկը, այսինքն՝ գտնի և ցույց տա ամենակարճ թելով փուչիկը, անվանի, հետո որոշի կողքի փուչիկի գույնը: Եթե երեխան դժվարանում է, ուսուցիչը կարող է պարզապես ցույց տալ՝ օգնելով կատարել առաջադրանքը:

17. Կապույտ գույնով ներկի՛ր ամենաերկար թելով փուչիկը:

18. Կանաչ գույնով ներկի՛ր ամենակարճ թելով փուչիկի կողքի փուչիկը:

17, 18-րդ առաջադրանքների կատարման ընթացքում երեխան միաժամանակ 2 գործողություն պետք է կատարի. նախ՝ որոշի, թե որ փուչիկը պետք է գունավորի, հետո՝ կատարի համապատասխան գործողությունը: Քանի որ նախորդ առաջադրանքներում երեխան արդեն վարժվել է այդ գործողություններն առանձին-առանձին կատարելուն, հետևաբար՝ կարող ենք այս 2 գործողությունների կատարումը միավորել մեկ առաջադրանքի մեջ: Սակայն հնարավոր է, որ ԿԱՊԿ ունեցող երեխաներից ոմանք դժվարանան այդ հարցում: Նման դեպքերում ուսուցիչը կարող է անհատական մոտեցում ցուցաբերել և պարզեցնել առաջադրանքը՝ տարանջատելով տրված առաջադրանքները:

19. Գունավորի՛ր հաստ գիրքը:

20. Գունավորի՛ր բարակ կոճղը:

19-րդ, 20-րդ առաջադրանքները միտված են տեսողատարածական ընկալման և մատների մանր մկանների զարգացմանը: Այստեղ պետք է հետևել, որ երեխան ճիշտ բռնի մատիտը, մանր մկանները գերլարված կամ հակառակը՝ թուլացած չլինեն: Առաջադրանքի կատարումից առաջ կարելի է հարցնել՝

- Ի՞նչ գույնով ես ուզում գունավորել:
- Անվանի՛ր այդ գույնը:
- Ինչո՞ւ հենց այդ գույնն ընտրեցիր և այլն:

Այս առաջադրանքի կատարման ժամանակ ևս, եթե երեխան ծանոթ չէ հաստ-բարակ հասկացություններին, պետք է կիրառել դիդակտիկ միջոցներ. երեխայի հետ առաջադրանքը կատարել բանավոր և ակնառու ձևով, նոր միայն անցում կատարել գիրք-տետրում առաջադրանքի կատարմանը:

21. Գունավորի՛ր հաստ սունկը կարմիր գույնով, բարակ սունկը՝ մոխրագույն:

21-րդ առաջադրանքը ենթադրում է մի քանի գործողությունների կատարում: Սակայն, քանի որ նախորդ առաջադրանքների կատարման ընթացքում նշված բոլոր գործողությունների ընկալումն արդեն մշակվել է, հետևաբար, նշված առաջադրանքը դրանք ամրապնդելու և կայունացնելու խնդիր է լուծում: Այստեղ ևս հարկ է, որ ուսուցիչն անհատական մոտեցում ցուցաբերի: Այսինքն, եթե երեխան դժվարանում է, ապա կարելի է նախ որոշել, թե ո՞րն է հաստ սունկը.

- Ցույց տո՛ւր հաստ սունկը:

Հետո տարբերակել անհրաժեշտ գույները.

- Գունավոր մատիտների միջից առանձնացրո՛ւ կարմիր գույնը:
- Գունավորի՛ր դրանով հաստ սունկը:

Նույն հարցերը կարելի է առաջադրել առաջադրանքի երկրորդ հատվածի վերաբերյալ: Դժվարանալու դեպքում կրկին կարելի է կիրառել հուշող քարտեր:

22. Անվանի՛ր առարկաները:

22-րդ առաջադրանքում երեխան պետք է կարողանա ճանաչել իրար վրա նկարված 3 առարկաները և անվանի դրանք: Առաջադրանքը նպատակ ունի զարգացնել տեսողատարածական ընկալումը, ինչպես նաև՝ բառապաշարը: Այն դեպքերում, երբ երեխան ավելին կարող է, առաջարկում ենք հանձնարարել դրանցից մեկը կամ երկուսը գունավորել (տեսանելի հատվածները):

23. Ճանաչի՛ր և անվանի՛ր առարկան:

23-րդ առաջադրանքում արհեստականորեն դժվարեցված է պատկերների ճանաչումը, սակայն դրա նպատակը երեխայի տեսողական ընկալման, մտածողության, ինչպես նաև բառապաշարի զարգացումն է: Պատկերներն ընտրված են գունավոր, որպեսզի դյուրացվի դրանց ճանաչումը:

24. Գտի՛ր ամենաքիչը 3 տարբերություն և անվանի՛ր դրանք:

24-րդ առաջադրանքի նպատակն է զարգացնել ուշադրությունը, դիտողունակությունը, համեմատելու, տարբերություններն ու նմանությունները տեսնելու կարողությունը, ինչպես նաև՝ խոսքը:

Առաջադրանքում պատկերված 2 ձնեմարդուկների միջև առկա է 5 տարբերություն: Պահանջվում է գտնել ամենաքիչը՝ 3-ը: Ուսուցիչը կարող է

նշել, որ առկա է 5 տարբերություն, որը երեխային կմղի գտնել բոլորը և անվանել դրանք: Ընդ որում, որոշ տարբերություններ ակնհայտ են, իսկ որոշները՝ ոչ այնքան: Դժվարության դեպքում ուսուցիչը կարող է օգնել երեխային՝ հուշելով առաջին տարբերությունը:

Առաջադրանքի պահանջների վերաձևակերպումները կարող են պայմանավորված լինել երեխայի անհատական առանձնահատկություններով:

25. Ճանաչի՛ր և անվանի՛ր կենդանուն:

25-րդ առաջադրանքը որևէ գործողության կատարում չի ենթադրում: Այստեղ երեխան պետք է կռահի և ասի ուրվագծված կենդանու անվանումը: Եթե երեխան դժվարանա, ուսուցիչը կարող է մասնակիորեն ընդգծել կենդանու ուրվագիծն այնքան, մինչև երեխան ճանաչի այն: Խոսքի խանգարում ունեցող երեխային կարելի է առաջարկել տարբեր կենդանիների պատկերներ, որոնցից պետք է ընտրի ուրվագծված պատկերին համապատասխանող կենդանու պատկերը:

26. Միացրո՛ւ կետերը և ստացի՛ր պատկեր: Անվանի՛ր:

26-րդ առաջադրանքի կատարումը, ի տարբերություն 25-րդի, ենթադրում է գործողությունների կատարում (երեխան միացնում է կետերը), որը նպաստում է մանր մկանների զարգացմանը: Առաջադրանքի կատարումն իմաստավորված է երեխայի համար, որովհետև նա պետք է պատկեր ստանա և անվանի այն: Կախված երեխայի կարողություններից՝ ուսուցիչը կարող է հանձնարարել առաջադրված պատկերներից միայն մեկը, երկուսը կամ երեքը, ինչպես նաև՝ աջակցության չափը:

27. ա) Որոշի՛ր՝ ի՞նչ է պատկերված: Ասա՛ անվանումը:

բ) Հավելվածից ընտրի՛ր և ամբողջացրու պատկերը (տե՛ս հավելված 4):

27-րդ առաջադրանքի նպատակն է զարգացնել երեխայի շրջապատող առարկաները ճանաչելու կարողությունը, բառապաշարը, երևակայությունը, մտածողությունը:

Նշված առաջադրանքի **ա** կետի պահանջի կատարման դժվարության դեպքում, ուսուցիչը կարող է նախ՝ հանձնարարել **բ** կետը, հետո՝ վերադառնալ **ա** կետին: Կամ այն պատկերները, որոնք երեխան կճանաչի, կարող է անվանել, հետո ամբողջացնել, իսկ այն պատկերները, որոնք չի կարողանա ճանաչել՝ գտնի հավելվածից, ամբողջացնի, հետո՝ անվանի:

28. Որոշի՛ր՝ ի՞նչ է պատկերված: Ասա՛ անվանումը:

28-րդ առաջադրանքում պատկերները շրջված են ներկայացված: Երեխան պետք է այդ դիրքով ճանաչի և անվանի դրանք: Առաջադրանքի կատարումը զարգացնում է տեսողատարածական ընկալումը, բառապաշարը: Դժվարության դեպքում ուսուցիչը կարող է պտտել պատկերներից մեկը և անվանել այն, այնուհետև հետ շրջել և երեխային խնդրել նորից անվանի, որից հետո, հավանական է, երեխան կհասականա առաջադրանքի սկզբունքը և ինքնուրույն կկատարի այն:

Առարկաների տարածական առնչություններ. աջ, ձախ, վերև, ներքև, հեռու, մոտիկ, արագ, դանդաղ

Տարածության մեջ կողմնորոշվելու ունակության զարգացման ուղղությամբ կազմակերպվող աշխատանքները երեխաների հետ սկսում ենք

ամենապարզ՝ սեփական մարմնի աջ և ձախ հատվածները տարբերակելու մարզողական վարժություններից:

Մարմնի աջ և ձախ հատվածների տարբերակումը պետք է սկսել առաջատար աջ (ձախիկների դեպքում՝ ձախ) ձեռքի առանձնացումից: Մինչև գիրք-տետրում առկա համապատասխան առաջադրանքների կատարումը, առաջարկում ենք նմանօրինակ վարժություններ կատարել.

- Բարձրացրո՛ւ աջ ձեռքը և անվանի՛ր այն: Եթե երեխան չի կարողանում անվանել, ապա ուսուցիչն ինքն է անվանում, իսկ երեխաները կրկնում են:
- Ցո՛ւյց տուր ձախ ձեռքը:
- Բարձրացրո՛ւ մե՛կ աջ, մե՛կ ձախ ձեռքը:
- Վերցրո՛ւ մատիտը (գիրքը, տետրը և այլն) աջ (ձախ) ձեռքով:

Աջ և ձախ ձեռքերի տարբերակումից հետո կարելի է անցնել մարմնի մյուս հատվածների տարբերակմանը՝ ոտքերի, աչքերի, ականջների: Այս առաջադրանքներն աստիճանաբար պետք է բարդացնել՝ երեխաներին առաջարկելով աջ ձեռքով ցույց տալ ձախ ականջը, ձախ ձեռքով՝ աջ աչքը, կամ, որ հատկապես բարդ է, աջ ձեռքով ցույց տալ դիմացինի ձախ ոտքը և այլն: Եթե երեխան դժվարանում է կողմնորոշվել աջ կամ ձախ կողմերում, կարելի է որևէ գույն աջ ձեռքում պահել, մեկ այլ գույն՝ ձախում և երեխային խնդրել ցույց տալ, օրինակ, կարմիր գույնով ձեռքը, հետո ասել, որ դա աջ ձեռքն էր, հետո՝ կապույտ գույնով ձեռքը՝ նշելով, որ դա ձախ ձեռքն էր: Մի քանի կրկնությունից հետո կարող ենք գույները հեռացնել և երեխային խնդրել արդեն ինքնուրույն ցույց տա համապատասխան ձեռքը:

Մարմնի աջ և ձախ հատվածները ճանաչելուց և տարբերակելուց հետո միայն կարելի է անցնել տարածության մեջ կողմնորոշվելու

կարողության զարգացման աշխատանքներին: Այդ նպատակով առաջարկում ենք կատարել մարզողական վարժություններ.

- թվարկի՛ր, թե ինչեր են գտնվում քեզանից աջ, ձախ,
- թվարկի՛ր, թե ինչեր են գտնվում քո դիմաց, քո գլխավերևում,
- աջ ձեռքով վերցրո՛ւ մատիտը, դի՛ր այն գրքի ձախ կողմում և հակառակը,
- Դի՛ր գիրքը քո դիմաց, գրքի աջ կողմում դի՛ր գրիչը, ձախում մատիտը և այլն:

29. Տրված գծից աջ տեղադրի՛ր շրջանը, ձախ կողմում քառակուսին, իսկ վերևում՝ եռանկյունին (տե՛ս հավելված 5):

29-րդ առաջադրանքին ցանկալի է, որ նախորդի վերևում առաջարկած վարժությունների կատարումը: Դրանք կարելի է իրականացնել նաև դասի ֆիզկուլտ-դադարների ժամանակ: Նշված առաջադրանքը նպաստում է ոչ միայն տարածական ընկալման զարգացմանը, այլև երկրաչափական պատկերների ճանաչմանն ու տարբերակմանը:

30. Տրված կետի աջ կողմում տեղադրի՛ր աստղիկ, ձախում՝ խաչ, վերևում՝ գնդակ, իսկ ներքևում՝ ծաղիկ (տե՛ս հավելված 6):

30-րդ առաջադրանքը 29-րդի փոքր-ինչ բարդեցված տարբերակն է:

Այս առաջադրանքի կատարման ընթացքում ուսուցիչը որոշ դեպքերում կարող է առաջարկել ոչ թե տեղադրել պատրաստի պատկերը, այլ նկարել դրանցից որևէ մեկը, երկուսը, երեքը կամ բոլորը:

31. ա) Տեղադրի՛ր նախադասության գծապատկերները նկարների տակ (տե՛ս հավելված 7):

բ) Գծի՛ր նախադասության գծապատկերները նկարների տակ:

31-րդ առաջադրանքը նպաստում է նախադասության մասին երեխայի պատկերացումների ձևավորմանը, խոսք կառուցելու կարողության, մտածողության զարգացմանը: Առաջադրանքի **ա** կետում տրված են պատրաստի գծապատկերները. երեխան, տեղադրելով նախադասությունների տակ, ծանոթանում է դրանց, հասկանում, որ նախադասությունը կարելի է ներկայացնել նաև գծապատկերի տեսքով: Ուսուցիչը կարող է հարցեր տալ առաջադրված նկարների վերաբերյալ՝ օգնելով երեխային նախադասություն կազմել: Օրինակ՝

- Ի՞նչ է պատկերված նկարում:
- Ի՞նչ է անում տատիկը:
- Ի՞նչ է անում մայրիկը և այլն:

Առաջադրանքի **բ** կետն ավելի բարդ է, և որոշ երեխաներ կարող են դժվարանալ: Այստեղ ուսուցիչը կարող է որոշակի օգնություն ցուցաբերել: Օրինակ՝ կարող է ցույց տալ վերևի առաջադրանքի հետ ունեցած նմանությունը, հուշել և այլն: Այստեղ ևս ցանկալի է, որ երեխաները կազմեն նկարներին համապատասխան նախադասություններ՝ ուսուցչի կողմից առաջադրված հարցերի օգնությամբ:

32. Տեղադրի՛ր բառի գծապատկերը նկարների տակ (տե՛ս հավելված 8):

32-րդ առաջադրանքն իր բնույթով նման է 31-րդին, սակայն, այս դեպքում երեխայի ուշադրության կենտրոնում բառն է: Այս առաջադրանքը կատարելիս կարևոր է, որ մինչև գծապատկերը տեղադրելը, երեխան հստակ

արտաբերի նկարում պատկերված բառերը և զգա դրանց տարբերությունը՝ մեկը կարճ է, մյուսը երկար, հաջորդն ավելի երկար: Այստեղ ևս ուսուցիչը կարող է օգնել առաջադրանքը կատարելիս: Կարևորն այն է, որ երեխան տեսնի բառի և գծապատկերի համադրությունը:

33. Տեղադրի՛ր գծապատկերները համապատասխան նկարների տակ (տե՛ս հավելված 9):

33-րդ առաջադրանքը պարունակում է թե՛ նախադասության և թե՛ բառի գծապատկերների շուրջ աշխատանք: Երեխան այն կարող է կատարել, եթե հաղթահարել է նախորդ 2 առաջադրանքները: Մենք մտածված չենք խառնել նկար-բառերն ու նկար-նախադասությունները, որպեսզի կրկնակի շփոթ չառաջացնենք: Ուսուցիչը կարող է հաջորդ քայլում այդ հնարը ևս կիրառել:

34. Ուտելիք նշանակող նկար-բառերի գծապատկերները գունավորի՛ր վարդագույն (դեղին) գույնով:

34-րդ առաջադրանքի նպատակն է հետաքրքիր աշխատանքի միջոցով երեխայի ուշադրությունը հրավիրել բառի գծապատկերի վրա: Երեխան նախ՝ ամբողջից պետք է առանձնացնի մասնավորը՝ ուտելիք նշանակող բառը, որից հետո գործողություն կատարի՝ գունավորի: Կատարվող գործողության ընթացքում առնչվում է բառի գծապատկերի հետ: Առաջադրանքում ընտրված գույնը սկզբունքային նշանակություն չունի. ուսուցիչը կարող է ինքը որոշել:

Կարելի է նաև սկզբում (հուշելու նպատակով) երեխայի հետ միասին առանձնացնել, բացատրել, թե ինչու ենք հենց դա առանձնացրել, որից հետո միայն առաջարկենք ինքնուրույն կատարել առաջադրանքը:

35. Տրված գծապատկերը տեղադրի՛ր համապատասխան բառի տակ (տե՛ս հավելված 10):

35-րդ առաջադրանքը դարձյալ վերաբերում է բառի գծապատկերի մասին պատկերացումների ձևավորմանը, որի կատարմանը մեծապես կնպաստի նախորդ առաջադրանքը: Այստեղ կարևոր է, որ երեխան անվանի բառը, հետո տեղադրի համապատասխան գծապատկերը: Խոսքի խանգարում ունեցող երեխան կարող է ցույց տալ բառին համապատասխանող գծապատկերը, հետո տեղադրի:

36. Տրված գծապատկերը տեղադրի՛ր (գծի՛ր) համապատասխան բառի տակ (տե՛ս հավելված 11):

36-րդ առաջադրանքը, ի տարբերություն 35-րդի, առավել ինքնուրույնություն է պահանջում: Հետևաբար, այս առաջադրանքը կատարելիս, որպես հուշում, ուսուցիչը կարող է ցույց տալ նախորդ առաջադրանքի նյութը:

Գաղափար վանկի մասին

37. Անվանի՛ր նկարները՝ ծափերով բաժանելով վանկերի:

37-րդ առաջադրանքի կատարումը երեխայից հատուկ ջանքեր չի պահանջում: Պարզապես ուսուցիչը պետք է հետևի, որ երեխան նախ՝ հստակ արտաբերի բառը, այնուհետև՝ ծափերով վանկատի այն:

38. Ընտրի՛ր գծապատկերին համապատասխան նկարը և փակցրո՛ւ (տե՛ս հավելված 12):

38-րդ առաջադրանքը զարգացնում է բառը վանկերի բաժանելու կարողությունը, մտածողությունը: Այս առաջադրանքը կատարելիս երեխան հստակ պետք է որոշի բառում վանկերի քանակը: Որպեսզի առաջադրանքը ճիշտ կատարվի, մինչև նկարը փակցնելը, երեխան կարող է արտաբերել բառը, բանավոր ասել վանկերի քանակը, հետո փակցնել:

39. Տրված նկարներին համապատասխանեցրո՛ւ վանկային գծապատկերներից մեկը (տե՛ս հավելված 13):

39-րդ առաջադրանքը նախորդ՝ 38-րդ առաջադրանքի հակառակ գործողությունն է ենթադրում, սակայն՝ քիչ ավելի բարդ է: Այս դեպքում ևս ցանկալի է, որ երեխան բարձրաձայն արտաբերի բառը, որոշի վանկերի քանակը, հետո միայն ընտրի համապատասխան գծապատկերը:

«Առանձնացրո՛ւ խմբերը»

40. Նշի՛ր այն առարկաների նկարները, որոնք պետք է դնել դպրոցական պայուսակի մեջ: Անվանի՛ր դրանք:

40-րդ առաջադրանքը խմբավորելու և ընդհանրացնելու տարրեր է պարունակում, որը հաջողությամբ կարող է զարգացնել վերացական մտածողությունը, բառապաշարը, ինքնուրույնությունը: Առաջադրանքը պահանջում է նաև անվանել դրանք: Ուսուցիչը կարող է շարունակել՝ հարցնելով.

- Էլ ի՞նչ կարող ես դնել դպրոցական պայուսակի մեջ:
- Ինչո՞ւ գնդակը չընտրեցիր (ընտրեցիր) և այլն:

41. Թռչունների նկարները տեղադրի՛ր ծառի ճյուղին: Կենդանիների նկարները՝ անտառում (տե՛ս հավելված 14): Անվանի՛ր դրանք:

41-րդ առաջադրանքի նպատակն է ընդհանրացում կատարել և խմբավորել՝ այս անգամ 2 խմբով: Այն կզարգացնի երեխայի վերացական մտածողությունը, բառապաշարը: Առաջադրանքը հետաքրքիր է նրանով, որ երեխան կատարում է նաև որոշակի գործողություններ: Եթե երեխան դժվարանում է կատարել առաջադրանքը, կարելի է առաջին պատկերներն ընտրելիս աջակցել երեխային գտնել բնակության վայրը, այնուհետև խրախուսել երեխային՝ ինքնուրույն շարունակելու:

42. Տրված պատկերները փակցրո՛ւ 2 շարքով՝ ըստ չափի: Անվանի՛ր դրանք (տե՛ս հավելված 15):

42-րդ առաջադրանքում երեխան դարձյալ ընդհանրացնում և խմբավորում է, սակայն այս դեպքում՝ ոչ թե նկար-բառերը, այլ պատկերները: Կարևոր է, որ աշխատանքը կատարելուց հետո երեխան անվանի դրանք:

43. Տրված պատկերները փակցրո՛ւ 3 շարքով՝ ըստ ձևի (տե՛ս հավելված 16):

43-րդ առաջադրանքը նման է նախորդներին, սակայն 2 շարքի փոխարեն երեխան տրված պատկերները պետք է խմբավորի 3 շարքով, որն ավելի բարդ է, ընդ որում՝ այստեղ ընտրված չափանիշը ձևն է:

44. Տրված պատկերները փակցրո՛ւ 4 շարքով՝ ըստ գույնի (տե՛ս հավելված 17):

44-րդ առաջադրանքը, ի տարբերություն նախորդի, բարդանում է ևս մեկ շարքի ավելացումով, իսկ չափանիշը դառնում է գույնը:

45. Տրված նշանները փակցրո՛ւ 3 շարքով՝ ըստ գույնի (տե՛ս հավելված 18):

45-րդ առաջադրանքի կատարումն ամրապնդում է գույների մասին երեխաների ունեցած պատկերացումները, սակայն այստեղ շատ կարևոր է ըստ կոնկրետ հատկանիշի ընդհանրացում կատարելը և, հատկապես, տառանշանների հետ որոշակի գործողություններ կատարելը: Վերջին հանգամանքը կնպաստի հետագայում դրանք յուրացնելիս:

46. Տրված նշանները փակցրո՛ւ 2 շարքով՝ ըստ ձևի (տե՛ս հավելված 19):

46-րդ առաջադրանքի կատարումը ենթադրում է ընդհանրացում կատարելու կարողության զարգացում, խմբավորում՝ ըստ որոշակի հատկանիշի, տվյալ դեպքում՝ ըստ ձևի և երկրաչափական պատկերների ընկալման, ընդ որում, այստեղ ներկայացված են միևնույն պատկերից տարբեր չափերի, որն ավելի բարդացնում և, միևնույն ժամանակ, հետաքրքիր է դարձնում առաջադրանքի կատարումը:

«Ինչպե՛ս կլինի ճիշտ»

47. Նկարի՛ր առարկայի պակասող հատվածը:

47-րդ առաջադրանքի կատարումը նպատակ ունի զարգացնել ընկալման ամբողջականությունը և ճշգրտել երեխայի պատկերացումները շրջապատող առարկաների վերաբերյալ: Առաջադրանքի կատարման ընթացքում ուսուցիչը կարող է տարբեր մոտեցումներ ցուցաբերել. Մի դեպքում հարցել՝ «Ի՞նչն է պակասում», երեխան պատասխանում է, որից հետո ամբողջացնում միայն մեկը, միայն երկուսը, բոլորը: Մեկ այլ իրավիճակում կարելի է կարճ ժամանակով (5 վայրկյան) ցույց տալ բնական առարկան կամ դրա նկարը, հետո առաջարկել ամբողջացնել: Մի երրորդ իրավիճակում կարելի է ցույց տալ առարկաներից մեկը կամ դրա նկարը, ամբողջացնել պակասող մասը, հետո անցնել հաջորդին, և այդպես շարունակ:

Հնչյունային լսողությունը զարգացնող առաջադրանքներ

Վերլուծահամադրական կարողությունների զարգացման նպատակով առաջարկում ենք կիրառել հնչյունների տարբերակման ունակության ձևավորմանը միտված վարժություններ: Սկզբնական շրջանում դրանք պետք է իրականացնել վանկային մակարդակով: Օրինակ՝ ուսուցից հետո արտասանել մեկ բաղաձայնով իրարից տարբերվող վանկերի շարքը (սա-գա-սա, շա-սա-շա, րա-ռա-րա և այլն), արտասանել և համեմատել այն բառերը, որոնք իրարից տարբերվում են մեկ կամ երկու հնչյունով (լար-լոր-լուր, բառ-բուռ-բեռ, նավ-նուռ-նոր և այլն): Կամ՝ այսպիսի առաջադրանքներ. օրինակ՝ տրված բառերից առանձնացնել և արտասանել առաջադրվող հնչյունով սկսվողը, վերջացողը, բառախմբից առանձնացնել և անվանել այն բառը, որի մեջ լսվում է տրված հնչյունը: Տրված բառերին ավելացնել համապատասխան հնչյուն և ստացված նոր բառերն արտասանել և այլն:

48. Գունավորի՛ր նկարը, որի անվանման մեջ լսվում է ս հնչյունը:

48-րդ առաջադրանքը կատարելիս երեխան զբաղվում է իր համար հետաքրքիր աշխատանքով՝ նկարը գունավորելով, իսկ այդ համատեքստում լսողական ընկալումները զարգացնելու խնդիր է լուծվում: Այս առաջադրանքը կատարելիս ցանկալի է, որ երեխան անվանի նկարը, լսի ինքն իրեն և որոշի՝ նշված հնչյունը առկա՞ է, թե՛ ոչ: Սակայն, եթե երեխան դժվարանում է, կարող է ուսուցիչն արտասանել բառը՝ շեշտելով նշված հնչյունի արտասանությունը. այստեղ գլխավորը տվյալ հնչյունի ճանաչումն է բառում, որը կարդալու և գրելու ուսուցման կարևոր նախադրյալ է: Նման վարժություններ կարելի է կատարել՝ ընտրելով ցանկացած այլ հնչյուն:

49. Գունավորի՛ր նկարը, որի անվանումը սկսվում է ա հնչյունով:

49-րդ առաջադրանքն իր բնույթով նման է նախորդին, սակայն այստեղ երեխայի համար առավել բարդ է ձայնավորի առանձնացումը, դրա համար այն առաջակել ենք բառասկզբում: Որոշակի վարժություններից հետո միայն կարելի է ձայնավորն առանձնացնել բառամիջում և, հատկապես, բառավերջում:

50. Գունավորի՛ր նկարը, որի անվանումը վերջանում է կ հնչյունով:

50-րդ առաջադրանքը ևս նման է նախորդ երկուսին, սակայն առավել բարդ է երեխայի համար, քանի որ հնչյունը պետք է առանձնացնի բառավերջում: Այս առաջադրանքը ևս կարելի է կազմակերպել տարբեր հնչյունների հիմքով:

Վերլուծահամադրական գործընթացները զարգացնող առաջադրանքներ

- 51.** ա) Անվանի՛ր միայն 2 հնչյուն ունեցող բառերը:
բ) Անվանի՛ր միայն 4 հնչյուն ունեցող բառերը:
գ) Անվանի՛ր միայն 3 հնչյուն ունեցող բառերը:
դ) Անվանի՛ր միայն 5 հնչյուն ունեցող բառերը:

51-րդ առաջադրանքը զարգացնում է երեխաների հնչյունային լսողությունը, բառապաշարը, «բառ», «բառի գծապատկեր» հասկացությունները: Այն կազմված է չորս ենթակետից, որոնք նույն պահանջն ունեն, սակայն աստիճանաբար բարդանում են: Նշված առաջադրանքում առկա են բառերի գծապատկերները՝ հնչյունների քանակով, որի նպատակն է որոշակի առաջադրանք կատարելու միջոցով երեխային ծանոթացնել բառի գծապատկերին, սովորեցնել համադրել բառը՝ համապատասխան գծապատկերի հետ: Եթե երեխան ունի խոսքի խանգարում, ապա կարող է ոչ թե անվանել, այլ ցույց տալ պատկերը: Առաջադրանքում նկարները (ըստ հնչյունների քանակի) տրված են խառը հերթականությամբ, որպեսզի երեխան այդ հակադրության մեջ առավել լավ ընկալի դրանց տարբերությունները: Այս առաջադրանքը կատարելիս ուսուցիչը դարձյալ կարող է ինքը որոշել, թե տվյալ երեխային քանի հնչյուն ունեցող բառերի նկարներ առաջարկի:

52. Հավելվածից ընտրի՛ր և տեղադրի՛ր գծապատկերին համապատասխանող նկարները: Անվանի՛ր բառը և հնչյունների քանակը (տե՛ս հավելված 20):

52-րդ առաջադրանքը սերտորեն կապված է նախորդ՝ 51-րդ առաջադրանքի հետ. երեխան կկարողանա այն կատարել, եթե ինքնուրույն կատարել է նախորդ առաջադրանքի պահանջը: Սակայն այստեղ ավելանում են ինքնուրույն մտածելու, բառը հնչյունների վերլուծելու, դրանց քանակը որոշելու կարողությունները: Առաջադրանքը կազմված է 2 մասից. առաջին մասում երեխան պետք է մտավոր գործողություն կատարի, իսկ երկրորդ հատվածում՝ կատարած գործողությունը խոսքով արտահայտի:

Ձայնավոր և բաղաձայն հնչյուններ

53. Անվանի՛ր նկարները: Ձայնավորով սկսվող բառից առաջ դի՛ր կարմիր քառակուսի (տե՛ս հավելված 21):

53-րդ առաջադրանքի հիմնական նպատակը ձայնավոր հնչյունների ճանաչումն ու տարբերակումն է: Առաջադրանքի կատարումը զարգացնում է նաև բառապաշարը: Կարևոր է, որ երեխան ճիշտ ճանաչի և անվանի նկարները: Հավելվածում առաջադրված են այնքան կարմիր քառակուսիներ, որքան ձայնավորով սկսվող բառերն են: Հետևաբար՝ տրված քառակուսիների քանակը կարող է հուշող դեր կատարել առաջադրանքի ճիշտ կատարման համար: Ուսուցիչը կարող է տրված նկարների շարքը ավելացնել կամ պակասեցնել:

54. Անվանի՛ր նկարները: Բաղաձայնով սկսվող բառից առաջ դի՛ր կապույտ քառակուսի (տե՛ս հավելված 22):

54-րդ առաջադրանքն իր բնույթով շատ նման է նախորդ՝ 53-րդին, սակայն երեխան պետք է առանձնացնի բաղաձայն հնչյունով սկսվող բառերը: Այստեղ ևս հավելվածում տրված կապույտ քառակուսիները համապատասխանեցված են բաղաձայն հնչյունով սկսվող բառերի քանակին, որը դարձյալ հուշող դեր ունի: Այս երկու՝ 53-րդ և 54-րդ առաջադրանքների կատարումը նաև գույների ճանաչումն ամրապնդելու խնդիր են լուծում:

55. Անվանի՛ր նկարները. ձայնավոր հնչյունով սկսվող անվանում ունեցող նկարները փակցրո՛ւ կարմիր թղթի վրա, իսկ բաղաձայն հնչյունով սկսվողները՝ կապույտ թղթի վրա (տե՛ս հավելված 23):

55-րդ առաջադրանքը կարող է բարդ լինել երեխաների համար, քանի որ երկու պահանջ է ներառում, սակայն, քանի որ նախորդ (53, 54) առաջադրանքներն առանձին-առանձին ամրապնդել են նախ՝ ձայնավորների, ապա՝ բաղաձայնների ճանաչումն ու յուրացումը, ապա նշված առաջադրանքը երեխան կարող է կատարել: Այս առաջադրանքը զարգացնում է նաև մտածողությունը՝ տարբերակում կատարելու միջոցով: Այստեղ ևս ուսուցիչը կարող է ավելացնել կամ պակասեցնել նկարների քանակը (կարող է երեխային առաջարկել դասագրքի նկարները, երեխայի շրջապատում առկա առարկաների անվանումները, երեխային ծանոթ այլ առարկաներ և այլն):

56. Անվանի՛ր նկարները. ձայնավոր հնչյունով վերջացող անվանում ունեցող նկարները տեղադրի՛ր կարմիր արկղի վրա (մեջ), իսկ բաղաձայն հնչյունով վերջացողները՝ կապույտ արկղի վրա (մեջ) (տե՛ս հավելված 24):

56-րդ առաջադրանքը, նախորդի համեմատ, բարդանում է նրանով, որ երեխան պետք է առանձնացնի բառավերջի հնչյունը, որն առավել դժվար է: Այս առումով ցանկալի է, որ երեխան անվանի նկարում պատկերված առարկան, առանձնացնի հնչյունը, տեղադրի արկղի մեջ, հետո անցնի հաջորդ նկարին: Այս առաջադրանքը հաղթահարելուց հետո կարելի է մեկ աստիճանով ևս բարդացնել պահանջը. օրինակ՝ ձայնավոր հնչյունով սկսվող բառերը տեղադրի՛ր կարմիր արկղի մեջ, իսկ բաղաձայն հնչյունով վերջացողները՝ կապույտ արկղի մեջ և հակառակը:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ր

Ուղեցույցի «Հավելված» բաժնում նպատակահարմար ենք գտել ուսուցչին առաջարկել այնպիսի առաջադրանքների նմուշներ, որոնք կամփոփեն և կընդհանրացնեն երեխաների գիտելիքներն այս կամ այն թեմատիկ խմբի վերաբերյալ: Նշված առաջադրանքներն ընդամենը նմուշօրինակներն են, որոնց կատարման ընթացքում կարելի է օգտագործել «Մայրենի 1» աշխատանքային գիրք-տետրի հավելվածի նկարներն ու գծապատկերները:

🔸 Աշխարհի գույները

Առաջադրանք 1. Կարմիր գույնի մատիտով գունավորի՛ր խնձորը: Կանաչ գույնով գունավորի՛ր տանձը: Ասա՛ ի՞նչ գույն ունի արևը, գունավորի՛ր այդ գույնով:

(Առաջարկում ենք խնձորի, տանձի և արևի նկարներ՝ առանց գունավորման:)

🔸 Առարկաների ձևեր և գույներ

Առաջադրանք 2. Տրված պատկերներից ընտրի՛ր և նշի՛ր կարմիր եռանկյունին և կանաչ քառակուսին:

(Ընտրել կարմիր շրջան, կանաչ եռանկյունի, դեղին քառակուսի, կանաչ կիսաշրջան:)

🔸 Առարկաների հատկությունները՝ մեծ, փոքր: Երկար, կարճ, տարածական առնչություններ. աջ, ձախ, վերև, ներքև, հեռու, մոտիկ

Առաջադրանք 3. Տրված շրջանի աջ կողմում տեղադրի՛ր ամենամեծ կենդանուն, ձախում՝ ամենաերկար թելով փուչիկը, վերևում ամենափոքր կենդանուն, իսկ ներքևում՝ ամենաբարակ գիրքը (տե՛ս Մայրենի 1, էջեր 11, 14, 16):

🔸 **Նախադասություն, բառ, վանկ**

Առաջադրանք 4. Տրված գծապատկերները տեղադրի՛ր համապատասխան նկարների տակ:

Ընտրել նկարներ՝ 2-ը նկար-նախադասություններ, օրինակ՝ Տղան ջուրակ է նվագում: Ձկնորսը ձուկ է որսում: 5-ը՝ նկար-բառեր. (կարելի է ընտրել ունեցած նկարներից՝ 2 միավանկ, 2 երկվանկ, 1 եռավանկ: Ինչպես նաև տրված են նախադասությունների գծապատկերներ (2-ը) և բառերի գծապատկերներ (5-ը՝ 2 կարճ, 2 երկար, 1-ը՝ ավելի երկար):

🔸 **«Առանձնացրո՛ւ խմբերը»**

Առաջադրանք 5. Ասա՛ մրգերի անուններ: Նկարի՛ր քո ամենասիրած միրգը:

Առաջադրանք 6. Ընտանի կենդանիների նկարները տեղադրի՛ր մեծ տնակում: Վայրի կենդանիների նկարները տեղադրի՛ր փոքր տնակում (տե՛ս Մայրենի 1, հավելվածներ 14, 20): *Ընտրել նկարներ՝ կովի, այծի, արջի, փղի, ոզնու, գայլի, աղվեսի, վագրի, ոչխարի, ձիու, էջի:*

Ունենալ գրպանիկներով 2 տնակ՝ մեծ և փոքր:

🔸 **Հնչյունային լսողությունը զարգացնող առաջադրանքներ**

Խաղ-առաջադրանք 7. «Ասա՛՛ ո՛ւմ ձայնն ես լսում»:

Նպատակը՝ լսողական ընկալման զարգացում:

Ընթացքը: Երեխան կանգնում է գրատախտակի մոտ՝ մեջքով դեպի դասարանը: Աշակերտները խմբով որևէ բանաստեղծություն/հանելուկ, շուտասելուկ են արտասանում: Վերջին տողը (ուսուցչի ցուցումով) արտասանում է աշակերտներից մեկը: Դասարանին մեջքով կանգնածը պետք է ձայնից ճանաչի ընկերոջը:

🔸 **Վերլուծահամադրական գործընթացները զարգացնող առաջադրանքներ**

Առաջադրանք 8. Պատկերված տնակում տեղադրի՛ր այն կենդանիների նկարները, որոնց մեջ լսվում է *կ* հնչյունը:

Ընդրե՛լ կապու՛կի, շան, վագրի, արջի, նապաստակի, գայլի, աղվեսի նկարներ:

Ունենա՛լ տնակի նկար՝ գրպանիկով:

🔸 **Ձայնավոր և բաղաձայն հնչյուններ**

Առաջադրանք 9. Ասա՛ թռչունների անվանումներ, որոնք սկսվում են ձայնավոր հնչյունով:

Առաջադրանք 10. Ասա՛ մրգերի անվանումներ, որոնք սկսվում են բաղաձայն հնչյունով: Նկարի՛ր դրանցից մեկը:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ ԱՌԱՐԿԱՅԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

Մաթեմատիկայի գիրք-տետրի նախաթվային շրջանը հատկացված է առարկաների հատկությունների ուսումնասիրմանը, նախնական հասկացությունների ձևավորմանը, որի հիմնական նպատակն է աշակերտների մեջ զարգացնել առարկաները տարբեր հատկանիշներով տարբերակելու, դասակարգելու, համապատասխանություններ կատարելու կարողությունները: Առանձին թեմաներով ուսումնասիրվում են առարկաների այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են գույնը, ձևը, չափսը, նյութը: Մեծ տեղ է հատկացված առարկաների միջև առնչություններին: Այն է՝ *երկար-կարճ, մեծ-փոքր, բարձր-ցածր, լայն-նեղ, հաստ-բարակ, միանման-տարբեր, աջ-ձախ* և այլն:

Առաջադրանքներն ընտրված են ըստ թեմաների հիմնական հարցերի դիտարկման և մեկնաբանման, միևնույն ժամանակ, կապ հաստատելով նախորդ թեմաների հետ, որը հնարավորություն է տալիս անդրադարձ կատարել անցածին և, հիմք ընդունելով ունեցած գիտելիքները՝ հաղորդել նորը: Տվյալ թեմայում ընտրված առաջադրանքները բաշխված են նյութի հաղորդման հետևյալ տրամաբանությամբ.

- նախապատրաստում
- ներմուծում
- ամրապնդում:

Առաջադրանքներն ուղղված են սովորողների գործնական և մտավոր կարողությունների համաչափ ձևավորմանը: Գիրք-տետրում առկա գործնական առաջադրանքները, որոնք ունեն զարգացնող ուղղվածություն, հետաքրքրաշարժ բնույթ, թույլ են տալիս արդյունավետ ներգործելու ոչ միայն առարկայական գիտելիքների և կարողությունների ձևավորման, այլ նաև՝ հիմնական ուսումնական գործընթացի վրա: Աշխատանքային տետրերի օգտագործումը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ կազմակերպել սովորողների ինքնուրույն աշխատանքն ինչպես դասարանում, այնպես էլ դրանից դուրս: Կատարելով առաջադրանքները՝ սովորողները կարողանում են գծել, ներկել, եզրագծել, կտրել, փակցնել և այդ ամենը՝ անմիջապես իրենց տետրերում:

Մաթեմատիկայի գիրք-տետրի մեթոդական ուղեցույցը շարադրվել է հետևյալ տրամաբանական հաջորդականությամբ՝

1. նշվել է թեման,
2. նկարագրվել են այդ թեմայի ուսումնասիրման առանձնահատկությունները,
3. նշվել է առաջադրանքի համարը և ձևակերպված պահանջը,
4. մեթոդական մշակման է ենթարկվել յուրաքանչյուր առաջադրանք,
5. մեթոդական մշակումներն իրականացվել է երկխոսությունների՝ հարցի և ակնկալվող պատասխանների տեսքով,

6. որոշ առաջադրանքների բովանդակային իմաստով նույնը լինելու դեպքում՝ հղում է կատարվել նախորդ առաջադրանքի մեթոդական մշակմանը՝ ուսուցչին ազատ ստեղծագործելու հնարավորություն տալով:

Գիրք-տետրերում ընդգրկված առաջադրանքներն ունեն խաղային բնույթ, հետաքրքիր են, մատչելի: Դրանց կատարման ընթացքում երեխան գործողություններ է կատարում (տեղադրում է, դասավորում, փակցնում և այլն), խոսում է, համեմատում, հակադրում, հայտնաբերում, պատկերացնում, մտապահում ու մտաբերում է, կենտրոնացնում է ուշադրությունը, կամային ճիգեր է գործադրում և այլն: Առաջադրանքների համար ընտրված նկարները, պատկերներն ունեն վառ գունավորում, շատ մոտ են բնական առարկաներին: Նկարների շուրջ աշխատելիս պետք է հարցերի օգնությամբ երեխաներին ուղղորդել նկարի բոլոր տարրերը նկատելու, երբեմն՝ կռահելու նկարի այն հատվածը, որը պատկերված չէ: Կարևոր նշանակություն ունի խրախուսանքը, որը պետք է տեղին լինի:

Առարկայի հատկանիշ: Գույն

1. Գնդիկի գույնին համաձայն միացրու՝ համապատասխան գույնով պատկերը:

Առաջադրանքի նպատակն է ճանաչել գույները, նշել յուրաքանչյուր գույնի անվանումը, տարբերակել այլ գույներից և համապատասխանեցնել (ըստ տրված նմուշի) տվյալ գույն ունեցող առարկայի հետ՝ միևնույն ժամանակ նշելով տվյալ առարկայի

անվանումը և բարձրաձայն արտասանել, օրինակ՝ «կարմիր լուխ և այլն»: Երեխայի դժվարանալու դեպքում՝ կարելի է առաջարկել շոշափել առարկաներ, ցուցադրել (իրական կամ մուլյաժային), որից հետո փորձել երեխայի հետ գտնել պատկերային տարբերակը տեսրում: Այնուհետև նրան ուղղորդել՝ գտնելու պատկերի գույնին համապատասխան գնդիկը և մատիտով տանել միացնող գիծը:

2. Ճանաչի՛ր յուրաքանչյուր խաղալիքը: Սլաքներով համապատասխանեցրո՛ւ յուրաքանչյուրին իր զույգը և ներկի՛ր այն նույն գույնով:

Տրված առաջադրանքի պահանջն է, որ յուրաքանչյուր խաղալիքի անվանում բարձրաձայն արտաբերվի երեխայի կողմից: Քանի որ նախորդ առաջադրանքը նվիրված է գույների ճանաչմանը, փորձել ըստ գույնի առանձնացնել առաջին պատկերը, անվանել այն: Երեխայի կողմից դժվարությունների հանդիպելիս, օրինակ, եթե դանդաղում է խաղալիքը տեսրում հարթ պատկերային տեսքով ճանաչել ու անվանել, ապա նախապես խաղալիքները ցույց տալ նրան, թող շոշափի, փորձի, ըստ գույնի նմանության, տեսրում գտնի համապատասխան տարբերակը: Այնուհետև գունավոր պատկերը համապատասխանեցնի անգույնի հետ և գունավորի:

3. Անվանի՛ր քեզ ծանոթ յուրաքանչյուր առարկա: Ի՞նչ գույնի են դրանք: Նկարագրի՛ր՝ ինչի՞ համար է նրանցից յուրաքանչյուրն անհրաժեշտ:

Այս առաջադրանքն իրականացնելիս նպատակ ենք դրել լուծելու մի քանի խնդիր: Այն է՝ ճանաչել և անվանել իրեն շրջապատող պիտույքները՝ նշելով գույնը և նկարագրելով դրանցով կատարվող գործողությունը: Օրինակ՝ գրիչը կարմիր գույն ունի, այն անհրաժեշտ է գրելու, նկարելու, գծելու համար և այլն: Եթե երեխան չի կարողանում ճանաչել նկարը, ապա ցուցադրել տվյալ առարկան, որպեսզի շրջափի, զգա, որից հետո անդրադառնալ նկարին: Առաջադրանքը նախատեսվում է կատարել բանավոր հարցադրումների միջոցով՝ շրջապատում նման առարկաներ առանձնացնելով: Խոսքի խանգարում ունեցող երեխաների հետ կարելի է առաջադրանքն անցկացնել նաև մնջախաղի ձևով՝ խնդրելով երեխաներին շարժումներով և դիմախաղով ցույց տալ, թե ինչ կարող են անել տվյալ առարկայով: Նման ձևով կարող են ներկայացնել նաև դասարանի մյուս երեխաները, ինչից առաջադրանքի կատարման ընթացքն առավել հետաքրքիր կդառնա և խոսքի խանգարում ունեցող երեխան չի առանձնանա:

4, 5. Ի՞նչ մրգեր են նկարված: Տու՛ր նրանց անվանումները:

Ներկի՛ր դրանք քո նախընտրած գույնով: Հավելվածից գտի՛ր զույգը և տեղադրի՛ր համապատասխան վանդակում (տե՛ս հավելված 1):

Այս առաջադրանքները նախատեսված են ճանաչելու, անվանելու մրգերի, բանջարեղենի որոշ տեսակներ, գունավորել իրենց նախընտրած գույնով: Մինչ տեսրում աշխատելը, կարելի է ցուցադրել այդ մրգերն ու բանջարեղենները իրական տեսքով: Երեխային թույլ տալ վերցնել դրանք, շոշափել: Օգնեք բարձրաձայն անվանել մրգի, բանջարեղենի տեսակը և գույնը: Օրինակ՝ դեղին կիտրոն, կանաչ խնձոր և այլն: Այնուհետև հավելվածից գտնել նույն միրգը և բանջարեղենը ու փակցնել համապատասխան զույգ մրգի (բանջարեղենի) վանդակում: Խոսքի խանգարում ունեցող երեխային առաջարկել ցույց տալ, թե որտեղ է կոնկրետ փակցնելու, որ տեսակին է նման:

6. Ստորև տրված պատկերներին տու՛ր մեկ անվանում և ներկի՛ր քո նախընտրած գույներով:

Առաջադրանքը համակարգում է «առարկայի հատկանիշն ըստ գույնի» թեմայի վերաբերյալ ստացած գիտելիքները: Պատկերում ընդգրկված առարկաներին տրվելու է մեկ անվանում, այն է՝ տրանսպորտ, փոխադրամիջոց: Սովորողն այն գունավորելու է իր նախընտրած գույնով: Մինչ դրան անցնելը՝ յուրաքանչյուր փոխադրամիջոցի նմուշօրինակը ցուցադրել, փորձել բնութագրել, թե ինչու է փոխադրամիջոց կոչվում և յուրաքանչյուրի անվանումը

հնչեցնել: Առաջարկում ենք այսպիսի բովանդակային առաջադրանք կատարել. առանձնացնել այնպիսի առարկաների խումբ, որոնց կարելի է տալ մեկ անվանում (միրգ, բանջարեղեն, կենդանիներ և այլն), բնութագրել դրանք ըստ գույնի: Խոսքի խանգարում ունեցող երեխաները կարող են նկարների խմբի համար ընտրել տվյալ խումբը բնորոշող պատկեր, օրինակ, առանձին տրված մրգերի նկարների համար ընտրել ընդհանրացված մրգերի նկար՝ առանձնացնելով այն բանջարեղենի, կենդանիների և կահույքի պատկերներից:

7. Շարունակի՛ր:

Առաջադրանքը գործնական բնույթի է: Երեխան պետք է շարունակի գործողությունն ըստ նմուշի: Այս աշխատանքը նախապատրաստում է տետրի վանդակում օբյեկտը միկրոտարածության մեջ տեղավորելու կարողության ձևավորմանը:

Առարկայի հատկանիշ: Ձև: Չափ: Շրջան:

Առհասարակ, առարկայի ձևն ընկալելը, տարբերելը դժվար է, իսկ առարկաներն ըստ այդ հատկանիշի առանձնացնելն ավելի բարդ գործընթաց է: Այդ իսկ պատճառով, վերը նշված թեմայում առաջարկված առաջադրանքները նախատեսված են ըստ առարկայի 3 հատկանիշների՝ գույնի, ձևի, չափի բնութագրման համար: Մասնավորաբար, որպես առարկայի ձև, նախատեսվում է շրջանի ճանաչումն ու առանձնացումն այլ պատկերներից:

8. Անվանի՛ր յուրաքանչյուր գույնը և, ըստ դրանց դասավորվածության հաջորդականության, ներկի՛ր շրջանները:

Առաջադրանքում գույնը, որպես ծանոթ հատկանիշ, գործածվում է առարկայի մեկ այլ հատկանիշ ներմուծելուն զուգընթաց: Այն է՝ շրջանը որպես պատկեր և որպես առարկայի ձև:

Առաջադրանքի կատարման ընթացքը կարելի է կազմակերպել հետևյալ կերպ.

- Անվանի՛ր գույները (երեխան անվանում է յուրաքանչյուր գույնը)¹⁸: Խոսքի խանգարում ունեցող երեխան կարող է ցույց տալ տվյալ գույնի քարտը:
- Ներկի՛ր առաջին շրջանը կապույտով, երկրորդը՝ կարմիրով, երրորդը՝ դեղինով, չորրորդը՝ կանաչով (գույնն ընտրում է երեխան):
- Յուրաքանչյուր գույնն անվանելիս բարձրաձայն ասա՝ նաև «շրջան» բառը:
- Կարելի է նաև աշխատանքը կազմակերպել հետևյալ կերպ. օրինակ՝ հիմա ներկում ես կապույտով, հաջորդը ի՞նչ գույնով ես ներկելու, կամ՝ ո՞ր գույնի շրջանն է լինելու հաջորդը: Ինչու՞ (Քանի որ կապույտ գույնից հետո կարմիր գույնն է, ուրեմն շրջանը կներկեն կարմիրով): Հարցերը կարելի է շարունակել՝ բարդացնելով առաջադրանքը:

¹⁸ Այսուհետ հարցազրույցի ժամանակ փակագծերում առնված խոսքը աշակերտի ակնկալվող պատասխանն է:

9. Տրված պատկերներից որո՞նք ունեն շրջանի տեսք, անվանի՛ր դրանք, ու լրացրո՛ւ աղյուսակը հետևյալ կերպ:

Առաջադրանքի կատարումն առաջարկում ենք կազմակերպել հետևյալ կերպ՝

- Ի՞նչ պատկերներ ես տեսնում (Տետր, անիվ, ժամացույց, հեռուստացույց...):
- Ասա՛ ավստեն ինչի՞ն ես նմանեցնում: Այն կլո՞ր է, թե՛ ոչ: Շրջանի տե՞սք ունի, թե՛ ոչ (Ավստեն նման է շրջանի, այն կլոր է): Եթե երեխան ունի խոսքի խանգարում՝ կարող է ոչ թե անվանել շրջան բառը, այլ տարբեր երկրաչափական պատկերներից ընտրել և ցույց տալ շրջանի պատկերը:
- Ասա՛ տետրը նմա՞ն է արդյոք շրջանի (Տետրը նման չէ շրջանի): Կարելի է թվարկել դասարանում առկա առարկաները և նշել, թե դրանցից որոնք են նման շրջանի:

Նույն կերպ կազմակերպել զրույցը յուրաքանչյուր առարկայի շուրջ, որից հետո աղյուսակը կլրացվի ըստ նմուշի: Նշանները ճանաչելով՝ բացասական ու դրական վերաբերմունքը արտահայտել բարձրաձայն և նշանները լրացնել սյունակում:

10. Միացրո՛ւ կետերը, ստացի՛ր շրջան: Ներկի՛ր կարմիր գույնով:

Գործնական բնույթի առաջադրանք է: Երեխան՝ ըստ եզրագծերի պետք է մատիտով միացումներ անի՝ միևնույն ժամանակ անվանելով պատկերը: Վանդակավոր էջի մնացած մասը նախատեսված է, որ երեխան գծի շրջան և ներկի այն: Կարելի է նաև, որ ուսուցիչն ինքը կատարի եզրագծումներ, իսկ երեխան միացնի և գունավորի: Կարելի է օգտագործել շրջանի նմուշ, որից օգտվելով երեխան կարող է եզրագծել և ստանալ շրջանը,

այնուհետև կարող ենք առաջարկել, որ գունավորի այն իր նախընտրած գույնով:

11. Միացրո՛ւ կետերը: Ի՞նչ ստացար: Ներկի՛ր կապույտ գույնով:

Երեխան եզրագծերը մատիտով միացնում է: Անհրաժեշտության դեպքում՝ ուսուցիչը կարող է օգնել երեխային միացնել եզրագծերը: Եթե շրջանի անվանման արտաբերման դժվարություն առաջանա, կարելի է առաջարկել իր ունեցած պատկերներից առանձնացնել այն մեկը, որը նման է եզրագծումից հետո ստացված պատկերին: Որից հետո առաջարկել ընտրել կապույտ գույնի մատիտը և ներկել ստացված շրջանը:

12. Օգտագործի՛ր շրջանի նմուշ: Գծի՛ր շրջան և ներկի՛ր կանաչ գույնով:

Ուսուցիչը նախօրոք կարող է տարբեր չափերի և գույների շրջանների նմուշներ առաջարկել: Իսկ երեխան ինքը կընտրի նմուշը: Ուսուցչի օգնությամբ նմուշը տեղադրել վանդակավոր էջի վրա, շրջանագծել մատիտով: Այնուհետև, ստացված պատկերը փորձել նմանեցնել նմուշի հետ: Առաջարկել գունավորել այն գույնով, որն ունի տրված նմուշը:

13. Յուրաքանչյուր շրջանակին ամրացրո՛ւ

համապատասխան գույնի շրջանը (տե՛ս հավելված 3):

Առաջադրանքը նախապես բացատրվում, մեկնաբանվում է ուսուցչի կողմից: Առաջադրանքի նպատակն է գործնական եղանակով համապատասխանեցնել շրջանակին իր գույնն ունեցող շրջանը, որը զետեղված է հավելված բաժնում: Հավելվածից կտրվում է շրջանը (աշակերտն ինքնուրույն կամ ուսուցչի օգնությամբ է կատարում), այնուհետև փակցնում շրջանակի մեջ: Ցանկալի է, որ առաջադրանքի կատարումն ուղեկցվի ուսուցչի հարցերով և աշակերտի խոսքային մեկնաբանություններով: Օրինակ՝

- Ի՞նչ գույնի շրջանակ է նկարված (Կարմիր):
- Ի՞նչ գույնի շրջան պետք է ընտրել նրա մեջ տեղավորելու համար (Կարմիր):
- Ո՞ր գույնի շրջանն ենք փակցնում (Կարմիր):

14. Ընտրի՛ր նրա համապատասխան գույնը: Պատրաստի՛ր արջուկին:

Առաջադրանքը գործնական բնույթի է, մասնիկները տեղադրված են «հավելված» բաժնում: Առաջարկում ենք աշակերտին առաջադրանքն իրականացնել՝ զուգակցելով երկխոսության հետ: Օրինակ՝

- Ի՞նչ պատկեր ես տեսնում (Արջուկ):
- Ի՞նչ գույնով կուզես նրան պատրաստել (աշակերտը նշում է կամ ցույց է տալիս ցանկալի գույնը):
- Որտեղի՞ց կուզես սկսել պատրաստելը (գլխից, մարմնից և այլն):

- Կարելի է կազմակերպել նաև այսպես. առաջարկել կտրել հավելվածից նախատեսված շրջաններից մի քանիսը, գտնել դրանց համապատասխան մասերը, փակցնել, հետո շարունակել: Դժվարությունների դեպքում ուսուցիչը կարող է նկարել արջուկը նույն մասերով և հերթականությամբ հուշել, թե ինչպես պետք է երեխան միացնի մասերը:

Մեծ-փոքր

15. Հետևելով օրինակին՝ գունավորի՛ր վանդակները. մեծ պատկերին համապատասխանող՝ կապույտ, փոքրը՝ կարմիր գույնով:

Առաջադրանքն ընդգրկում է միաժամանակ երկու հասկացություն, այն է՝ առարկայի հատկանիշ՝ գույն, և հարաբերական հասկացություն՝ մեծ-փոքր: Առաջադրանքի կատարման ընթացքը կարելի է կազմակերպել հետևյալ կերպ.

- Ի՞նչ կենդանի է պատկերված: Յուրաքանչյուր նկարին կարելի է տալ նույն ձևակերպմամբ հարցը (Կով, հավ, ձի, առյուծ):
- Կովն է մե՞ծ, թե՞ հորթուկը (Կովն ավելի մեծ է, քան հորթուկը):
- Ի՞նչ գույնով է ներկված կովին համապատասխան վանդակը (Կապույտ): Խոսքի խանգարում ունեցող երեխաները կարող են ցույց տալ համապատասխան գույնի քարտը, որից հետո ներկել վանդակը:

- Ի՞նչ գույնով է ներկված հորթուկին համապատասխանող վանդակը (Կարմիր):
- Հավն է մե՞ծ, թե՞ ճուտիկը (Հավն ավելի մեծ է, քան ճուտիկը):
- Հավին համապատասխանող վանդակը ի՞նչ գույնով ենք ներկելու, եթե հավն է մեծ (Կապույտ գույնով):
- Ճուտիկի վանդակը փոքր է, ի՞նչ գույնով այն կներկենք (Կարմիր, որովհետև ճուտիկը փոքր է հավից):

Այս կերպ կարելի է կազմակերպել առաջադրանքում ընդգրկված կենդանիներն ըստ չափերի համեմատելու աշխատանքը՝ նշելով յուրաքանչյուր կենդանու փոքր կամ մեծ լինելը:

16. Նկարի՛ր շրջանները մեծից փոքր հաջորդականությամբ:

Քանի որ առաջադրանքն անդրադառնում է մի քանի հասկացությունների, հետևաբար աշխատանքը կարելի է սկսել երկխոսությամբ.

- Ի՞նչ պատկերներ են նկարված (Շրջաններ):
- Յուրաքանչյուր շրջանն ի՞նչ գույնի է (Կարմիր, կապույտ, կանաչ, դեղին):
- Կապույտ շրջանը մե՞ծ է, թե՞ փոքր (Կապույտ շրջանը փոքր է):
- Սկզբում ո՞ր շրջանը դնենք, եթե փոքրից մեծ հաջորդականությամբ ենք դասավորելու: Եթե երեխան չկողմնորոշվի, կարող է ուսուցիչն առաջին շրջանը նկարի, որից հետո շարունակի հարցադրումը:
- Կապույտ շրջանից հետո ո՞ր գույնի շրջանը նկարենք (Դեղին): Դժվարությունների դեպքում առաջարկվում է ունենալ շոշափելի տարբերակով շրջանները, որպեսզի

երեխան վերադրման միջոցով կարողանա համեմատել՝ որն է մեծ, որը՝ փոքր: Այնուհետև, ըստ գույնի համապատասխանության և հաջորդական մեծության, նկարել դեղին շրջանը:

- Դեղին շրջանը նկարեցինք, դրանից հետո ո՞ր շրջանը նկարենք (Կարմիր): Շարունակել նույն սկզբունքով, ինչպես առաջարկել ենք դեղինի ընտրության ժամանակ:
- Վերջում ո՞ր գույնի շրջանը նկարենք (Կանաչ):
- Նորից անդրադառնալ դասավորվածությանը՝ բարձրաձայն նշելով, որ կապույտը փոքր է դեղինից, դեղինը փոքր է կարմիրից, կարմիրը փոքր է կանաչից: Նույն կերպ բարձրաձայնել՝ կանաչը մեծ է կարմիրից, կարմիրը մեծ է դեղինից, դեղինն էլ մեծ է կապույտից:

17. Կտրի՛ր և փակցրո՛ւ շրջանները փոքրից մեծ հաջորդականությամբ:

Տե՛ս առաջադրանք 16-ի ցուցումները: Այստեղ, նկարելու փոխարեն առաջարկում ենք աշակերտին հավելվածից կտրել պատկերները և սոսնձել տետրում:

18. Յուրաքանչյուր խմբում տո՛ւր մրգի անունը: Մեծը ներկի՛ր կարմիր գույնով, փոքրը՝ կանաչ գույնով:

Առաջադրանքի նպատակն է՝ համեմատել առարկաներն ըստ մեծության:

- Ի՞նչ միրգ է պատկերված (Խնձոր, տանձ, սալոր):

Հարցերով պարզել՝ արդյո՞ք երեխան կարողանում է տարբերել մրգերը և արտաբերել դրանց անվանումները: Խոսքի խանգարում ունեցող երեխային կարելի է ցուցադրել այդ մրգերի նմուշները, որից հետո, ըստ դրա, գտնել պատկերված նման մրգի մեծ և փոքր չափսերով խմբերը: Այնուհետև, ըստ հրահանգների, իրականացնել առաջադրանքի պահանջը:

- Ներկի՛ր մեծ խնձորը կարմիր գույնով:
- Ներկի՛ր փոքր սալորը կանաչ գույնով:
- Ներկի՛ր մեծ տանձը կարմիր գույնով:
- Ներկի՛ր փոքր խնձորը կանաչ գույնով:

19. Գծիկով միացրո՛ւ մեծ պատկերը համապատասխան

փոքրին՝ կազմելով զույգ:

Առաջադրանքի նպատակն է համեմատել առարկաներն ըստ մեծության և կազմել զույգեր:

Հարցերով պարզել՝ արդյո՞ք երեխան կարողանում է տարբերել առարկան՝ անվանելով այն: Եթե երեխան պատկերով չի կողմնորոշվում, ապա ցուցադրել իրական առարկան, կամ փորձել գտնել դրա նկարը տետրում: Այնուհետև մեծ առարկան (օրինակ՝ մեծ տերևը) գծով միացնել փոքրին (փոքր տերևին):

Գտի՛ր մեծ տերևը: Գտի՛ր փոքր տերևը: Միացրո՛ւ գծիկով և կազմի՛ր զույգ: Կարելի է առաջադրել այլ հարցեր՝ պարզելու պատկերի գույնը, որտեղ է աճում տերևը: Գտի՛ր փոքր գնդակը: Ո՞ր պատկերի հետ զույգ կկազմես (մեծ գնդակի):

Ցո՛ւյց տուր մեծ ծաղկամանը: Ցո՛ւյց տուր փոքր ծաղկամանը: Գծով միացրո՛ւ մեծ ծաղկամանը փոքրին:

20. Շարունակի՛ր:¹⁹

Առաջադրանքի կատարումը նախապատրաստում է գրելուն և վանդակի մեջ օբյեկտը տեղավորելու կարողության ձևավորմանը:

Միանման, ըստ չափսերի հավասար, նույնքան

21. Գտի՛ր միանման առարկաները և միացրու՛:

Առաջարկել աշակերտին անվանել առարկաները, եթե կարող է՝ բնութագրել դրանք: Այնուհետև, պատասխանելով ուսուցչի հարցերին, գտնել միանման պատկերները ու միացնել գծով: Նմանությունը որոշել ըստ գույնի և առարկայի ձևի:

- Ի՞նչ առարկաներ ես տեսնում: Թվարկի՛ր (Բաժակ, ափսե, թեյնիկ, շաքարաման):
- Բաժակն ի՞նչ գույնի է (Կարմիր):
- Կարո՞ղ ես գտնել կարմիր բաժակին նման բաժակ (Այո):
- Միացնենք գծով կարմիր բաժակները:
- Կա՞ն էլի նման առարկաներ (Ոչ):

Յուրաքանչյուր առարկա դիտարկել առանձին-առանձին և որոշել՝ միանման են, թե՛ ոչ:

22. Միացրու՛ նույն գույնի հագուստները:

Այս առաջադրանքում նմանությունը որոշվում է ըստ առարկայի հատկանիշ գույնի, որտեղ ձևը էական հատկանիշ չէ:

¹⁹ Այսուհետ՝ նման ձևակերպումով առաջադրանքները նախատեսված են գրավոր գործնական իրականացման համար, որը նախապատրաստում է գրելուն և վանդակի մեջ օբյեկտը տեղավորելու կարողության ձևավորմանը:

Առաջարկել աշակերտին անվանել առարկաները, եթե կարող է, նաև բնութագրի դրանք:

- Ի՞նչ գույնի է զգեստը (Դեղին):
- Ի՞նչ գույնի է տաբատը (Կապույտ):
- Ի՞նչ գույնի է կիսաշրջազգեստը (Կարմիր):
- Ի՞նչ գույնի է վերնաշապիկը (Կապույտ):
- Տաբատը կապույտ գույնի է: Էլ ո՞ր զգեստն է կապույտ (Վերնաշապիկը):
- Եկեք կապույտ տաբատը գծով միացնենք կապույտ վերնաշապիկին:

Առաջարկվում է նաև դիտարկել ոչ միանման (ըստ գույնի) իրերը: Եթե երեխան դժվարանում է, կարելի է պատկերներից երկուսը միացնել ուսուցչի օգնությամբ, ցույց տալ տվյալ գույնի քարտ, նշելով, որ դրանց ընդհանուր հատկանիշը գույնն էր և խնդրել երեխային շարունակել առաջադրանքի կատարումն ինքնուրույն:

23. Միացրո՛ւ հավասար չափսերով փղերին:

Այս առաջադրանքում նմանությունը որոշվում է առարկայի չափսի հատկանիշով, որտեղ ձևն ու գույնը առարկայի էական հատկանիշները չեն: Առաջադրանքի իրականացման մեթոդական ցուցումների քայլաշարը հետևյալն է՝

- Պարզենք՝ ճանաչո՞ւմ են երեխաներն այս կենդանուն, թե՛ ոչ: Առաջարկվում է նախապես ցուցադրել այդ կենդանու նմուշ խաղալիքը:
- Իր իմացած հասկացության միջոցով՝ մեծ-փոքր, նկարագրել յուրաքանչյուր փղիկին:
- Յու՛յց տուր՝ ո՞ր փղիկն է ամենափոքրը:
- Յու՛յց տուր՝ ո՞ր փղիկն է ամենամեծը:
- Յու՛յց տուր՝ ո՞ր փղիկներն են իրար հավասար:
- Այժմ միացնենք հավասար չափսերի փղիկներին:

24. Միացրո՛ւ նույն չափսի շրջանները:

Առաջադրանքն իրականացնելիս կարելի է նախապես շրջաններն ունենալ: Դրանց միջոցով որոշել, թե ո՞ր զույգերն են իրար միանալու ըստ չափի: Առանձնացնել առաջին զույգ հավասար շրջանները, գտնել այն տեսրում և մատիտով միացնել:

- Յու՛յց տուր դեղին գույնի շրջանները:
- Հավասա՞ր են արդյոք դեղին գույնի շրջանները (Այո, հավասար են):
- Միացնենք դեղին գույնի շրջանները: Յու՛յց տուր կապույտ գույնի շրջանները:

- Հավասար են արդյոք կապույտ գույնի շրջանները (Այո, հավասար են):
- Միացնենք կապույտ գույնի շրջանները:
- Նույն աշխատանքը իրականացնել կանաչ գույնի շրջանների համար:
- Յու՛րջ տուր կարմիր գույնի շրջանը:
- Ո՞ր շրջանն է ամենափոքրը (Կարմիրը):
- Նկարի՛ր կարմիր գույնի շրջանին հավասար շրջան:

25. Միմյանց միացրո՛ւ միանման, այնուհետև՝ ոչ միանման պատկերները:

Առաջադրանքի կատարումը կազմակերպել նախորդի նման՝ հիմք ընդունելով առարկայի հատկանիշները՝ գույն, ձև և չափ. միանմաններն իրար հետ, իսկ ոչ միանմանները՝ առանձին խմբով:

26. Գծի՛ր այնքան գծիկ, որքան հատապտուղ կա յուրաքանչյուր նկարում:

Առաջադրանքի նպատակն է նախապատրաստել հաշվողական կարողությունների ձևավորմանը, որը նախատեսում ենք իրականացնել փոխմիարժեք համապատասխանություն ստեղծելու միջոցով:

Յուրաքանչյուր հատապտղին համապատասխանեցնել տրված վանդակի գծիկը:

Կարելի է նախապես ցուցադրել, օրինակ՝ մեկ հաղարջ, և առաջարկել դրան համապատասխան դնել մեկ հաշվեծողիկ, հետո

ավելացնել մյուս հաղարջի հատիկը և առաջարկել դնել հաշվեճողիկ: Սրանից հետո համարժեք գործողությունը կատարել տեսրում: Այսինքն՝ պարզաբանել, թե ինչ է պատկերված, հետո առաջարկել ամեն մի հատապտղի ուղղությամբ գծիկ գծել:

27. Նայի՛ր և շարունակի՛ր լրացնել նկարները:

Առաջադրանքը կատարելու ժամանակ դժվարությունների հանդիպելիս կարելի է երեխային հնարավորություն տալ ավելի մեծ թղթի կամ ավազի վրա մարզել ձեռքի մանր մկանները, հետո աշխատել տեսրի վանդակավոր թղթի վրա:

Տարածության մեջ կողմնորոշվելու վերաբերյալ

հասկացություններ:

Տակ, վրա, մեջ

Ծրագրի համաձայն՝ տարածական պատկերացումների զարգացումը նախաթվային շրջանում իրականացվում է հետևյալ հաջորդականությամբ.

1) Օբյեկտների դիրքը տարածության մեջ, հարթության վրա: Որոշել օբյեկտի տեղն ու դիրքը. առջևում, հետևում, տակ, վրա, մեջ, աջ, ձախ, վերևում, ներքևում:

2) Կողմնորոշումը թղթի վրա. տեղաշարժվել տետրի կամ գրքի էջում՝ ըստ աջ, ձախ, տակ, վրա, մեջ, վերևում, ներքևում տարածական հասկացությունների:

28. Ներկի՛ր սեղանի վրայի կենդանու վանդակը կանաչ գույնով, կապույտով՝ սեղանի տակինը, դեղինով՝ տուփի մեջ դրվածը:

Ըստ թեմայի մեթոդական առանձնահատկության, մինչև առաջադրանքի կատարումը առաջարկվում է նախապես տարածության մեջ ցույց տալ արկղը և նրա մեջ տեղավորված շանը (կարելի է իրականացել խաղալիքների միջոցով): Հարցնել, թե որտեղ է գտնվում առարկան: Նույն հարցադրումը կատարել՝ ներմուծելու և ամրապնդելու վրա/տակ հասկացությունները, որից հետո անցնել տետրում առաջադրանքի կատարմանը:

- Նկարագրի՛ր՝ որտե՞ղ է գտնվում շնիկը (Շնիկը գտնվում է տուփի մեջ):
- Ո՞ր գույնով պետք է ներկենք համապատասխան վանդակը (Դեղին):

Նման հարցեր կարելի է առաջադրել սեղանի վրա և սեղանի տակ գտնվող պատկերների համար:

29. Նշի՛ր՝ ո՞ր պատկերն է սեղանի վրա:

Ինչպես նշել ենք տարածական պատկերացումների վերաբերյալ հասկացությունների դժվարությունների դեպքում, առաջադրանքը պետք է նախ իրականացնել պատկերները ցուցադրելով, պարզաբանումներ տալով, ապա անցնել աշխատանքային տեսրում սեղանի վրայի պատկերի նշում կատարելուն:

30. Նշի՛ր ո՞ր պատկերն է սեղանի տակ:

Ինչպես և նախորդ առաջադրանքները, այս առաջադրանքում ևս ցուցադրման միջոցով տարածական հասկացություններից փորձում ենք ներկայացնել «տակ» հասկացությունը: Առարկան տեղադրելով սեղանի տակ, երեխային հարցնում ենք՝ թե որտեղ է այն գտնվում: Խոսքի խանգարում ունեցող երեխան կարող է մատնացույց անել առարկայի գտնվելու տեղը: Այնուհետև՝ նույն առարկան տեղափոխում ենք սեղանի վրա, քանի որ այդ հասկացությանն արդեն ծանոթ է: Նման եղանակով

առարկաների տեղերը որոշելուց հետո միայն կարելի է անցնել տետրում առաջադրանքի կատարմանը:

31. Նշի՛ր՝ որ պատկերն է տուփի մեջ:

Առաջնորդվելով տարածական պատկերացումների վերաբերյալ հասկացությունների ուսումնասիրման մեթոդական առանձնահատկություններով և նախորդ առաջադրանքների վերաբերյալ մեթոդական ցուցումներով՝ իրականացնել նաև տարածության մեջ կողմնորոշվելու «մեջ» հասկացության ներկայացման մեթոդական աշխատանքը:

32. Նշի՛ր՝ որտեղ է գտնվում շնիկը:

Տարածական պատկերացումներից տակ, վրա, մեջ հասկացությունների մասին համակարգող և ամփոփող առաջադրանք է: Այստեղ նույնպես կարելի է կիրառել ցուցադրման մեթոդը, այսինքն՝ գործնական տարբերակով ցուցադրել առարկայի գտնվելու տեղը, այնուհետև՝ գտնվելու տեղին ու դիրքին համապատասխան նշում անել:

Աջ, ձախ

Տե՛ս տարածության մեջ կողմնորոշվելու

հասկացությունների մեթոդական առանձնահատկությունները:

33. Ներկի՛ր ձախ ձեռքը ցույց տվող վանդակը կապույտ գույնով, իսկ աջ ձեռքը՝ կարմիրով:

Երեխաների՝ տարածական կողմնորոշման ձևավորման գործընթացը նպատակահարմար է իրականացնել սեփական մարմնի կառուցվածքի վրա՝ այդ հասկացությունների դիտարկմամբ: Օգտակար է համակարգված կերպով սովորողներին առաջարկել հետևյալ վարժությունները:

«Ցույց տուր աջ ձեռքդ»: «Ցո՛ւյց տուր աջ ձեռքով աջ ականջդ, աջ աչքդ, աջ ոտքդ: Ցույց տուր ձախ ձեռքդ: Այս ձեռքով ցույց տուր ձախ ականջդ, ձախ աչքդ, ձախ ոտքդ»:

Աշխատանքային տեսրում պատկերված ձեռքերը համեմատելով երեխայի ձեռքերի հետ՝ ճանաչել աջն ու ձախը, այնուհետև՝ շարունակել ըստ պահանջի. «Ցույց տուր աջ ձեռքը»: Աջ ձեռքը ճիշտ ցույց տալուց հետո, առաջարկել համապատասխան վանդակը ներկել կարմիր գույնով:

Նույն աշխատանքը իրականացնել ձախ ձեռքի համար:

Խորհուրդ ենք տալիս, որ նման աշխատանքը կազմակերպել նաև մարմնի յուրաքանչյուր մասի աջ և ձախ կողմերում տեղադրվածությունը մեկնամաբնելու և պարզաբանելու համար: Այն է՝ աջ ոտք, ձախ ոտք, աջ աչք, ձախ աչք, աջ ականջ, ձախ ականջ: Կողմնորոշումը կարելի է իրականացնել աջ և ձախ ձեռքերի միջոցով:

34. Աջ կողմում գտնվող ծաղկամանը ցույց տվող վանդակը ներկի՛ր կանաչ գույնով, իսկ ձախ կողմում գտնվողը՝ դեղինով:

Հաշվի առնելով աջ-ձախ հասկացությունների ուսուցման վերը նշված մեթոդական առանձնահատկությունները և մեթոդական ցուցումները՝ կատարել առաջադրանքը: Դժվարությունների հանդիպելիս կողմնորոշումը այս անգամ ևս իրականացրեք աջ և ձախ ձեռքերի միջոցով: Կարող է ձախ ձեռքը դնել ձախ ուղղությամբ տեղադրված ծաղկամանի վրա, իսկ աջ ձեռքը՝ աջ ուղղությամբ տեղադրված ծաղկամանի վրա: Կողմնորոշվելով ուղղությունների վրա, կարելի է անցնել վանդակները համապատասխան գույնով ներկելուն:

35. Ներկի՛ր աջ և ձախ սլաքներն ըստ նմուշի:

Առավել բարդ է աջ կողմ, աջ ուղղություն, ձախ կողմ, ձախ ուղղություն հասկացությունների ընկալումը: Անհրաժեշտ ենք համարում ցույց տալ և նկարագրել, թե ինչ կա իրենց աջ և ձախ կողմերում:

- Ո՛րն է քո աջ ձեռքը:
- Ի՞նչ կա քո աջ կողմում:
- Ո՛ր սլաքն է ցույց տալիս աջ ուղղությունը (Կարմիր):
- Ո՛րն է ձեր ձախ ձեռքը:
- Ի՞նչ կա ձեր ձախ կողմում:
- Ո՛ր սլաքն է ցույց տալիս ձախ ուղղությունը (Կապույտ):
- Յու՛րյց տուր աջ ուղղությամբ նայող սլաքները:

- Ներկի՛ր կարմիր գույնով:
- Յու՛յց տուր ձախ ուղղությամբ նայող սլաքները:
- Ներկի՛ր կապույտ գույնով:

36. Աջ կողմի բուին ներկի՛ր դեղին, իսկ ձախ կողմինին՝

կարմիր գույնով:

Որոշել բուերի դասավորությունը՝ ըստ աջ և ձախ կողմերի: Այնուհետև, ըստ պահանջի, ներկել համապատասխան գույներով:

37, 38. Նշիր վանդակում ո՞ր կենդանին ո՞ր ուղղությամբ է

նայում:

Որոշել կենդանու նայելու ուղղությունը, և ուղղությունը ցույց տվող վանդակում կատարել նշում (նշումը կարող է լինել ձեր նախընտրած տարբերակով):

39. Համապատասխանեցրո՛ւ ուղղությունները:

Առաջադրանքը իրականացնել հետևյալ քայլաշարով.

1. Որոշել մեքենայի ուղղությունը:
2. Գտնել մեքենայի ուղղությունը ցույց տվող սլաքը:
3. Միացնել սլաքը մեքենային:

Օրինակ՝

- Դեղին մեքենան ո՞ր ուղղությամբ է նայում (Ձախ):
- Յու՛յց տուր ձախ նայող սլաքը:
- Միացրո՛ւ սլաքը դեղին մեքենային:

40. Տեղադրի՛ր պատկերները համապատասխան

սյունակներում:

Առաջադրանքը իրականացնել հետևյալ քայլաշարով.

1. Հավելվածում տեղադրված պատկերները կտրել:
2. Որոշել կտրած պատկերներից յուրաքանչյուրի ուղղությունը:
3. Որոշել սյունակներից յուրաքանչյուրի կողմերը՝ աջ և ձախ:
4. Բարձրաձայն ասել պատկերի ուղղությունը:
5. Պատկերը փակցնել սյունակի համապատասխան կողմում:

Մեջտեղում, միջև

41. Աղյուսակում նշի՛ր առարկաների ճիշտ դիրքերը:

Ինչպես նկատում ենք նկարից, օբյեկտների դիրքը տարածության մեջ որոշելը՝ մեջտեղում կամ միջև գտնվելը, իրականացնում ենք աշակերտի դիրքից: Այսինքն՝ նա է համարվում ելման կետը: Տղայի դիրքի որոշումը տեղի է ունենալու աջ և ձախ հասկացությունների միջոցով: Քանի որ երեխաների համար հայելային տարբերակով դիրքի որոշելը դժվար է, առաջարկում ենք տղային դիտարկել հենց աշակերտի նկատմամբ դիրքից: Կարելի է կիրառել այսպիսի հնար. երեխային դիրքավորել և փորձել պարզել մնացած օբյեկտների դասավորվածությունը իրենից դեպի աջ և

ծախ: Հետևաբար երկխոսության հարցաշարը կունենա հետևյալ տեսքը.

- Ո՞ր ձեռքով ես բռնել մեքենան (Աջ):
- Ո՞ր կողմում է գտնվում գնդակը (Ձախ):
- Կարո՞ղ ես ասել, թե մեքենայի և գնդակի ո՞ր կողմում ես գտնվում (Ես գտնվում եմ գնդակի և մեքենայի միջև):
 - Աշակերտի միջոցով ըմբռնելով *միջև* հասկացության իմաստը, փորձում ենք համապատասխան տեղերում նշումներ կատարելով լրացնել աղյուսակը:
- Դու գտնվում ես գնդակի և մեքենայի միջև, ուրեմն՝ նշիչը կդրվի աջ և ձախ սյուների միջև:
- Մեքենան ո՞ր կողմում է գտնվում (Աջ): Ուրեմն՝ նշիչը կդնենք ա՞ջ սյունակում, թե՞ ձախ (Մեքենայի ուղղությունը ցույց տալու համար նշիչը կդնենք աջ սյունակում):
- Գնդակը ո՞ր կողմում է գտնվում (Ձախ): Ուրեմն՝ նշիչը կդնենք ա՞ջ սյունակում, թե՞ ձախ (Գնդակի ուղղությունը ցույց տալու համար նշիչը կդնենք ձախ սյունակում):

42, 43, 44. Նշիր՝ ո՞ր միրզն է գտնվում ձախ կողմում (աջ

կողմում, մեջտեղում կամ միջև):

Առաջադրանքները դիտարկվում են առանձին-առանձին՝ հնարավորություն տալով աշակերտին նշված բոլոր հասացությունները, որոնք են՝ աջ, ձախ, մեջտեղում, միջև, առավել խորությամբ դիտարկելու և անդրադարձ կատարելու: Մինչ հարթ պատկերների հետ աշխատելը՝ առաջարկում ենք որպես դժվարության հաղթահարման ուղի, նախապես առարկաները ունենալ ձեռքի տակ: Դասավորել համապատասխան հաջորդականությամբ և առաջարկել գտնել տվյալ առարկայի տեղը, որոշել, թե որ առարկաների միջև է գտնվում այն: Քանի որ տարբեր մրգերի տարբեր դասավորվածության դեպքեր են դիտարկվում, հետևաբար 42-44 առաջադրանքների մեթոդական աշխատանքը կարելի է իրականացնել նույն եղանակով:

45. Ո՞ր պատկերներն են գտնվում շան և ճուտիկի միջև:

Կարելի է նախապես ձեռքի տակ ունենալ այն առարկաները, որոնք պատկերված են: Դասավորվածության համաձայն իրականացնել հարցազրույց՝ պարզելու շան և ճուտիկի միջև գտնվող առարկաները, արտաբերել այդ բառակապակցություններն ու ձևակերպումները: Օրինակ՝ փիղը գտնվում է շնիկից հետո: Ավտոմեքենան գտնվում է փղիկի և ճուտիկի միջև:

46. Ո՞ր պատկերն է գտնվում մեքենայից աջ:

Տե՛ս վերը բերված առաջադրանքների մեկնաբանությունները և մեթոդական ցուցումները: Առաջադրանք-ները նախատեսված են քննարկելու **աջ, ձախ, մեջտեղում, միջև** հասկացությունները՝ հարթության վրա առարկաների մեկը մյուսի նկատմամբ դասավորվածությունը դիտարկելով:

47. Պատկերները դասավորիր այնպես, որ փիղը գտնվի

ճուտիկի և մեքենայի միջև (մեջտեղում):

Քանի որ առաջադրանքի կատարումը հավելվածից օգտվելու հնարավորություն է տալիս, հետևաբար, աշխատանքը կիրականացնենք համապատասխան պատկերներն այնտեղից վերցնելով և, ըստ համապատասխան դասավորվածության, էջում առանձնացված մասում ամրացնելով:

48. Պատկերները դասավորիր այնպես, որ մեքենան գտնվի

ճուտիկի և փղի միջև (մեջտեղում):

Առաջադրանքները նախատեսված են գործնական ակտիվ գործունեություն ծավալելու համար: Երեխան ուսուցչի օգնությամբ հավելվածում գտնում է պատկերները, կտրում, այնուհետև, ըստ պահանջի, դասավորում կամ սոսնձում է թղթի էջի ազատ թողնված մասում: Առաջարկում ենք աշակերտին օգնել առարկաները մեկը մյուսի նկատմամբ հնարավոր տարբեր դասավորումներ կատարելու աշխատանքում:

Քառակուսի

Նախաթվային շրջանում սովորողները ծանոթանում են երկրաչափական հարթ պատկերներին՝ շրջան, քառակուսի, ուղղանկյուն, եռանկյուն, ինչպես նաև երկրաչափական մարմիններից՝ գունդ, խորանարդ: Այս ուղղությամբ աշխատանքի հիմնական նպատակն է երեխաներին սովորեցնել անվանել և դասակարգել երկրաչափական պատկերները: Այս փուլում դեռ չեն ուսումնասիրվում պատկերի տարրերը ու դրանց քանակը: Բավարար է, եթե երեխան ունենա երկրաչափական պատկերի ամբողջական ընկալումը, նա կարող է առանձնացնել այն մի շարք այլ պատկերներից, օրինակ՝ «Պատկերների միջից գտի՛ր քառակուսին, դի՛ր քո առջև, շրջանները ներկի՛ր կարմիր մատիտով»: Կամ՝ «Ինչպե՛ս է կոչվում այն պատկերը, որը ձախ կողմում է, անվանի՛ր այն պատկերը, որը շրջանի և քառակուսու միջև է»:

49. Անվանի՛ր յուրաքանչյուր գույնը, և, ըստ դրանց

հաջորդական դասավորվածության, ներկի՛ր

քառակուսիները:

Առաջադրանքը նախատեսված է առարկայի հատկանիշ գույնի միջոցով քառակուսի պատկերը ճանաչելու և անվանելու համար: Այդ պատճառով փորձում ենք անվանել յուրաքանչյուր գույնը և միևնույն ժամանակ պարզել՝ ո՞ր պատկերն են այդ գույնով ներկելու: Գունային նմուշները նույնպես քառակուսի պատկերներով

են ներկայացված՝ միտում ունենալով ապահովելու երեխայի՝ պատկերի ճանաչողությունը: Օրինակ այսպես.

- Ի՞նչ գույներ ես տեսնում նմուշներում: Գույները փորձենք նշել ըստ հաջորդականության (Կարմիր, կապույտ, դեղին, կանաչ):
- Ի՞նչ գույնով ենք ներկելու առաջին պատկերը: Անվանենք նրան քառակուսի (Առաջին քառակուսին ներկելու ենք կարմիրով):
- Ի՞նչ գույնով ենք ներկելու հաջորդ քառակուսին (Հաջորդ քառակուսին կներկենք կապույտով):

Աշխատանքը շարունակել նույն կերպ, մինչև կներկվեն բոլոր քառակուսիները: Ճանաչողության գործընթացը լիարժեք ապահովելու համար, կարելի է առաջադրանքը ավելի ընդլայնել՝ **մեծ, փոքր** հասկացություններին անդրադարձ կատարելով: Օրինակ՝ կարմիր քառակուսին է մեծ, թե՛ կապույտը, դեղին քառակուսին է փոքր, թե՛ կանաչը և այլն:

50. Տրված պատկերներից որո՞նք ունեն քառակուսու տեսք:

Անվանի՛ր դրանք և լրացրո՛ւ աղյուսակը հետևյալ կերպ:

Առաջադրանքի կատարման աշխատանքը կազմակերպել այսպես, օրինակ՝

- Ի՞նչ պատկերներ ես տեսնում (Շախմատ, կոճակ, ժամացույց, գորգ, թաշկինակ.....):

- Ասա՝ ափսե՛ն ինչի՞ ես նմանեցնում: Այն կլո՞ր է, թե ոչ: Շրջանի՞ տեսք ունի, թե ոչ (Ափսե՛ն նման է շրջանի, այն կլոր է):
- Ասա՝ գորգը նմա՞ն է քառակուսու (Գորգը նման է քառակուսու):

Այս կերպ կազմակերպել յուրաքանչյուր առարկայի հետ զրույցը, որից հետո կլրացվի աղյուսակը՝ ըստ նմուշի: Նշանները ճանաչելով՝ ժխտելն ու դրական վերաբերմունքը արտահայտել բարձրաձայն, և դրանք լրացնել սյունակում:

51, 52, 53. Միացրո՛ւ կետերը: Ստացի՛ր քառակուսի: Ներկի՛ր

կարմիր գույնով:

Առաջադրանքները վանդակավոր էջի վրա կատարվող գործնական բնույթ են կրում, որտեղ երեխան ինքնուրույն կարող է եզրագծել, ներկել, տարբեր գույներով ստանալ քառակուսի պատկերը: Բարդության աստիճանային սկզբունքն ապահովելով՝ առաջին առաջադրանքում եզրագծումից հետո հուշվում է, որ երեխան **ստացել է քառակուսի**, հաջորդ առաջադրանքն արդեն հարցնում է՝ ի՞նչ պատկեր **ստացար**: Վերջին առաջադրանքն առաջարկում է **գծել քառակուսի**: Որոշ երեխաների հետ աշխատանքի դեպքում յուրաքանչյուր քայլում բազմակի կրկնությունների կարիք կարող է լինել:

54. Շրջանի աջ կողմում նկարի՛ր մեծ կարմիր քառակուսի, իսկ ձախ կողմում՝ փոքր կապույտ քառակուսի:

Այս առաջադրանքում մի քանի նախնական հասկացություն միաժամանակ կիրառելով, ավելի ենք խորացնում երեխայի՝ քառակուսի պատկերի ճանաչման գործընթացը, միևնույն ժամանակ՝ ամրապնդում *գույն, աջ, ձախ, շրջան, փոքր, մեծ* հասկացությունները: Եթե երեխան դեռևս դժվարանում է, կարող ենք ցույց տալ նմուշ-օրինակներ:

55. Տրված պատկերները դասավորի՛ր համապատասխան սյունակում:

Հավելվածում տեղադրված պատկերները, որոնք նմուշի տեսքով տրված են, այն է՝ շրջան և քառակուսի, երեխան պետք է կտրի, անվանի ինչ պատկեր է, ինչ գույնի է, որոշի՝ ո՞ր սյունակում է տեղադրելու կամ փակցնելու:

56. Կառուցի՛ր բեռնատար ավտոմեքենա՝ օգտագործելով շրջան և քառակուսի պատկերները:

Այս առաջադրանքը կառուցողական բնույթի է: Երեխան պատկերներից պիտի կառուցի մեկ ամբողջական պատկեր: Առաջին հերթին փորձենք առանձնացնել այն պատկերները, որոնցով ստացվել է բեռնատար ավտոմեքենան: Օրինակ՝

- Ինչպե՞ս ենք անվանում այս մեքենան (Բեռնատար):

- Կարող ես ասել՝ ի՞նչ է տեղափոխում այս մեքենան՝ մարդկա՞նց, թե՛ բեռ (Տեղափոխում է բեռ):
- Եթե հնարավորություն ունեք, կարելի է զրույցը ծավալել երեխայից հնարավորինս շատ տեղեկատվություն ստանալու համար:
- Ի՞նչ պատկերով է կառուցվել մեքենայի դիմացի մասը, որտեղ նստում է վարորդը (Քառակուսի):
- Ի՞նչ պատկերով են կառուցվել անիվները (Շրջան):
- Ի՞նչ պատկերով է կառուցվել բեռի տեղափոխման խցիկը (Քառակուսի):

Այսպիսի պարզաբանումներից հետո, կարելի է կատարել պատկերների կտրումները հավելվածից և, նորից անդրադառնալով յուրաքանչյուր մասի արտահայտած պատկերին, ստանալ բեռնատար ավտոմեքենան:

Երկար, կարճ

Առարկաների մեծության վերաբերյալ պատկերացումների ձևավորման աշխատանքների բովանդակությունը ներկայացվում է մաթեմատիկայի առարկայական ծրագրի «առարկաների համեմատություն» բաժնում: Առարկաների մեծության մասին պատկերացումները երեխաների մոտ ձևավորվում են առարկաները, օբյեկտները ակնառու-գործնական ճանապարհով համեմատելու հիման վրա:

Երեխաներին սովորեցնում ենք սկզբում երկու առարկաների միջև համեմատում կատարել՝ ըստ զբաղեցրած ծավալի, տարածքի, ըստ մեծության՝ մեծ-փոքր, միանման, հավասար: Այնուհետև ուսուցանում ենք համեմատել առարկաներն ըստ՝ երկար-կարճ, լայն-նեղ, բարձր-ցածր, հաստ-բարակ, ծանր-թեթև հարաբերական հասկացությունների:

Երկար-կարճ, լայն-նեղ, բարձր-ցածր, հաստ-բարակ հասկացությունների յուրացումը հետագայում կօգնի երկարության չափումների և ստացված արդյունքները երկարության միավորներով արտահայտելու կարողությունների ավելի հեշտ ընկալմանն ու յուրացմանը:

Այս ժամանակահատվածում կարևոր է երեխաներին սովորեցնել առարկաների համեմատում կատարելու այնպիսի հնարներ, ինչպիսիք են վերադրումը, համադրումը, մկանային զգացողությունը (առարկայի ծանրության որոշման համար):

57. Ներկի՛ր երկար ժապավենը կապույտ գույնով, իսկ կարճը՝ կարմիրով:

Համեմատվող առարկաները նույնն են՝ ժապավեններ: Ինչպես նշել ենք սկզբում՝ տեսողական ընկալման միջոցով համեմատվում են նույն առարկաների երկարությունները: Մեթոդական աշխատանքը կկազմակերպենք հետևյալ երկխոսությամբ.

- Ի՞նչ առարկա է պատկերված (ժապավեն):

- Վերևի ժապավենը ներքևի ժապավենից ավելի՞ն է, թե՛ ոչ (վերևի ժապավենը ավելին է, քան ներքևի ժապավենը):
- Այս դեպքում կասենք, որ վերևի ժապավենը ավելի երկար է, քան ներքևի ժապավենը:
- Հիմա պահանջվում է երկար ժապավենը ներկել կապույտ գույնով: Ընտրե՛ք կապույտ մատիտը և ներկե՛ք:
- Ներքևի ժապավենը կարճ է, քան վերևի ժապավենը: Եկե՛ք այն ներկենք կարմիր գույնով:

Ներկելուց հետո կարելի է համեմատություն կատարել նաև գունային տարբերակումներով:

58. Նշիր՝ ո՞րն է երկար:

Առաջադրանքում առարկաներն արդեն համեմատվում են ըստ երկար-կարճ հասկացությունների: Տեսողական ընկալմամբ դիտարկվում է յուրաքանչյուր զույգ առարկա, անվանվում է աշակերտի կողմից և ըստ պահանջի առաջադրվում է՝ նշել երկար առարկան: Առարկաների դասավորվածությունն այնպես է, որ, գոնե, մի զույգ ծայրակետեր իրար համընկնեն, իսկ մյուս ծայրակետերը համեմատվում են: Առաջարկում ենք նաև կատարել նման վարժություններ գործնական իրականացմամբ: Վերցնել ցանկացած առարկա՝ գրիչ, մատիտ, լար և, պահպանելով համեմատման սկզբունքը, գործնականորեն որոշել ո՞ր առական է երկար, ո՞րը՝ կարճ:

59. Նշի՛ր ո՞րն է կարճ:

Տե՛ս առաջադրանք 58-ի ցուցումները: Այստեղ շեշտադրումները կատարել և՛ կարճ, և՛ երկար հասկացությունները մեկնաբանելիս: Օրինակ՝ կարմիր մատիտը կարճ է կապույտից և կապույտ մատիտը երկար է կարմիր մատիտից:

60. Նշի՛ր ամենակարճը:

Այս առաջադրանքն արդեն բարդության աստիճանով տարբերվում է նախորդ առաջադրանքներից, քանի որ համեմատումը կատարվելու է ոչ թե երկու, այլ՝ երեք օբյեկտների հետ և որոշվելու է դրանցից ամենակարճը: Յուրաքանչյուր եռյակի պատկերներն անհրաժեշտ է անվանել և համեմատել:

- Ի՞նչ պատկեր ես տեսնում (մատիտներ):
- Կարո՞ղ ես ասել որ մատիտն է ամենակարճը:

Տեսողական ընկալմամբ և համադրելով, աշակերտը նշում է տրված առարկաներից ամենակարճը:

61. Նշի՛ր ամենաերկարը:

Տե՛ս առաջադրանք 60-ի ցուցումները: Այս առաջադրանքում որոշվելու է տրված եռյակ առարկաներից ամենաերկարը:

62. Գույների հետևյալ հաջորդականությամբ նշի՛ր ամենակարճից ամենաերկար պատկերը:

Այս առաջադրանքը ևս մեկ աստիճանով բարդանում է:

Որոշելով երկար և կարճ առարկաները՝ աշակերտը ևս մեկ գործողություն պետք է կատարի՝ դասակարգի դրանք գունային տարբերակիչներով, այսինքն, ներկելով կարճից երկար հաջորդականությամբ: Աշխատանքն ավելի արդյունավետ կլինի, եթե այն նախապես իրականացվի գործնական ցուցադրման միջոցով, որից հետո առաջադրանքը կատարել՝ տեսրում այն նշելով: Նախապես ունենալ ժապավեններ: Տույց տալ ժապավենները, համեմատել վերադրմամբ, այնուհետև տեսողական ընկալմամբ պրոյեկտել տեսրում:

- Ո՞ր գույնով ենք ներկելու ամենակարճ պատկերը ցույց տվող վանդակը (Կարմիր գույնով):
- Ո՞ր գույնով ենք ներկելու երկար դետալը ցույց տվող վանդակը (Կապույտ):
- Կանաչ գույնով ո՞ր դետալը ցույց տվող վանդակը կներկենք: Ինչու՞ (Տույց տալով մեկնաբանվում է, թե որն է ամենաերկար դետալը մյուսների համեմատ):

63. Սլաքներով ժապավենները միացրու՝ ամենակարճից դեպի երկարը:

Հիմնվելով երեխայի տեսողական ընկալման և արդեն ձեռք բերած գիտելիքների վրա, փորձում ենք գտնել ամենակարճ ժապավենը, առանձնացնելով այն գույնով, և մատիտով շարժվում ենք դեպի նրա համեմատ երկար ժապավենը: Այսպես, հաջորդաբար մեկնաբանելով, միացվում են բոլոր ժապավենները մեկը մյուսին: Եթե երեխան ընկալմամբ չի կարողանում տարբերել

երկարն ու ամենակարճը, ապա թել կամ լար չափանմուշ ունենալով և վերադրման հնարի միջոցով կգտնենք ամենակարճը կամ ամենաերկարը:

64, 65. Գծի՛ր տրված հատվածից երկար (կարճ) հատված:

Առաջադրանքները գործնական բնույթի են և նախատեսված են նյութի ամրապնդման համար: Երեխան կարող է գծել տրված հատվածին հավասար հատված և երկարացնել, որպեսզի ստացվի նշվածից երկարը, իսկ կարճ հատված գծելու դեպքում՝ գծելով տրվածին հավասար հատված, կարող է ռետինով ջնջել և ստանալ տրվածից կարճը: Կարելի է առաջարկել նաեւ մկրատով թղթից կտրել երկար և կարճ մասեր:

66. Նախ համեմատի՛ր, ապա հավասարեցրո՛ւ կարմիր

վանդակների քանակը կապույտին:

Վանդակների քանակ նշելով՝ տեսողական ընկալմամբ համեմատություն կատարել, որոշել կարճը և համալրել վանդակներով մինչև հավասարվելը:

- Ո՞ր գույնի շերտն է կարճը (Կարմիր):
- Ո՞ր գույնի շերտն է երկար (Կապույտ):
- Կարմիր մատիտով ներկենք այնքան վանդակ, որ շերտը հավասարվի կապույտին (յուրաքանչյուր վանդակ ներկելով համեմատում ենք մինչև հավասարեցումը):

Եռանկյունի

67. Անվանի՛ր յուրաքանչյուր գույնը և, ըստ դրանց դասավորվածության հաջորդականության՝ ներկի՛ր եռանկյունիները:

Առաջադրանքը նախատեսված է առարկայի հատկանիշը գույնի միջոցով ճանաչելուն և անվանելուն: Այս նպատակով փորձում ենք անվանել յուրաքանչյուր գույնը և, միևնույն ժամանակ՝ պարզել՝ թե ո՞ր պատկերն են այդ գույնով ներկելու: Գունային նմուշները նույնպես եռանկյան պատկերներով են ներկայացված, ինչպես նաև եռանկյունների նմուշները տարբեր են՝ միտում ունենալով ապահովելու երեխայի՝ պատկերի ճանաչողությունը: Օրինակ.

- Ի՞նչ գույներ ես տեսնում նմուշներում: Գույները փորձենք նշել ըստ հաջորդականության (Կապույտ, կարմիր, դեղին, կանաչ):
- Ի՞նչ գույնով ենք ներկելու առաջին պատկերը: Անվանենք այն եռանկյունի (Առաջին եռանկյունին ներկելու ենք կապույտով):
- Ի՞նչ գույնով ենք ներկելու հաջորդ եռանկյունին (Հաջորդ եռանկյունին կներկենք կարմիրով):

Աշխատանքը շարունակել նույն կերպ, մինչև կներկվեն բոլոր եռանկյունները: Ճանաչողության գործընթացը լիարժեք ապահովելու համար, կարելի է առաջադրանքը ավելի ընդլայնել՝ **մեծ, փոքր** հասկացություններին անդրադարձ կատարելով: Օրինակ՝ կարմիր եռանկյունին է մե՞ծ, թե՛ կապույտը: Դեղի՞ն եռանկյունին է փոքր, թե՛ կանաչը և այլն:

68. Գտի՛ր եռանկյունները և ներկի՛ր:

Առաջադրանքի շուրջ աշխատանքը կազմակերպել նկարը վերարտադրելով հետևյալ երկխոսությունով.

- Ի՞նչ ես տեսնում պատկերում (Տղա՝ ձեռքին փուչիկ):
- Փուչիկն անհրաժեշտ է գունավորել եռանկյունի պատկերների միջոցով: Ի՞նչ գույներով ես նախընտրում ներկել դրանք (Կարմիր, կապույտ. . . .)

Յուրաքանչյուր եռանկյունի գտնելուց հետո, նախօրոք որոշել գույնը, հետո ներկել՝ միևնույն ժամանակ խուսափելով գույները կրկնելուց:

69. Նկարներում գտի՛ր եռանկյունները և ներկի՛ր:

Առաջադրանքն ուղղվծ է տեսողական ընկալմանը և ուշադրության կենտրոնացմանը: Նախ երեխան պետք է նկատի՝ ինչ պատկեր է ամբողջական պատկերը, հետո՝ ամբողջից կարողանա առանձնացնել եռանկյան պատկեր ունեցող դետալը: Կարելի է հուշող կողմնորոշող հարցեր տալ: Օրինակ՝

- Ի՞նչ պատկերներ են նկարված (Նավակ, սափոր, պայուսակ):
- Նավակի առագաստը մեզ ծանոթ ո՞ր պատկերին է նման (Եռանկյունու):
- Ո՞ր գույնով ես ուզում այն ներկել (Նշում է իր ուզած գույնը):
- Սափորի վրա զարդանախշ են արել, կարո՞ղ ես ասել ո՞ր պատկերին է նման (Եռանկյունի):

Դժվարությունների դեպքում կարելի է երեխային ցույց տալ եռանկյուն քարտ և խնդրել առարկաների պատկերների վրա ցույց

տալ եռանկյունաձև մասերը:

70. Ներկի՛ր: Ուրվագծի՛ր: Միացրու՛ և ստացի՛ր: Գծի՛ր եռանկյունի:

Առաջադրանքը բաղկացած է փուլերից, որտեղ իրականացվում են եռանկյուն պատկերի մասին պատկերացումների ձևավորման 4 աստիճանային բարդացման մակարդակները՝ ճանաչում և անվանում, եզրագծում, վերարտադրում-վերացարկում:

71. Կառուցի՛ր պատկերները:

Առաջադրանքը նախատեսում է գործնական ակտիվ գործունեություն ծավալել: Սկզբում կարելի է երեխաների հետ զրուցել, թե ինչ է պատկերված, ինչ են կառուցելու և ինչպիսի պատկերներից է ստացվել տնակը կամ եղևնին: Այնուհետև հավելվածից անհրաժեշտ է գտնել տնակի և եղևնու դետալները, կտրել և կառուցել: Նպատակահարմար է, որ աշակերտը մեկնաբանի իր կատարած յուրաքանչյուր գործողությունը: Այսպես, օրինակ, սկզբում կփակցնեն տնակի տանիքը, այն ունի եռանկյունու տեսք: Հետո նրա տակ կտեղադրեն քառակուսի պատկերը, դրա մեջ՝ պատուհանները, որոնք նույնպես քառակուսիներ են: Իհարկե, մեկնաբանություններին նախորդում են ուսուցչի կողմնորոշող հարցերը: Եթե երեխան դժվարանում է, ուսուցիչը կարող է հուշել քայլերի հաջորդականությունը:

Բարձր, ցածր:

«Բարձր-ցածր» հասկացությունը երկարության մասին պատկերացումների ձևավորման հասկացություններից է, որի առանձնահատկությունները ներկայացվել է «երկար-կարճ» թեմայի ուսումնասիրման ժամանակ: (Տե՛ս «երկար-կարճ» թեման):

72. Ներկի՛ր բարձր ծառը ցույց տվող վանդակը կանաչ, իսկ ցածրը՝ կարմիր գույնով:

Համեմատվող առարկաները նույնն են՝ ծառեր: Ինչպես նշել ենք՝ սկզբում համեմատվում են նույն առարկաների բարձրությունները՝ տեսողական ընկալման միջոցով: Մեթոդական աշխատանքը կկազմակերպենք հետևյալ երկխոսությամբ.

- Ի՞նչ է պատկերված (Ծառեր):
- Ձախ կողմում պատկերված ծառը բարձր է աջ կողմում պատկերված ծառից: Ի՞նչ գույնով ենք նրան ցույց տվող վանդակը ներկելու (Կանաչ):
- Եթե ձախ կողմի ծառը բարձր է աջ կողմինից, ինչպե՞ս բնորոշենք աջ կողմում պատկերված ծառը (Աջ կողմի ծառը ցածր է ձախ կողմի ծառից):

Եթե աշակերտը դժվարանում է խոսել, ուսուցիչը կարող է հուշել, հետո կրկնել տալ այդ միտքը:

- Ցածր ծառը ցույց տվող վանդակն ի՞նչ գույնով ենք ներկելու (Կարմիր):

73. Յուրաքանչյուր զույգից նշի՛ր բարձրը:

Յուրաքանչյուր պատկեր անվանել, հետո համեմատել՝ որոշելով, թե որն է բարձրը, և անել համապատասխան նշումը:

- Ո՛ր աստիճանն է բարձրը. ա՛ջ կողմի, թե՛ ձախ (Ձախ կողմի):
- Նշումը ո՛ր վանդակում անենք: Յույց է տալիս և դնում նշիչը:

Նման հարցադրումները շարունակել յուրաքանչյուր համեմատվող զույգ պատկերի հետ և դնել նշիչները: Դժվարությունների դեպքում ուսուցիչը կարող է կիրառել հուշող ժեստեր և ակնառու ցույց տալ բարձր-ցածր հասկացությունները մեկնաբանող օրինակներ:

74. Յուրաքանչյուր զույգից նշի՛ր ցածրը:

Տե՛ս առաջադրանք 73-ի մեկնաբանությունները:

75. Յուրաքանչյուր խմբում նշի՛ր ամենաբարձրին:

Այս առաջադրանքը բարդության աստիճանով տարբերվում է նախորդ առաջադրանքներից, քանի որ համեմատումը կատարվելու է երեք օբյեկտների հետ և որոշվելու է դրանցից ամենաբարձրը: Յուրաքանչյուր եռյակ պատկեր անհրաժեշտ է անվանել և համեմատել:

- Ի՞նչ պատկեր ես տեսնում (Ընտանիքի անդամներ են՝ մայրիկը և նրա տղաները):
- Ո՛ր տղան է բարձրահասակ. ա՛ջ կողմի, թե՛ ձախ (Աջ կողմի տղան բարձր է ձախ կողմի տղայից):

- Մայրի՛կն է բարձրահասակ, թե՛ տղաները (Մայրիկը):
- Կարելի՛ է արդոք ասել, որ մայրիկն ամենաբարձրահասակն է (Այո: Քանի որ նա բարձր է իր տղաներից):

Նույն մեկնաբանությունը կատարել մյուս եռյակների վերաբերյալ:

Նույնը կարելի է կատարել նաև իրական վիճակներում, օրինակ համեմատելով ուսուցչին և մի քանի երեխաների:

76. Գույների հետևյալ հաջորդականությամբ նշի՛ր ամենացածրից մինչև ամենաբարձր պատկերը:

Այս առաջադրանքը ևս մեկ աստիճանով բարդանում է: Որոշելով բարձր և ցածր առարկաները, երեխան ևս մեկ գործողություն պետք է կատարի՝ դասակարգի դրանք գունային տարբերակիչներով, այսինքն՝ հաջորդականությամբ ներկի ամենացածրից բարձրը: Սկզբում ուսուցչի կողմից մեկնաբանվում է առաջադրանքի պահանջը, որից հետո երկխոսությամբ կազմակերպվում է առաջադրանքի լուծումը.

- Ո՞ր գույնով ենք ներկելու ամենացածր պատկերը ցույց տվող վանդակը (Կարմիր գույնով):
- Ի՞նչ ես կարծում՝ հաջորդը ո՞ր պատկերի վանդակն է ներկվելու (Այն պատկերի, որը ամենացածրից բարձր է):
- Իսկ այդ պատկերը որտե՞ղ է գտնվում. *աջ, ձախ, թե՞ նրանց միջև:*

- (Օգտագործել նախկինում ձեռք բերած հասկացությունները, որպեսզի կապ ստեղծելով ունեցած գիտելիքի հետ, ամրապնդումն իրականացվի լիարժեք:)
- Իսկ ամենաբարձրը ո՞ր գույնով ենք ներկելու: Յույց տու՛ր նրա տեղը (Կանաչ):
- Կարո՞ղ ես նշել արդյունքում ստացված գույների հաջորդականությունը:

77. Կտրի՛ր նկարները և փակցրո՛ւ համապատասխան

սյունակներում՝ բարձրից ցածր հաջորդականությամբ:

Առաջադրանքն ինտերակտիվ բնույթ է կրում: Յուրաքանչյուր տեղադրվող պատկերները հավելվածից կտրվում և փակցվում են բնութագրող համապատասխան սյունակում: Մինչ այդ, ուսուցչի օգնությամբ մեկնաբանվում են սյունակների անվա-նումները. որո՞նք են կենդանիները, թռչունները, բույսերը և այլն:

78. Նկարի՛ր ավելի ցածր եղևնի:

Առաջադրանքը գործնական աշխատանք է: Ունենալով նմուշը՝ նախ ուրվագծերը միացնում են, հետո, համեմատելով մեկը մյուսի հետ, շարունակաբար գունավոր մատիտով եզրագծում են ավելի ցածր եղևնին:

Լայն, նեղ:

Լայն, նեղ հասկացության ձևավորման առաջին վարժությունների համար կարևոր է ընտրել առարկաներ, դիդակտիկ նյութ, որտեղ տարբերությունը սահմանվում է միայն մեկ հատկանիշով: Այս գործընթացը անհրաժեշտ է կազմակերպել, որպեսզի երեխան կարողանա էական հատկանիշը ակնառու տարբերել և սահմանազատել ոչ էական հատկանիշից: Օրինակ, լայն, նեղ հասկացության մասին պատկերացումները ձևավորելու առաջին քայլն իրականացնելու համար պետք է ընտրել երկու առարկա, որոնք տարբերվում են միայն լայնությամբ (և այս տարբերությունը պետք է լինի ակնառու), բոլոր մյուս հատկանիշներով (գույն, երկարություն, նյութ, որից պատրաստված է իրը) տարբերություններ չպետք է լինեն:

79. Ներկի՛ր լայն շերտը ցույց տվող վանդակը կապույտ, իսկ նեղը՝ կարմիր գույնով:

- Ի՞նչ գույնի են պատկերված շերտերը (Կապույտ և կարմիր):
- Կապույտ գույնով ներկված շերտը լայն է, քան կարմիրը: Արդյոք շերտերն իրար նմա՞ն են լայնությամբ (Նման չեն, մեկը լայն է, մյուսը՝ նեղ):
- Լայն շերտը ի՞նչ գույնով է ներկված (Կապույտ):
- Լայն շերտը ցույց տվող վանդակը պետք է ներկել կապույտ գույնով: Եկեք այն ներկենք:

- Նեղ շերտը ցույց տվող վանդակն ի՞նչ գույնով պիտի ներկել: Ինչու՞ (Կապույտ գույնով, քանի որ նեղ շերտը կապույտ գույնի է):

80. Ներկի՛ր ժապավենները համապատասխան գույներով՝ կատարելով մեկնաբանություն:

Առաջադրանքի նպատակն է, որ բացի գործնական աշխատանք կատարելուց, երեխան յուրաքանչյուր գործողություն կարողանա մեկնաբանել բարձրաձայն և անվանել հասկացությունը: Այսպես օրինակ՝ կապույտ գույնով ներկված ժապավենն ավելի նեղ է, քան կարմիր գույնով ներկվածը: Կարմիր գույնով ներկված ժապավենն ավելի լայն է, քան կապույտը: Այսպիսի մեկնաբանություններն օգնում են վերահսկելու կատարված գործն ու ստացված արդյունքը:

81. Յուրաքանչյուր զույգ պատկերներից նշի՛ր լայնը:

Առաջադրանքի նպատակն է համեմատել յուրաքանչյուր զույգ պատկեր և նշել լայնը: Դրա համար անհրաժեշտ է պարզել՝ արդյո՞ք երեխան յուրաքանչյուր պատկեր ճանաչում է, կարողանում է անվանել, որպեսզի առաջադրանքը ճիշտ կատարի:

- Ի՞նչ պատկեր ես տեսնում (Պատուհան):
- Ո՞ր պատուհանն է լայն: Ցույց տու՛ր լայն պատուհանը: Ցույց տու՛ր նեղ պատուհանը (մատով կամ մատիտով ցույց է տալիս և մեկնաբանում. «Այս պատուհանը ավելի լայն է, քան մյուս պատուհանը»):
- Հաջորդ պատկերն ի՞նչ է (Դուռ):
- Ո՞ր դուռն է լայն: Ցույց տու՛ր լայն դուռը: Նշի՛ր լայն դուռը:

82. Յուրաքանչյուր զույգ պատկերներից նշի՛ր նեղը:

Յուրաքանչյուր զույգ պատկերներ համեմատելով՝ նշել նեղը: Այս նպատակով անհրաժեշտ է պարզել՝ արդյո՞ք երեխան յուրաքանչյուր պատկեր ճանաչում է, կարողանում է անվանել, որպեսզի առաջադրանքը ճիշտ կատարվի: Ավելի լավ պատկերացնելու համար առաջարկում ենք ցուցադրել երկու ուղղանկյան շերտ, որոնցից մեկը լայն է, մյուսը՝ նեղ: Վերադրելով այդ շերտերը, տեսողական ընկալմամբ երեխայի համար ավելի տպավորիչ է լինում լայն և նեղ հասկացությունների մասին պատկերացումը:

- Ի՞նչ պատկեր ես տեսնում (Պատուհան):
- Ո՞ր պատուհանն է նեղ: Ցույց տու՛ր նեղ պատուհանը: Ցույց տու՛ր լայն պատուհանը (Մատով կամ մատիտով ցույց է տալիս և մեկնաբանում է. «Այս պատուհանը ավելի նեղ է, քան մյուս պատուհանը»):
- Հաջորդ պատկերն ի՞նչ է (Դուռ):
- Ո՞ր դուռն է նեղ: Ցույց տու՛ր նեղ դուռը: Նշի՛ր նեղ դուռը:
- Էլ ի՞նչ պատկեր ես տեսնում (Վարագույր):
- Ո՞ր կողմի վարագույրն է նեղ, աջ թե՛ ձախ (Աջ կողմում պատկերված վարագույրն ավելի նեղ է, քան ձախ կողմում պատկերվածը):
- Ո՞ր վանդակը նշենք, որպեսզի ցույց տանք նեղ վարագույրը (Աջ կողմի վանդակը):

83. Թղթի շերտից կտրի՛ր լայն և նեղ շերտեր: Պատրաստի՛ր օղակներ:

Առաջադրանքը գործնական բնույթի է: Անհրաժեշտ է վանդակավոր թղթի էջից կտրել լայն և նեղ շերտեր, այդ շերտիկներից պատրաստել օղակներ և ստանալ շղթա: Ապահովել մեկ լայն և մեկ նեղ շերտերի հաջորդականությամբ դասավորվածություն: Կարելի է լայն և նեղ շերտերի նմուշների միջոցով կտրել, քանի որ հաշվել դեռ չգիտեն: Սակայն չի բացառվում նաև հաշվելու տարբերակի կիրառումը:

Ուղղանկյուն

Առարկայի ձևի վերաբերյալ պատկերացումների ձևավորման աշխատանքների բովանդակությունը ներկայացված է մաթեմատիկայի ծրագրի երկրաչափության բաժնում, որի բաղկացուցիչ մասն է ուղղանկյուն պատկերի հետ ծանոթացումը: Այս ուղղությամբ աշխատանքի հիմնական նպատակն է սովորեցնել երեխաներին ճանաչել, անվանել և դասակարգել երկրաչափական պատկերները: Այն է՝ առանց նրա հատկանիշներն իմանալու, տեսողական ընկալմամբ և ճանաչողությամբ, կարողանա եռանկյունների, քառակուսիների, շրջանների բազմությունից, ըստ ուսուցչի հրահանգի, առանձնացնել ուղղանկյունը:

84. Անվանի՛ր յուրաքանչյուր գույնը և, ըստ դրանց դասավորվածության հաջորդականության, ներկի՛ր ուղղանկյունները:

Առաջադրանքում ուղղանկյուն պատկերները դասավորված են տարբեր դիրքերով: Պահանջվում է ըստ նրանց դասավորվածության հաջորդականության ներկել ուղղանկյուն պատկերները: Երկխոսությունը կունենա հետևյալ բովանդակությունը.

- Ի՞նչ գույներ ես տեսնում: Անվանի՛ր ձախից աջ հաջորդականությամբ:
- Ձախից առաջինն ի՞նչ գույն ես տեսնում (Կապույտ):
- Ուրեմն նրա տակ պատկերված ուղղանկյուն պատկերը ի՞նչ գույնով ենք ներկելու (Կապույտ):
- Հաջորդն ի՞նչ գույն ես տեսնում (Կարմիր):
- Այսինքն, հաջորդ ուղղանկյուն պատկերը ի՞նչ գույնով ես ներկելու (Կարմիր):

Այսպես քննարկել մնացած պատկերների հաջորդականությունը և գույների դասավորվածության համապատասխան գունավորումը:

85. Ներկի՛ր ուղղանկյան տեսք ունեցող պատկերները քո նախընտրած գույնով:

Մինչ ներկելուն անցնելը, կարևոր է երկխոսության միջոցով պարզել՝ արդյո՞ք երեխան կարողանում է անվանել առարկան, իր իմացած ո՞ր երկրաչափական պատկերին է նմանեցնում:

- Ի՞նչ առարկա է պատկերված (Հեռուստացույց, սմայլիկ, պանրի կտոր, գիրք, շրջանակ, գնդակ):
- Հեռուստացույցը քո իմացած ո՞ր երկրաչափական պատկերին է նման (Ուղղանկյուն):

Կարելի է նախօրոք երկրաչափական պատկերների նմուշները երեխայի աչքի առաջ դնել, որ դժվարանալիս համեմատի ու որոշի տվյալ պատկերին համապատասխան առարկան:

- Ո՞ր գույնով ես նախընտրում ներկել: Ընտրիր որևէ գույն և ներկիր:

Նույնկերպ աշխատանքը իրականացնել մյուս առարկաների հետ՝ պարզաբանումներ կատարելով:

86. Ներկի՛ր ուղղանկյունները: Միացնելով ուղղանկյունները՝ օգնիր մեղվին հասնել ծաղկին:

Եղած պատկերներից առանձնացնում ենք ուղղանկյունները, ներկում ենք տարբեր գույներով, որով էլ ցույց ենք տալիս մեղվի ճանապարհը դեպի ծաղիկ: Ուղղանկյուն պատկերներն առանձնացնելու համար կարելի է նախապես ուղղանկյան պատկերներ ցուցադրել և առաջարկել այդպիսիք գտնել: Գտնելով ամեն մի ուղղանկյուն պատկեր, առաջարկել մատիտով դրանք միացնել, միևնույն ժամանակ ցույց տալով մեղվի ճանապարհը:

87. Ներկի՛ր: Ուրվագծի՛ր: Միացրո՛ւ և ստացի՛ր: Գծի՛ր ուղղանկյուն:

Աշխատանքն իրականացվում է առաջադրանքի պահանջի հաջորդականությամբ: Սկզբում հրահանգվում է ներկել: Ներկելու ընթացքում կարելի է ճանաչողական հարցեր տալ:

- Ի՞նչ պատկեր ես տեսնում (Ուղղանկյուն):
- Ի՞նչ գույնով այն կներկես:
- Այժմ պետք է կետագծերը միացնել իրար: Միացնելուց հետո ո՞ր պատկերը ստացար:
- Անհրաժեշտ է կետերը միացնել իրար: Միացնելուց հետո ի՞նչ պատկերի ես նմանեցնում:
- Մենք ի՞նչ պատկերի հետ ենք աշխատել: Կարո՞ղ ես գծել նման պատկեր և անվանել այն:

88. Կառուցի՛ր գնացքը:

Առաջադրանքը հավելվածից համապատասխան պատկերներ առանձնացնելն ու գնացք կառուցելն է: Յուրաքանչյուր պատկերն ամրացնելուց առաջ, երեխան պետք է անվանի պատկերը և գնացքի այն մասը, որն ուզում է ստանալ: Դժվարությունների դեպքում կարելի է կիրառել նմուշ-օրինակ, որին նայելով երեխան կարող է պատրաստել գնացքը:

Հաստ, բարակ

«Հաստ-բարակ» հասկացությունը երկարության մասին պատկերացումների ձևավորման հասկացություններից է, որի առանձնահատկությունները ներկայացվել է «երկար-կարճ» թեմայի ժամանակ:

89. Ներկի՛ր հաստ շերտը ցույց տվող վանդակը կարմիր

գույնով, իսկ բարակը՝ կապույտով:

Շերտերը համեմատվում են տեսողական ընկալման միջոցով: Առաջադրանքում պատկերված գրքերը կարող են օգնել աշակերտին ավելի հեշտ կատարել առաջադրանքը: Առաջարկում ենք ցույց տալ հաստ և բարակ գրքեր: Թույլ տալ, որ երեխան վերադրամա՞ր, շոշափելի և ակնառու համեմատի գրքերի հաստությունը: Այնուհետև փորձել շարունակել աշխատանքը, որի համար առաջակում ենք հետևյալ երիկոսությունը.

- Ի՞նչ պատկերներ եք տեսնում (Ուղղանկյուններ):
- Ի՞նչ գույների են այդ ուղղանկյունները (Կարմիր և կապույտ):
- Կապույտ ուղղանկյունն ավելի բարակ է, քան կարմիրը: Ի՞նչ գույնով պետք է ներկենք բարակ շերտին համապատասխան վանդակը:
- Եթե կապույտ ուղղանկյունը ավելի բարակ է, ի՞նչ կարող եք ասել կարմիր ուղղանկյան մասին (Կարմիր ուղղանկյունը ավելի հաստ է, քան կապույտը):
- Ի՞նչ գույնով պետք է ներկենք հաստ ուղղանկյան համապատասխան վանդակը (Կարմիր):

90. Կարմիր գույնով ներկի՛ր հաստ պատկերները,

կապույտով՝ բարակ պատկերները:

Առաջադրանքում զույգ առ զույգ համեմատվում են երկու միանման պատկերներ, որոնք միմյանցից տարբերվում են մեկ հատկությամբ՝ հաստությամբ: Յուրաքանչյուր զույգից հաստ պատկերին համապատասխան վանդակը պետք է ներկել կարմիրով, իսկ բարակ պատկերի վանդակը՝ կապույտով: Առաջադրանքը կարելի է իրականացնել հետևյալ երկխոսությամբ.

- Ի՞նչ պատկերներ են պատկերված (Ծառ, հաց, գիրք):
- Ծառերից ո՞րն է ավելի հաստ (Առաջինը):
- Ի՞նչ գույնով պետք է ներկենք հաստ ծառին հապատասխան վանդակը (Կարմիր):
- Ի՞նչ կարող եք ասել երկրորդ ծառի մասին (Երկրորդ ծառն ավելի բարակ է, քան առաջինը):
- Ի՞նչ գույնով պետք է ներկենք բարակ ծառին համապատասխան վանդակը (Կապույտ):

Նույն երկխոսությունը իրականացնել մյուս պատկերների համար:

91. Տվյալ պատկերներից ընտրի՛ր հաստը:

Առաջադրանքում յուրաքանչյուր պատկերից նկարված է երկու հաստ, որոնցից մեկը հաստ է, իսկ մյուսը՝ բարակ: Աշակերտը պետք է ընտրի այդ զույգից հաստ պատկերը և համապատասխան վանդակում կատարի նշում: Առաջադրանքի մեթոդական աշխատանքը կկազմակերպենք հետևյալ երկխոսությամբ.

- Ի՞նչ պատկերներ են պատկերված (Ռետին, մատիտ, պատ):
- Ռետիններից ո՞րն է ավելի հաստ (Առաջինը):

- Ի՞նչ կարող եք ասել երկրորդ ռետինի մասին (Երկրորդ ռետինը բարակ է առաջինից):
- Ո՞ր վանդակը պետք է ընտրենք (Առաջին):

Կատարել նշումը: Նույն աշխատանքն իրականացնել մյուս պատկերների համար:

92. Տվյալ պատկերներից ընտրի՛ր բարակը:

Առաջադրանքում յուրաքանչյուր պատկերից նկարված է երկու հաստ, որոնցից մեկը հաստ է, իսկ մյուսը՝ բարակ: Աշակերտը պետք է ընտրի այդ զույգից բարակ պատկերը և համապատասխան վանդակում կատարի նշում: Առաջադրանքի մեթոդական աշխատանքը կկազմակերպենք հետևյալ երկխոսությամբ: Չի բացառվում, որ երեխան չարձագանքի: Այդ նպատակով առաջարկում ենք իրական տարբերակով ունենալ նույն առարկաները, ցուցադրել հարկ եղած դեպքում: Փորձել բնութագրել այն, արտաբերել անվանումը: Եթե խոսքի խանգարում ունեցող երեխա է, ապա կարող է ցույց տալ իր ձեռքի առարկան՝ նմանեցնելով պատկերված առարկային:

- Ի՞նչ պատկերներ են պատկերված (Մեխ, փայտ, ոսկոր):
- Մեխերից ո՞րն է ավելի հաստ (Առաջինը):
- Ի՞նչ կարող եք ասել երկրորդ մեխի մասին (Երկրորդ մեխը բարակ է առաջինից):
- Ո՞ր վանդակը պետք է ընտրենք (Երկրորդ):

Կատարել նշումը: Նույն աշխատանքն իրականացնել մյուս պատկերների համար:

93. Շարունակի՛ր և գծի՛ր ավելի հաստ շերտեր:

Առաջադրանքը գործնական բնույթի է: Երկրորդ շերտի կետագծերը միացնելուց հետո պետք է նայել օրինակներին և շարունակել գծել տրվածից ավելի հաստ շերտեր:

Չանգվածի մասին պատկերացումների ձևավորման հասկացություններ Ծանր, թեթև

Ծանր, թեթև հասկացության ձևավորման առաջին վարժությունների համար կարևոր է ընտրել առարկաներ, դիդակտիկ նյութ, որտեղ տարբերությունը սահմանվում է միայն մեկ հատկանիշով: Օրինակ, ծանր, թեթև հասկացության մասին պատկերացումները ձևավորելու առաջին քայլն իրականացնելու համար պետք է ընտրել երկու առարկա, որոնք տարբերվում են ծանրությամբ: Առաջին անգամ երեխան զանգվածի մասին պատկերացնում է մկանային զգացողությամբ՝ վերցնելով իրերն իր ձեռքը, ծանր ու թեթև անելով: Այնուհետև հնարավորություն է ունենում առարկաների ծանր ու թեթև լինելը որոշել նժարավոր կշեռքի միջոցով: Բազմաթիվ օրինակների գործնական կատարման շնորհիվ, երեխայի մոտ ձևավորվում է այն պատկերացումը, որ ծավալով մեծ առարկաները ավելի ծանր են, քան ծավալով փոքրերը, որը հնարավորություն է տալիս տեսողական ընկալմամբ ևս որոշել տվյալ առարկայի ծանր կամ թեթև լինելը:

94. Ծանր պատկերների համապատասխան վանդակը

ներկի՛ր կապույտ գույնով, իսկ թեթևներինը՝ կարմիրով:

Առաջադրանքը կատարելու համար պետք է աշակերտներին բացատրել, որ ինչքան ծանր է առարկան, այնքան նժարի այդ կողմը ավելի ցածր է, իսկ թեթև առարկայինը՝ վերև: Առաջադրանքի մեթոդական աշխատանքը կիրականացնենք հետևյալ երկխոսությամբ.

- Առաջին նկարում ո՞ր պատկերն է ավելի ծանր (Հավ):
- Ինչու՞ է հավը ավելի ծանր (Քանի որ նժարը ավելի ներքև է, հետևաբար այն ավելի ծանր է):
- Ի՞նչ կասեք ծիտիկի մասին (Քանի որ նժարը ավելի վերև է, հետևաբար այն ավելի թեթև է):
- Ի՞նչ գույնով պետք է ներկենք ծանր պատկերի համապատասխան վանդակը (Կապույտ):
- Ի՞նչ գույնով պետք է ներկենք թեթև պատկերի համապատասխան վանդակը (Կարմիր):

Վանդակները ներկել համապատասխան գույներով:

95. Կենդանիների յուրաքանչյուր զույգից ընտրել ավելի թեթևին:

Առաջադրանքը կատարվում է տեսողական ընկալման շնորհիվ: Կենդանիների զույգերից պետք է ընտրել ավելի թեթևին, և համապատասխան վանդակում կատարել նշում: Մեթոդական աշխատանքը կատարեք հետևյալ երկխոսությամբ.

- Ի՞նչ կենդանիներ են պատկերված առաջին զույգում (Խոզ, ծիտիկ):
- Ո՞ր կենդանին է ավելի թեթև (Ծիտիկ):

- Ի՞նչ կարող եք ասել խոզի մասին (խոզն ավելի ծանր է ծիտիկից):

Կատարել նշում: Նույն երկխոսությունը կատարել կենդանիների մյուս զույգերի համար:

96. Նշի՛ր ավելի ծանրը:

Առաջարկվում է բերել նժարավոր կշեռք, համապատասխան առարկաները, և գործնական ճանապարհով կատարել կշռումներ՝ համոզվելու տվյալ առարկայի ծանր կամ թեթև լինելու մեջ: Կշռումներ կատարելով, ձեռքով առարկաները մկանային զգացողությամբ ծանր ու թեթև անելով, փորձում ենք երեխային կողմնորոշել նաև ըստ նրանց չափսերի որոշելու ո՞րն է ծանր, որը՝ թեթև:

97. Կարմիրով ներկի՛ր ծանր պատկերի վանդակը, կապույտով՝ թեթևը:

Առաջադրանքը կատարվում է տեսողական ընկալման միջոցով: Նշված զույգերից նախ պետք է ընտրել, թե ո՞րն է ծանր և որը՝ թեթև: Այնուհետև վանդակները ներկել համապատասխան գույներով՝ ըստ պահանջի:

Մեթոդական աշխատանքը կատարենք հետևյալ երկխոսությամբ.

- Ի՞նչ պատկերներ են առաջին զույգում (Ինքնաթիռ, հեծանիվ):
- Ո՞ր պատկերն է ավելի ծանր (Ինքնաթիռ):
- Ի՞նչ կարող եք ասել հեծանիվի մասին (Հեծանիվն ավելի թեթև է ինքնաթիռից):

- Ի՞նչ գույնով պետք է ներկենք ծանր պատկերի վանդակը (Կարմիր):
- Ի՞նչ գույնով պետք է ներկենք թեթև պատկերի վանդակը (Կապույտ):

Ներկել վանդակները: Նույն աշխատանքն իրականացնել մյուս պատկերների համար:

98. Գույների հետևյալ հաջորդականությամբ նշի՛ր առարկաները՝ ամենաձանրից մինչև ամենաթեթևը:

Առաջադրանքը կատարելու ժամանակ պետք է ուշադրություն դարձնել տրված գույների հաջորդականությանը՝ ամենաձանրից ամենաթեթևը նշելու համար:

Մեթոդական աշխատանքը կիրականացնենք հետևյալ երկխոսությամբ:

- Առաջին եռյակում ո՞ր պատկերն է ամենաձանրը: (Լուսամփոփ):
- Ի՞նչ գույնով պետք է ներկենք ամենաձանր պատկերին համապատասխան վանդակը (Կանաչ):
- Ո՞րն է ամենաթեթև պատկերը (Մոմ):
- Ի՞նչ գույնով պետք է ներկենք ամենաթեթև պատկերին համապատասխան վանդակը (Կապույտ):
- Ի՞նչ կարող եք ասել լապտերի մասին (Լապտերը մոմից ծանր է, իսկ լուսամփոփից՝ թեթև):
- Ի՞նչ գույնով պետք է ներկենք լուսամփոփին համապատասխան վանդակը (ԿԿարմիր):

Կատարել համապատասխան նշումները, և նույն երկխոսությունն իրականացնել մյուս պատկերների համար:

99. Գործնական առաջադրանք:

Առաջադրանքը կատարելու համար կրկնել առաջադրանք 94-ը:
Հավելվածից կտրել պատկերները և տեսողական ընկալման
շնորհիվ փակցնել համապատասխան սյունակում:

ՀԱՎԵԼՎԱԾ

Ուղեցույցի «Հավելված» բաժնում, որը նախատեսված է մաթեմատիկա առարկայի նախաթվային շրջանի թեմատիկ ամփոփումների համար, ներառում է մի քանի թեմաների շուրջ մշակված առաջադրանքների ընդհանրական հավաքածու: Վերջիններս կարող են նաև օրինակներ հանդիսանալ՝ ինքնուրույն տարբերակներ մշակելու համար: Առաջին տարբերակը նախատեսված է «աջ, ձախ», «առարկայի հատկանիշ՝ գույն, ձև, չափ», «երկրաչափական պատկերներ՝ ուղղանկյուն, քառակուսի, եռանկյուն, շրջան, աստղ», «Շատ, քիչ», իսկ երկրորդ տարբերակը՝ «միանման, տարբեր», «երկրաչափական պատկերներ՝ ուղղանկյուն, քառակուսի, եռանկյուն, շրջան», «առարկայի հատկանիշ՝ գույն, ձև» թեմաների ամփոփման համար:

Տարբերակ 1

- Օ Աջ կողմում նկարի՛ր այնքան շրջան, որքան եռանկյունի է պատկերված:




- Օ Ձախ կողմում նկարի՛ր պատկերված շրջաններից ավելի շատ քառակուսիներ:



- Օ Նկարի՛ր աստղերից շատ եռանկյուններ:



- Օ Ո՛ր պատկերներն են շատ՝ քառակուսիները, թե՛ շրջանները: Համապատասխանեցրո՛ւ և շրջանակի մեջ վերցրու «ավելորդ» պատկերը:



- Օ Շարունակի՛ր շարքը՝ պահպանելով օրինաչափությունը:




Տարբերակ 2


Օ Տրված պատկերներից նշի՛ր տարբերվող պատկերը:




Օ Տրված պատկերներից նշի՛ր տարբերվող պատկերը:



Օ Տրված պատկերներից նշի՛ր տարբերվող պատկերը:



Օ Գտի՛ր միանման պատկերը աջ կողմում և նշի՛ր:



Օգտագործված գրականության ցանկ

1. Բարսեղյան Մ.Ս. «Մաթեմատիկա 1» աշխատանքային գիրք-տետր, Եր., 2021, 55 էջ
2. Գյուլամիրյան Զ. Հ., «ԶԱՆԳԱԿ» այբբենարանի և «ԵՍ ՍՈՎՈՐՈՒՄ ԵՄ ԳՐԵԼ» աշխատանքային տետրերի մեթոդական ուղեցույց, Եր., 2003, 178 էջ:
3. Թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ուսուցման մեթոդական ձեռնարկ, մայրենի (1-4-րդ դասարաններ), Աշխ. խումբ՝ Կ. Զիրուխյան, Լ. Ավագյան, Գ. Մկրտչյան և այլք, Եր., 2009, 63 էջ:
4. Հարությունյան Մ., Պողոսյան Ա., Ավագյան Ա., Գևորգյան Ե. (Խմբ.) (2020) Ներառական կրթության ռազմավարություն: Դասագիրք: Մինեապոլիս, Մինեսոթա, ԱՄՆ. Մինեսոթայի համալսարան: ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևան, Հայաստան, 19-20
5. Հովհաննիսյան Վ.Ա. և ուրիշներ. Մաթեմատիկա-1 (մեթոդական ուղեցույց) Վ.Ա. Հովհաննիսյան, Վ.Ս. Սարգսյան, Ռ.Հ. Հովսեփյան, -Եր.: «Արևիկ», 2006թ.-112 էջ:
6. Միքայելյան Ա. Վ., Թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ուղղագրական կարողությունների յուրացման նախապատրաստումը գրաճանաչության շրջանում, «Մանկավարժական միտք», 3-4, 2017, էջ 430-433:
7. Միքայելյան Ա. Վ., «Մայրենի 1» աշխատանքային գիրք-տետր, Եր., 2021, 54 էջ

8. Մկրտչյան Սոկրատ և ուրիշներ, Մաթեմատիկա 1: Առաջին մաս: Դասագիրք-տետր, Երևան, Զանգակ, 2021, 96 էջ:
9. Պետրոսյան, Ս. , (2018) Ներառական կրթությունը գործնականում, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, Հայաստան,
10. Аксенова А. К., Методика обучения русскому языку в коррекционной школе, М., <<Владос>>, 2002, 320 с.
11. Алышева Т. В. Математика. Методические рекомендации. 1–4 классы: учеб. пособие для общеобразоват. организаций. – М. : Просвещение, 2017. – 362 с.
12. Перова М.Н Методика преподавания математики в специальной (коррекционной) школе VIII вида — М.: Гуманит. изд. центр ВЛАДОС, 2001 . — 408 с.
13. Car Franzoni, A. L., & Assar, S. (2009). Student Learning Styles Adaptation Method Based on Teaching Strategies and Electronic Media. Educational Technology & Society, 12 (4), 15–29. nine, D. (1989). Designing practice activities. Journal of Learning Disabilities, 22, 603-607.
14. Meese, R.L. (1992). Adapting textbooks for children with learning disabilities in mainstream classrooms. Teaching Exceptional Children, 24(3), 49-51.
15. McIntosh, Ruth, et al. (1993). "Observations of students with learning disabilities in general education classrooms." Exceptional Children, p. 249.
16. Salvia/Ysseldyke/Bolt. (2010,2007). Assessment in Special and Inclusive Education 11Th Edition, , 2-7

17. Schumm & Vaughn. (1994). Vaughn, Schumm, Niarhos, & Daugherty,1993; Vaughn, Schumm, Niarhos, & Gordon, 236-248.
18. Schumm, Jeanne Shay, (1999), Adapting reading and math materials for the inclusive classroom:kindergarten through grade five/ Jeanne Shay Schumm, 30-32.
19. Schumm, J. S., & Strickler, K. (1990). Guidelines for adapting content area textbooks: Keeping teachers and students content. *Intervention in School and Clinic*, 27, 79-84.
20. Sharon Vaughn, Candace S. Bos, (2012), *Strategies for Teaching Students with Learning and Behavior Problems*, 24-26.
21. Wasik, B. A. (1998). Using volunteers as reading tutors: Guidelines for successful practices. *The Reading Teacher*, 562-569.
22. <https://dera.ioe.ac.uk/6059/1/RR516.pdf> Teaching strategies and approaches for pupils with special educational needs: a scoping study
23. <https://www.parentcenterhub.org/accommodations/>
24. <https://www.arlis.am/documentview.aspx?docID=152960>

Հարգելի՛ ուսուցիչ, մենք լիահույս ենք, որ հարմարեցված աշխատանքային գիրք-տետրերն իսկապես կկարողանան օգնել Ձեզ՝ դպրության լույսն ավելի մոտեցնելու այն բոլոր աշակերտներին, ովքեր, պայմանավորված որոշակի առանձնահատկություններով և ունենալով դժվարություններ, լիարժեք չեն կարողանում մասնակից դառնալ կրթական գործընթացին, քանի որ միայն կրթությունն է, որ յուրաքանչյուր երեխայի համար երաշխավորում է իմաստալից և լիարժեք ապագա: